Գ ի ι q o p ω j g: Ψίνως ધηq σ j jupk στι του q σύ τι τωδ q hiημ p' b' jum Sujh p' Sujdin Uurum (, Supelp, 2ωμθηι (Մէ q p + wq-nizwq p typt f (gni p, Mupur g, Shin, Uqpi, ηρησι μέν, Uupp tht ( (kni, fnip), h Supur Fullp, Uumith, Uupp tht ( (kni, fnip), h Supur Fullp, Uumith, Uupp tht ( (kni, fnip), h Supur fullp, Uumith, Uupp the Uppun j, Uphan, Lupp quant ni work f b' Lung, Grani, Grani, Uqpul, Shi ata, Lup quant, Uqpphy, Uuju (ni, Supani, Grani, Uqpul, Shi ata, Lup quant, Uppphy, Uuju (ni, Supur, Uring, United the), Hasself, Nink, Uupi (ni, Supur, United the), United the, Uppphy, Uuju (ni, Supur, Uring), United the of the formation of the Uter of the Supur formation of the phy, Uup (fill), Uup (for the), Uppel (for the), Uppel (for the), Uppel phy, Uup (for the), Uter of the Supur for the Uter of the formation of the fo

Վերոյիշեալ 47 գիւղօրէից 5-ն հայաբնակ են խստոն ընդ Թուրջաց, 4-ն հայ-հոռոմ՝ նմանապես խառն, 4-ն ջրդդաբնակ, և մնացեալջն Թուրջ են։ Կլսուի Թէ ջրդաբնակ 4 գիւղերեն 3-ին և Թրջաբնակներեն 5-ին բնակիչջ ամբողջովին կամ լստ մասին Շիի (աղանպաշոր մահե դական) են։ Գիւղացիջ ընդարձակ հող չունին, գրեԹէ բոլորն ալ ցորեանի մեծագոյն մասն դուրսեն կը գնեն։ Գիւղացիջ ևս՝ ջաղաջացւոց չափ՝ պանդխտուԹեան կներԹան ի Գօլիս, ուր՝ առվորաբար՝ մասվաճառուԹեամբ, ածխավաճառուԹեամբ և այլ արհեստիւ կլղբաղին։ Գիւղերու Թուրջաց մեջ ևս բաշական. հարուստ և կրթեալ անձինը կը գտնուին։

Աղինու գիւղախումըն ալ որ ինչպես ի վերև գրեցի 55 գիւղերե կլ բաղկանալ, Ակնալ կառավարուԹեան ենԹարկեալ է։ Ակնալ գիւղօրեից բաղդատմամբ Աղինու գիւղացիք բաւական հող և երկրագործուԹիւն ունին, սակայն անոնցվե ևս պանդխտուԹեան գնացողներ պակաս չեն, մանաւանդ հայերը որք Ակնալ և գաւառին Հայոց չափ ի Պօլիս, նաև Բերիա ե այլուր պանդիստուԹեան կնրԹան։

### ԳԼ. Ե.

- 35 -

Վիմակագրական, Վանօրպյք, եկեղեցիք, վարժարանք, կրխ ընկերուխիւնք, առաջնորդք եւ վարչուխիւն։ Բողոքական ազգայինք, զանազանք։

umopmy +: U. Branth qui u. Φρηβε (quing): tuppuunus Luhu ungth, Wilt 6 dwar Stranc h Sheuhu, 2604150 Թրքաբնակ գիւղի վերևն լեռան մր մէջ տեղն կառուցեալ է \*)։ Դիրըը՝ բարձր, օդն ու ջուրն՝ առողջարար։ Կաւանդուի թե ۹լատիկոս կամ Ապլակիտոս, Եւստաքիոս կամ Եւստա[Ժիոս դօ. րավարին անուամբ շինուած է յամի Տեառն 100-120։ Վարք սրբոց & հատորին \*\*) Թիւ 285-ին մեջ ևս կը գրէ. «Լսեմը թե ի կողմանա Ալնալ կալ վանը մի... թե ակնեցիք առան. Հին ջերժեռանդութեամբ պաշտեն զսուրըն Ապլակիտոս, ևայլն, Ustil ywy bybybyb of a per 8 ubibwy, ynen, whon a wybe Վանուց վերևն է ս. Երևման մատուռն։ Սորա շէնքն հին է, րալը եկեղեցեոլ շէնքն մատրան չափ հնութենան երևոյին չունի \yubu pt 50-60 տարի լառաջ Անայ վիճակայինը սենեակներ, շէնքեր շինած են։ Վերի յարկը Փիշվիշեան Թաղրն և այլ սենեակներ կային, որք 2-3 տարի առաջ քա. կուեցան։ Վանահայրն է արդի առաջնորդ Ցակոբ ծ. վարդապետ Հոփիկեանն։ Մի քանի մշակ և սպասաւոր միայն կան։ Վանահայրը կրսեր Թե վանուց մատենից մի մասն ի քաղաքիս են, որոց մեջ թե և կան ձեռագրեր բայց հին չեն։ Վանըին մեջ կան երկու ձեռագիր աւետարանը, լորոց մին Թուական չունի և վիւսն, ըստ վկայութեան վանահօր 250-300 տարուան է։ Վանքն ունի իւր առջևն 20-25 արտ (20-25 չափ ցորեան

\*) Վանտուց աջակողմն կը գտնտուի «Գոհանամ» կոչուած լեռՆ ուր կ՝ելլեն ոմանջ լուխտաւորաց։

\*\*) Անդ, 251—255 երևսին մէջ գրուած է թե Ապլակիտոս, աւստեղ, եղջելու մի և ի մէջ եղջերացն խաչն և խաչեցհալն է անսևլ, Հաւատացել և մկրտուել է։

ái.

ցանելիջ), ջիչ մը ճէծրիի տունկ, 50 — 60 ոչխար։ Ունի նաև եկեղեցական զգեստը և անօԹը, որոց մեծագոյն մասն՝ առ ի ապահովու Թիւն՝ բաղաբ բերուած է։ Ի հնումն աշխարհական աթոռակալներ, հոդարարձու Թիւն ունէր, այժմ վանահօր բնարու Թեամբ հոդարարձու մի կայ։ Վանջն ունի նաև ի Կ. Պօլիս Վալիտէ իսանի վերնայարկը Թիւ 54 ջարուկիր սենեակ մի որ այժմ՝ տարին 10 – 12 լիրա վարձը կը բերէ. Սիւմպիս լլիս խանն սենեկի դետին մը (միլջ) և Ալաճա համամ փլած խանի մը մէջ վերնայարկ սենեակ մի։ Հասոյթներն են՝ վիճակայնոց պաղիի նու էրներն, պատկի հրամանի տուրջն, ու խտաւրաց և զանազանաց նու էրներն և Հազիւ Թէ հատյթնեններ և նի գոցեն։ Ներկայ արժ. վանահօր պաշտօնավարու Թենեն ի վեր պարտը չի մնար։ Մերձակայ հայարնակ գիւղն է ևին դիւղն որ

11/2-2 dust 4p mbb. Fhuyur --- 3 dust:

<sup>\*)</sup> Թուականիս (1887) մատրան և մատաղատան որմունք չի-Նուած, ըարձրացուած և վրան ամբողջապես ծածկուած հնս

գտնուի ջուր մի որ «Լուս աղբիւր» կր կոչուի։ Վանըն չունի ոչ կալուած, ոչ անօթ և ոչ պահապան. դուռը բաց է միշտ և Արակացիներեն ունանք կաւլեն։ Երբեմն Տիւրիկեեն և Արաբկերէն ալ ուխտաւորը կուգան, բայց Ակնայ վիճակայինըն են որ չաճախ և բաղմութեամբ կը դիմեն այսր։ Նուսնոտներ երբ մատրան վերև 5-10 վայրկեան մնացած՝ առուակը կ'անցնին և Նարեկացեղ հողը կը մտնեն, նոցա հիշանդութ իշնն երևան կ՝ելնէ, ոմանցն ալ մատրան մէջ մտածնուն պէս կրսկսի և կը տարածին գետնին վրալ։ Լուսնոտ և ախտաժետներեն շա. տեր հաւատքով բժշկուած հն։ Ուլստաւորը սովորաբար ս. Լուսաւորչայ գիւտ նշխարաց տօնին, Վարդավառին և ս. Աստուածածնալ աշներուն կնրնժան։ Բաղումը հեծևալ և ոմանը հետիոտնո Հրաշերով կամ առանց հրաշերի հրբեմն վեկ երկու քահանայալ կ՝երԹան, կը պատարագեն և մատաղները կ'օրհնեն։ Կ'րսեն Թէ խորանին ներքև շէնք մը կալ, հոն է սրբոյն մասունքը։ Ուխտաւորաց նուէրներն՝ քանի մը տարի՝ Նարվերի Հույոց վարժարանին յատկացեալ էին։ Ի բաղաքիս կայ այժմ հոդարարձութժիւն մի որ համարատու է վարչութեան։ Մերձակալ հայաբնակ գիւղն է Նարվեր գիւղն, իրը 2 ժամ։

Ո-լապագծացո-լեր-»։ Ամենքն մեծ ուլատատեղին է ս. Երուսաղէմ։ Ուլատաւորը աշունն ճանրայ կելներն և Մալա-Թիա, ԱնԹապ, Բերիա, Դամասկոս և անտի Երուսաղէմ կեր-Թային 40-50 օրուան մէջ։ Չմեռն անդ անցունելով Չատկեն յետոյ կը վերադառնային։ Ասոնը կրսուեին և կրսուին Հաճի կամ Մահտեսի (մագտեսի)։ Ոմանը ալ՝ մասնաւորապես այրերը՝ Մշոյ ս. Կարապետ կերթային Խարբերդու, Բալուայ և Հապաղջուրի ճանրով։ Կիները՝ Հերովդիադային կին մ՝ ըլլալուն պատճառաւ՝ ս. Կարապետ չեն երթար։ Անկեց յետոյ են ս. Փրկիչ, Արակայ և ջաղաքիս մօտակայ ուխամադիրնն։

hund be upp and with

Աստուածածնայ եկեղեցին որ Թուականես իրը 40 տարի յւ ռաջ ի հիմանե վերստին կառուցաւ քարուկիր և սիւնաւոլ Երկայնութերնն որվերուլ  $40^{1/2}$ վաճառ. կանգ. ( $\pm 27$  մեթ լայնութիւնը՝ 251/2 և բարձրութիւնն իբր 15 կանգ.։ Հաւս . Նօրէն 5—6 հաղար ոսկի ծախք հղած է։ Հարտարապետ էր Բաբևրդցի Տայազգի Երանոս վարպետն։ Ցետոյ սեբաստաց հայ նկարիչ մ՝ալ պատերուն և Հեղուններուն վրայ պատկեր Ներ և ծաղիկներ նկարեց։ Վարի Թաղն է ս. Գէորգ **եկեղ**ե ցին նոր շէնքն 1874-ին սկսեալ և 76-ին լրացած է. թաղ ղատարար աւելի ճարտարարուեստ և գմրէթաւոր. երկայն. 3 կանգ. լայն., (մեջտեղը) 16 մեթ. դարձր. նոյնպես 16 մեթ. Գմբիթին տրամագիծն է իրը 12 մեթթր. ծախը իրը 6 հա զար ոսկի։ Ճարտարապետն էր Բալուալ Սաղամ գիւղէն Ցով հաննես էֆ. Տօնիկեան։ Ժողովուրդը երկու եկեղեցեաց շինու Թեան ժամանակն ալ աւաղ, ըար, ևայլն կրելով աշխատան է, որ 2-3 հաղարական լիրալ և Թերևս աւելի կարժէ Ս. Գէորգ եկեղեցւոլ գմբեթն առ այժմ տախտակապատ է ժողովուրդը մտադիր է որ երբ կարողութերւն ունենայ լ կառավարութնեն հրաման շնորհուի, կապարեալ տախտակո պիտի պատէ։ Ս. Աստուածածնալ եկեղեցւոլ մեջ երեք և ա Գ. եկեղեցւոլ մեջ երկու ըահանալը կան։

Ցիշեմը աստ և գերեզմանատներն որ ս. Աստուածածնա հկեղեցւու վերի կողմերէն սկսելով մինչ լերան ստորոտը և ի հարաւ տարածեալ է։ Շուրջը որմն չունի։ Ամեն ընտանեաց համար փոքր միջնորմներով բաժնուած զատ զատ Թաղեր կան։

**Δ**υσπτωύγε των πείνουυστημετ. 1 «Ψυνώνταε βρετ» (υπό Ψ. Ψ. Ψ. Δ. κατυνώνταε βουστά δαερτ» ση είτ στη βρετ τη βαράτα της «υ. θωίσε» βουσσήμιβ βερία, μερώτου συστραστά δεδ άξια στης 3. «υ. Φωιωιαυν, βαρβ βόματα, βαράτα στη δαστά δης ξ, πρεπόδο σωσδητά ματαβατά ματα ματά της ματαμάτας της ματιματημότης ματαμάτας τ

Սարգիս». Վանը գիւղի Հայ-հոռմոց եկեղեցւոյ կից մտտուռ մ է. տարին մի անգամ պատարագ կը մատուցուի։ 6. «Լուս աղբիւր». Ակնայ գիմացն Ցնծալենց պարտեղներուն վերև է։ Վարյեպրան \*): Ծերունիներէ լսած եմբ (24 70-80 տարի լառաջ ըրաղաքիս երկու Թաղին մէջ ալ կան եղեր 2-3 քահանալ որք իրենց հաշւոյն դպրոց բացած և աշակերտներէն դոյզն ինչ վարձը կրստանան եղեր։ Ուսուքն՝ ըն-Թերցանութիւն, գիր և սակաւ ինչ թուարանութիւն։ 84տոլ աշխարհականներեն ալ վարժապետներ եղած են Թարխանա Կարապետ, Չոհրապ վարժապետ, ևայլն։ Թուականես 40 տարի առաջ վարի Թաղի Ներսիսեան վարժարանին \*\*) համար, ուր կը լաճախեին և վերին Թաղէն բաղում աշակերտը, հոգաբարձութժիւն մր կազմուեցաւ ազդեցիկ անձերէ, որ դրամ հաւպքեց, վարժարանն նորոգեց, գրասեղաններ շինել տուաւ և Նոր ուսուցիչՆեր բևրաւ, բայց այս բարեկարգ վիճակ երկար չտևեց։ Ցետոլ դարձևայ Նոր հոդաբարձու Թիւն, Նոր հանգանակութիւն և այսպես շարունակեցաւ։ Հետղհետէ ուսմանց առարկայը՝ աշխարհագրութիւն, տոմարակայութիւն, թուր. et nft, & nu tut nft kayin, wet gut, Pphumituyut, u. Գրրոց և աղդ. պատմութիւն, ըերականութիւն և թուաբանու. Թիւն արդեն կային։ Վերի Թաղի Նարեկեան վարժարանն ալ՝ Ներսիսեանին պես՝ վերծ անինամ Թողուած և վերծ հոգաբարձութիւն և բարեկարգ վիճակ ունեցած է։ Գաւառիս ազգ. վարժարանաց ներկայ վիճակին վրայ տեղեկու Թիւն մ 'ունենալու համար, 1883 ին կ. Պոյսեն Ուսումնական խորհուրդեն եկած «Հարցարան»ին՝ Ակնայ ուսումն. խորհրդեն գրուած

<sup>\*</sup>) Երբենն՝ վարժարան, երբենն՝ դպրոց, երբենն ալ ուսուննարան կ՛ըսուի։

\*\*) Առւաջ ս. Գ. եկեղեցւու վրալի կողմն էր սուն վարժարանն․ 1880 ին քակուելով եկեղեցւուն առջնը չինուեցաւ աւելի ընդար Հակ. - 40 -

պատասխանեն ըաղուած մի կինեւկը որ հետևալն է։ (Գիւ դերուն վերաբերեալն իրենց տեղերը պիտի գրեւնը)։

...«Դ Ժողովրդհան նիւ Թական վիճակն հրթեմն թաշական լաւ էր, իսկ այժմ մի քանի ընդհանուր և ծանօթ պատճառներով խիստ անկեալ էւ Գալով բարոյական վիճակին, առաշել ի լաւ անդր կը միտի։

«Բ. Դպրոցը»։ Վիճակիս ազգ վարժարանը։ 9․են թՅուով որոց 5-ը հրկսես են և քնացեւալ 4-ին տեջ՝ որ մանկանց կը վերաբերին, սակաւաթՅիւբ աղջկունը կը չաճախեն։

Kµm.	mdmí b	<i>\</i> `` \``L'_24''''````````````````````````````````	տար. ծա <b>խչ</b> ։ հրկու վարժ.
ի քաղաքիու Ներսիսեան վարժ.	200	80	17,700 112.
» (վերին թաղ) Նարեկեան	180	54	10,800
» (Արեգի Թաղ) Հայկաղ․ ծաղկո	y 20	5	800
	100	139	29,800

«Գ. Uz=1/Lp=+: Uzwhhpinwg Tin-wqwqajt inwphet 4 6 L առաւելագոյնն 13։ Ընդհանրապես 6-7 տարեկան հասակի day վարժարան կր մտնեն և 12-13 տարեկան հասակի մէջ դութ կ՝ելնեն։ Ծնողաց վեծագուն մասն փոլթ չունին որ իրենց զաւակունը դարոցական շրջանն աւարտեն։ Պատուաստը դեռ ընդհանրացած չէ աստ և անփոյթ իսկ են առ այս։ Աշակերտաց սնունդը սովորական կերակուր է։ Աշակերտաց հաղուստն կես ի կես ասիական և եւրոպական են։ Այակերտաց, քիչ բացառու. Abude բոլոր տարեղչն dty ընդհանրապես 15 op արձակուրդ կը դրուի։ Դպրոցաց մեջ ուսանողը միայն Հայ են։ (84-ին Վանը դիւղէն 2-3 Հայ-հոռոմ՝ աղայը, և Կիւմիւշխանեցի պանդուխո Յոլներեն 1-2 ողայք ևս կը յաձախերն։) Սեռերրն բաժանհայեն և ծնողը չեն հաճիր որ խառն կրթութեր. մտանան»։ Պատասխանագրոյն մնացեալ մասն վանօրէից, աղ. գայնոց վիճակին, կրթ. ընկերութեանց, դաստառաց անուանց կը վերաբերի։ Գալով յայտագրին որ ցարդ գործածելի է, թովանդակութերւնն է հետևեայնո

«Ա. Ըստելարան կամ ծաղկոց.—տևողուն իւն 2 տարի։

Բ. Նախակր *Թարա*ն։ Տևողու Թիւն 6 տարի։

Ոսոմոսն կրչն, բարոյական, ազգ. լեզու, ազգ. պատմուլժիւն, հաշիս—ՅուագիտուՅիւն և հաշուակալուՅիւն, աշխարհագրուՅիւն և գեղագրուՅիւն։ ԵրգեցողուՅիւն, մարմնամարդուՅիւն։ Նաև առողջաբանուՅիւն, սկզբունք բնագիաուՅհան, սկզբունք լեզուագիտուՅեան տաճկերենի և գաղդիերենի։ Ընդհանուր աւանդելի դասը ի նախակրՅարանի՝ բարոյախստուՅիւն և բաղաքավարական պատուեր.—Ազգային երգ. իսկ եկեղեց. երգեցողուՅիւնն՝ չարմարաւորաց։ ՄարմնամարդուՅիւն՝ դբսսանաց ժամերու մեջ»։ Կը գրե նա և «Ամեն վարժարան ունի ներքին կանոնագիր և ժամանակացուց»։

uppmin phippolipers: «Uqquuppuyuu puyus yuqdau 1862 Մայիսի 1. նպատակն է՝ հրբ դրամագլուին (շարա-Auguing, unchang Lugic) 1000 հատ oud: լիրայի հաս-Նի վարժարան մի բանալ. նաև միմեանց օգնել։ 64--65 ին վարժարան մի բացած են, բայց 1-2 տարի լետոլ գոցուած է։ 73-ին ևս «Լուսաւորչեան» անուամբ վարժարան մի բացին, բայց դրամադլուին և հկամուտն որոշնալ **գ**ումարին հասած չլինելով 1—2 տարի լետոլ գոցեցին։ Ունի իւր ժողովներն ու կանոնագիրն որ վաւերացեալ է։ Այժմ ունի 500 Sum ( usph) oud. Unp antwoifin 20 Pacif. holew danig. բաժնետոմս. 30 ոսկեղ չափ պահանջ ևայլն։ «Ուսումնասիրական ընկ.» կազվեսող 1872. նպատակն էր շարաթական և այլ Նու էրներով, Թանգարանով ընԹերցարան մր բանալ։ «Արաdhut juy. 78-79 fu f 4. Anghu Uyuhghuhpt yuquhau. Նպատակն էր Անայ աղդ. վարժարանաց Նպաստել։ «ԿրԹական վրուքժիւն». լիշեալ ուսումն. ընթժերց. և Արամ. (սոյն վերջինն դադրած էր). 1882 ին վիացան և նպատակ ունեցան ընթերցարան մ՝ու աղջկանց վարժարան մի բանալ, բայց ա՛սհամաձայնութեան պատճառաւ ակնկալեալ արդիւնթը չունեցաւ։ Միացեալին դրամագլուին է իրը 200 ոսկի, մե. ծաւ մասամը պահանջ։

Un-menorment: h Stoneth wawgunga dhutaudugu u. I.ph ման վանուց վանահայր են եղեր, և կրոեն Թե Էջմիած-Նեն կուգային։ **Պօղոս եպիսկոպոսեն յետոյ (ՌՃՂԱ**—ՂԸ) **4**5 Չմիւռնացի Ցովհաննես եպիսկոպոսն մի բածի եպիսկոպոդը պաշտօն վարած են. (Միքայէլ, Ղազար, Գալուստ, Յակոբ և այլն)։ Կէս դարէ և այսր պաշտօն վարող առաջնորդաց ա. Նուանչըն և՝ վեր ի վերոչ հաշուով՝ Թուականներն հետևեալքրն են. Զվիւռնացի Ցովհաննես եպիսկոպոս. Ալնցի Գետրոս վարդապետ. Տիգրանակերտցի Ցակոր հպիսկ. (իրը 1854), 4. Anjuligh Chinquignu bighu. Uquu. (1861). Ulugh Biulan վարդապետ Հօփիկեան (68-69 էն մինչ 73). Տիգրանակերտցին Բ. անգամ (74-76), Գարեգին վարդ. (լետոլ եպիսկ.) Սրուանձտեանց՝ (78-84), բացակայութիւն՝ 3 տարիէն աւե. 16. 8. 4. Lopplum F. winguel, (85-86), guyop 4p 2mրունակել Իսկ փոխանորդաց անուանըն հն. (1860) ս. Գ. եկեղ. Տ. Մկրտիչ բահանալ, Կամարկապցի Տ Կարապետ բահ. (1878), Լիմ անապատի կիւրեղ վարդ. (1881) և ս. Աստուած. ածնալ եկեղ. Տ. Նիկողայոս ըահանալ։

Աղգային վարչո-Անան։ Կես դարե և այսր մերնծ ընդ մերնծ ժողովներ ունեցած եմը, որը սովորաբար անհատական վեճերը հաշտարար եղանակաւ կը կարգադրենն, արբունի տուրբերը կը բաշխենն և եկեղեցեաց ու վարժարանաց վերաբերեալ պատահական գործերը կը տեսնենն։ 1872ին սահմանադրունիւնը գործադրեցաւ, Գաւառական ընդ հ. ժողովը, վարչունեւնն կրօն. և բաղաք. ժողովըերն կազմուեցան, որը՝ նուազ ընդհատմամբ՝ կը շարունակեն չայսօր։ Յետոյ ընտրուեցաւ ուսումն. և տնտեսական խորհուրդներն և ս։ Կան ի բաղաբիս և ի գիւղօրես լստ օրինի կազմեալ նաղ. -- 43 --

ե խորհուրդը ունին իրենց դիւաններն ու արձանագրու. Թիւններն։ \*)

Բողոջական ազգայինը։ 1871-ին ջաղաջիս միջին կարդի ազգայիններեն 5—10 անձինը բողոջականութենան յաթեցան, յետոյ 1—2 հարուստ և ազդեցիկ անձինը և այլջ ևս աւելնալով՝ այժմ 25 տուն կը հաշուուին։ Ունին իրենց ժողովարանն և վարժարանն։ Ի սկղբան և յետոյ ևս երկար տարիներ ջարողիչն (նաև ուսուցիչն) էր Ակնեցի Մարտիրոս պատուելի Իզնատիոսեանն։ Առաջին տարիները ազգայնոց հետ փոխադարձ հակառակութիւնը և վեճեր տեղի ունեցան, բայց այժմ յարաբերութիւնը լաւ են։ Ընտանեկան սովորութիւնը նոյն են, միայն՝ հարսանեաց և այլ խնջոյջներու մեջ՝ սիրահարական երդերն, խաղն, պարելն և օդին արգելեալ են։

# **2676267**

Ծնունդը։ \*\*) Մկրտու Թեան արձանագրու Թեան հավեմատ 84-ին սուրբ Գ. եկեղեցւոլ մէջ 80 երկսեռ մանկունը մըկըրտուած են. 120 ալ ս. Աստուածածնայ եկեղեցւոլ մէջ. գումար՝ 200:

Ամուսնու Թիւնը։ Միջին Թիւն է 30 (զոյգ), մեծ մասն կոյս ընդ կուսի և մնացեալն այրի ընդ կուսի կամ այրի ընդ այրւոյ են։ Ի տղայ հասակի և մինչև իսկ յորրանի (պեշիք բեսմեյ նշանելն վաղուց վերջացած է, այժմ ամուսնացող երիտասարդաց տարիքն սովորաբար 20—25 և աղջըկանցն 15—18 է։ ԱմուսնաԹողու Թիւնն հազուադեպ է։ Առևտրոյ և արհեստից բանուկ կամ ուտելեաց աժան տարիներն ամուսնու Թիւնք աւելի կը կատարուին։ Բայց յենտոյ։

\*) Երկու եկեղեցեաց քով կալ մելմէկ առաջնորդարան ուր կը ժողովին Վարչական ժողովք և Խորհուրդը և Թաղ. խորհուրդներն. \*\*) Վարի Թաղի իբր 500 տանց 200-ն Վերի եկեղեցւու ժո+ ղովուրդ են. «Աստո։ ած ողորմած է» կ'լաեն։ Թողունը այս խնդիրն որոց մասին կ'արժէ սակայն խորհիլ։

Նոր	ածիններէն	dfiliz	10	տարեկան	26	5nqp
ուսն տարեկանել	« v	20	ע	20	2	
		¥	30	3	11	2
		X	40	×	13	¥
		2	50	),	18	a,
		¥	60	2	- 7	>
		ינ	70	>	6	3
		v	80	2	+	۲,
		•		· · ·	105	Snaps

ի սոցանե 54-ն արու և 51-ն էգ են։ Արուներէն 10 անձինը կան ի պանդիստութեան, որը 20-էն 55 տարեկան են։ Դիտելի է թե 70-էն 80-ն տարիք ունեցող 4 անձանց բոլորն այ կին են և 75-էն վեր տարիք ունին։ Մեր Թաղի վարի կողմը գտնուած Թաղէն ալ 20 տանց բնակիչըն հա. շունլով բիչ տարբերու (ծեամբ Նոյն արդիւնքն ունեցաւ։ Քաղաքիս վարի Թաղի բնակիչըն տուն գլուխ վիջին Թուով 5-ական և վերի [ծաղինն  $5^1/_2$ —6-ական հոգի են։ Վերին Թաղի աղդայինը բաղդատաբար աւելի բաջառողջ են։ 1000 տան 5000 բնակիչ հաշուհյով՝ սորա 100-ին 85-ն 50 տա. րեկանեն վար և 15.ն 50.էն վեր են։ Ցիշեալ 10 պանդուխտ-Ներու համեմատութժեամբ կարելի է 5000-ին 500 պանդութատ-Ներ հաշուել, որոնց վեծագոյն մասն ի Կ. Պօլիս և մնացեայքրն վեղ մծաակալ դաւառներն են։ Կան և ոմանը որ հեսաւոր գաւառաց և երկրաց մէջ նն։ Պօլսոլ պանդխաոց մեծա. ungh dwon dwopudwow (wpp pup) to, huy thugh wie Swo

ցավաճառութեամբ, սեղանաւորութեամբ, յանձնակատարութեամբ և այլ գործերով կը զրաղին։

# 

**ՀԱՑ**Ք Գ**ኮ**ՒՂՕՐԷԽՑ

Unger 26 (m \*)

Հայջ։ ԳաղԹականուԹիւն Վասպուրականի։ Եկեղեցի 1՝ Վարագայ ս. Նշան. վարժարան – երկսեռ՝ 1, ըստ վերոյիշեալ «պատասխան գրոյն» արու աղայջ՝ 90, և աղջկսւնջ՝ 56, դասատու՝ 3, վարժուհի՝ 1։ Տարեկան ծակզջն է 9300 դահեկան. ուսումն՝ հայ՝ և տաճկ.։ ԸնկերուԹեանց կարգին մէջ ալ «Գ. Վարագայ սանուց ընկ. Ապչեխ-Չարաղ գիւղի, կազմեալ ի Կ. Պոլիս, 1878, նշանաւոր գործունէուԹիւն մը ցոյց տուած չէ ցարդ։» Վարժարանին բարերարներէն կը ճանչցուին Ա. Մ. Յովհաննես աղա Անտոնեան որ և հնումն՝ առանց աշակերտներէ Թոշակ ստանալու՝ վարժարանին ծախզը հոգացած է, և յետոյ 10,000 դահեկան կաակեր է իբրև գրամագլուխ, որ

\*) Պաչտօնական գրութեանց մէջ հայերէն՝ Ապուչեխ և թեութքերէն Էպճաղա կ'ըսուխ, իսկ հայերը «Էպիչէխու» կ'ըսեն։ Ոմանք թեուրքաց «Էպջաղա» ըսելէն առնելով կը ստուդարանեն «Ապա-Ջուղալ։

\*

սպառելէ չետոլ գիւղացիջ 16000 դահ. հաւաջեր են ընկեթունժեամբ։ Երկրորդ. Մ. Ցարունժիւն ազա Փափազեանն որ 100,000 գրուշնոց 10 տարեկան սէրկի լսուած Օսմ. արժենժուղնժ շնորհած է, որ նոյն Շուականին 40,000 դահ. (=400 լիրա) կարժեր և տարհկան 6000 դահ. տոկոս կը բերէ եղեր. չետոյ Գօնսօլիտի վերածուած է, որոյ այժմեան արժեջըն է 100 լիրա։ Թէ այս և նել չիշեալ հաւաջուած գումարէն մնացածն եկեղեցւոց հաշուցն հետ է, յորնէ կը վճարուի վարժարանին ծախջն։ Եկեղեցին ալ ունի ի Պոլիս կալուած և աստ եկեղեցական արծանժեաչ գարդ, անօնժ ևայլն։

Չարազ Թաղը 10 վայրկնան հեռի է գիւղէն, Աինաց Արնգի Թաղի մօտ։ Բնակիչըն են 10 տուն հայ։ Չարազ Թաղէն հն կ`ըսեն Չարազնան ամիրայըն, և նախնկըն եղբարց Դ. և Մ.Չերազի որը իբրև գրագէտ շատերուն ծանօԹ են։

Գերեղ։ Շանատունը պարապատա է և նորա ծայրը կր դտնուի «Ս. Ցակոբ» ուիստատեղի մը։ Կան նաև ». Սահակ, ». Մինաս, ս. Թորոս, և Չարաղ Թաղին մօտ «Մարընտուրիկ» կամ «Մարրնսունիկ»։

Հայոց ապրուստի միջոցներն են ըստ մասին պանդիստու-Թիւն և ըստ մասին արհեստը, որը են և ազմաձի, ոստայնանկ, կօշկակար, հիւսն, որքնաշեն և այլն։ Գիւզին մեջ կայ փոքր շուկալ մի սր 1--2 փուռե և մի քանի հատ խանտութներէ բաղկացեալ է։ Պարտէզներն գիւզին երկու կոզմն ալ կան, ուր ամեն պտուզ կը գտնուի։ Բերջն է գլխաւորաբար իրը 800 լիտր (որ է 4800 օխա) ձէհրի, Թութ, ընգոյզ և այլն։ Պարտէզներուն մեջ ունին ամարանոցներ որոց «Հնծան» կրսեն։

Ապուչեխի Թուրըը ևս Նիւթապես անկեալ վիճակ մ՝ու-Նին այժմ։ Ասոնց տուներուն մեծագոյն մասն գիւղին շուրջըն, և մզկիթն ու մաս մը տուներ գիւղին մէջն են։

Արելի աղգայինեւ Ապուչեկի ազգայիններէն ի Կ. Վո\_ լիս երևելի հանդիսացած են Փիշժիշեան, Ազնաւուրեան, Անտոնեան, Հովուեան կամ Ճէզայիրլեան, և Ապուչեփի ժէջ՝ Թամուրեան, Ակոլեան, Տ. Պօդոսեան, Պէկեան, Արփիարեան և այլ ամիրայջն։ Նաև Փիրիխանեան, Ֆերուխեան ևայլն։ Արփիարեանջ՝ որ Վառենջ ալ կ'ըսուին, ներկայ դարուս ակիդըն Փիլիպպոս Ամիրայի օրով չառաջադիմած են։ Փիլիպպոս Ամիրայն արհեստաւոր մ՞հ եղեր, կ'ըսէր ծերունի մը (Գլ. Բ.). չետոյ Կապան-Մատենի սեղանաւոր եղեր, մեծ պատիւ և հարատուԹիւն շահեր է։ Ցետոյ զրպարտունլով Պոլիս կը կանչուի, կ'արդարանայ և կը վերադառնայ։ Կ'ըսեն Թէ նոյն միջոցին շնորհուեր է «Պուզտան-Պէյի» ի աստիճանն։ Երբ Մատենեն չԱպուչեն կամ գիւղեն չԱկն այցելէ, հետն չավուշներ

πιύի և առաջ εξύ [Ժմբուկ (տենպելեկ) կը զարնուի եղեր։ Կը [Ժողու 5 որդի, յորոց Արփիար Աժիրայն կը յաջորդե հօրն։ Ցետոյ նոյն պաշտօնն կը վարեն Փիլիպպոս Աժիրայի ժիւս որդիջն՝ Մ. Մանուկ և Մ. Գասպար Աժիրայջն։ 40 տարիեն ասելի է որ ընկած են. ժիայն ի Խարբերդ Մ. Գասպար Աժիրայի [Ժոռունջն կան։ Կան նաև ի Պոլիս Արփիար էֆ. Արփիարեան և եղբարջն (Ալիջսան և Տիգրան էֆ.) որջ իբրև գրագետ բաղմաց ծանօԺ են։

## ԿԱՄԱՐԿԱՊ ԿԱՄ ԿԱՄՐԿԱՊ

Գաղլեականուներ-»։ Հաւանօրեն Կամարկապցիք ևս Վասպուրականի գաղլծականութենան կը վերաբերին. յետոյ Տերսիմ-Օվաճըգի և Չարսանճագի կողվերեն ալ բաւական Հայեր եկած են։

ՎիՃակագրական։ Ակնալ հարաւային կողմն Ապուջեխի լերանց արևելեան մասին ստորոտն կառուցեալ է։ Տունը Հայոց՝ 150, Թուրքաց՝ 25—30. (Թուրք ջ մզկիք մ՝ալ ունին)։ Եկեղեցի «ս. Աստուածածին», քարուկիր և միջակ մեծուքենամբ. իբր 50 տարի առաջ վերանորոգեալ՝ գիւղին կեպրոնն է։ Քահանայ՝ 2. գիւղին մէջ կայ նաև քարուկիր մատուռ մը՝ «ս. Գեորգ», որ ի հնումն «Անապատ» ալ կը կոչուի եղեր։ Գերեզմանատունն որ գիւղին արևելեան կողմն է, բաւական յու

Վարժարանն՝ նաինեն աց «պատասխան» տեղեկագրին համեմատ՝ «Արամեան», արու աղայը՝ 78, աղջկունը 54, դասատու՝ 5, վարժուհի՝ 1, տարեկան ընդե ծակը՝ 11.000 դահ. ուսումն՝ հայ. տանկ. Թուաբանունիւն, աշխարհագրունիւն, ևայլն։ Ընկերունիւնը՝ (Ապշտնագեան, Դպրոցասիրաց և Յոյս ի պսակ) 1879-ին միացեալ. Նպատակն է ըններցանունետնը պարապիլ և վարժարան մի բանալ։ Եկեղեցին և վարժարանն ունի, կ՛րսեն, ի Կ. Պօլիս 20--25 հատ խանտւն՝ որոց մեծ մասն հկեղեցւոյն անուստնը և փոքր մասն մասնաւորաց անտուամբ արձանագրեալ են պետական արձանագրունեանց մեջ։ Ասոնց արժեջն է՝ 2-3 հազար լիրայ, և տարեկան եկամուանն չունց արժեջն է՝ 2-3 դազար լիրայ, և տարեկան եկամուանն չունի կը հոգացունը, յորմե վարժարանին ու եկեղեցւոյ ծախջերն կը հոգացունը։ Եկեղեցին ունի նաև արծանետց

Ո-իպապեղիչ։ Աւագ ևրեց Տ. Կարապետ քահանայն կը պատվե Թէ ի հնունն Կաղանդին օրը գիւղին հարաները Ժողովունլով կը հաղուին, կը շբուին, իւրաքանչիւրը ձեռքը մեկվեկ մկրատ՝ բռնած գիւղին ներքև տեօրԹ լիւլե (Չորա ծորակ) ըսուած տեղը կ՚իջնեն եղեր, ուր ջուր մը կը վաղե, և հետևեալը կ՚երգեն։

- 48 -

Անդնգային Թագաւորին. \*) Ջուր կաղընտեր հաւ

Եւ վերջին խօպքին հետ մկրատո<del>մի</del> ջուրը կարել կը Հեւացնեն եղեր։ Դբր հարիւր տարի լառաջ աւագ երէց Տէր Գրիգորնն արգիլմամբ այս սովորութիւն՝ իրրև հեթանտաական դադարած է։

Երելի անցիս։ Այս գիշղեն իրիև ազնուական՝ Տաոսեան գերդաստանն կը չիշուի, որ Պեռենը կրսուին եղեր. լստ ունանց՝ Պեռողենը։ Իրր մի դար առաջ հաճի Տատ որ է մահտեսի Տատ Ամիրայն ի Պոլիս գաղթելով, արբունի Վառօպապետութեան պաշտօնին հասած է։ Նորա յաջորդած են եղբայրն Սիմօն և որդիքն Յովհաննես և Պօդոս պեյերն, որը պեռ 20—30 տարի առաջ նոյն պաշտօնն կը շարունակերն։ Ցովհաննես պեյի որդող մեջ վսեմ. Ցարութիւն էֆենտին բանի տարիէ ի վեր արտաջին գործոց նախարարի խորհրդականութեան բարձր պաշտօնն ունի։ Սոյն ընտանկըեն կան

\*) Sou time Umor P. q. C. «Ubytiquelte som of hup».

4

և այլ պեյեր որը պետական զանազան պաշտօններու «Աջ կը գտնուին։ Կամարկապեն կան և այլ երևելի անձինը՝ Աշնահեանը ևայլն։

# <u>ԿԱՐՈՒՇԼԱՅ</u>

Գաղաջէս իբր կէս ժամ ի հարաւ՝ Կամարկապի մօտ է։ Բնակիչ՝ 40 տուն Հայ և 20 տուն Թուրջ, որջ մզիին մ՝ունին։ Եկեղեցին՝ «Չարխափան ս. Աստուածածին»՝ միջակ մեծունեամբ և ջարուկիր է, իբր 60 տարի առաջ վերանորոգեալ։ Ունի ՛ի Կ. Պոլիս 2—3 խանունեներ որոնց հասոյնեն րողը եկեղեցւոյ և ջահանային ծախջերը կը հոգացուին։ Գահանայ՝ 1։ Ըստ նախըննծաց տեղեկագրին «Վարժարան ծազկոց» ս. Սահակեան, տարեկան ծախջ՝ 2000 դահ. ուսանող ջ՝ արու 9, աղջկունջ՝ 10, ուսումն՝ ջեր. նծուաբան. ջրիստոնեական։ (Չարդացեալջ Կամարկապու վարժարանն կը չաճանտնն)։ Դասատուն չիշնալ ջահանայն է։ Բարոչջն ու սովորունքիւնջն նոյն են ընդ Կամարկապու։ Նիւնական վիճակն ևս միջակ է։ Բերջն է գահրի, նծունի ևայլն։ Կան բաւական պանդունտո։ Գիւղին մէջ գանուողներն ոմանջ արհեստաւոր և ոմանջ գործաւոր են։

Ուիպապետիչնեն։ Ս. Կոզմոս և Դամիանոս որ շս. Ջուխտակ» ալ կ'ըսուի եղեր, Կարուշլայի և քաղաքիս Արեզի թազի մէջտեղն. բյրակի մը կամ ապառաժի մը վրաց, չեչ քարով կառուցեալ 2 խորանով փոքր եկեղեցի մ 'է։ Վերնայարկ ևս ունի, ուր 2 խորան կայ, բայց վրան բաց է։ Կը կարծուի թե 6—700 տարուան շէնք մ 'է. ոմանք կ'ըսեն թե շէնքին կեսն յետոց շինուած է։ Քոմի ունի մասի տուն մի և մատաղատուն մի, նաև ընդարձակ դետիններ ուր է և գեթեզմանատունն Կարուշլացւոց։ «Ս. Կոզմոս» թե ջերմի համար ուխտատեղի է և թե, իբրև կեդրոնավայր՝ Ակնայ աղդայնոց հանդիսավայր և զբսսավայր է։ «Չարխափան». գեւղին վերևն, մեծ ճանրուն ստորևն, քարով շրջապատեսլ տեղ

i

- 51 --

մ՝է։ Քոնի մացառ մի կայ ուր քուրջեր կը կապեն։ Մղջոս Թագաւոր \*) Խորու-ձորով Կարուշլայեն ի Կամարակապ գընալիք ճանբուն վրայ, ձորոյն քով, Կարուշլայի կողմն ապառաժ քար մ`է։

## **Ն**ሀՐՎԵՐ \*\*)

**Κωղաջիս արևմտեան կողմն 3**—4 ժամ հեռի է այս գիւգըն, որ Եփրատայ աջ եզրէն կէս կամ 1 ժամ վերևն է։ «Նաւվեր» կը ստուգաբանեն որ հաւանական է։ Բնակիչը՝ 25 տուն Հայ և 10 տուն՝ Թուրջ։ Եկեղեցի՝ ս. Մինաս. քահանայ՝ 1։ Ըստ «պատասխան» տեղեկագրոյն՝ «Վարժարան» (ծաղկոց) Սըմբատեան. աշակերպը—տղայ՝ 15, և աղջկունը՝ 5. ծախ ը 1200։ Դասատու՝ 1 (գիւղին քահանայն է). ուսումն — նախապատրաստական և ընտելարանի դասեր։

Նարվեցիք պանդիստուԹեամբ և երկրագործուԹեամբ և ոմանք ալ կաղնւոլ փայտ վաճառելով կ՝ապրին։ Փայտն Ակ-Նեցի Թուրք քալակավարը (բելլէքճի) կը գնեն և քաղաք բերելով կը վաճառեն։

Ո-խտատեղես Գիւզին առջև՝ 10 վայրկեան հեռի՝ ս. Աստուածածին անուամբ եկեղեցւոյ աւերակ մը կայ. կրսուխ Թէ Թաղէոս առաջնալ կառուցած է «Գետահայեաց ս. Աստուածածին» անուամբ, և իբր 150 տարի առաջ գիւզին եկեղեցին այն է եղևր։ Այս մատուռ պարտէզի մը մէջ է որ դամրարանն է գիւզին ջահանայից։ Աստ կայ մի գերեզման «ս. Ցակոբ» անուամբ։ Խաչաղբիւր և Խնդրակատար անուամբ երկու ուխտատեղիչը կան որջ գիւզին շրջակայջն են, և ս. Նիկողայոս և ս. Թէոդորոս՝ որ Եփրատայ եղերջն են։ Ասկէ 5 վայրկեան վեր, գետին եղերջն «Նաւ տուն» անուամբ ջա-

<sup>\*) «</sup>Մոքոս» մեծ ըսել է, կըսեն. դարբինք և որմնադիրք ևս մեծ մուրճ մ'ունեն զոր «մոքոս չաքուճն» (չէքիճ) կը կոչեն։

<sup>\*\*)</sup> Նարվերցի էր «Ննձէ» մականուանեալ զինավարժ և ջաջ ազգալինն՝ որ երկար տարիներ մաջառեցաւ չրջակալ Քրդաց գատ ազգալինն՝ որ երկար տարիներ մաջառեցաւ չրջակալ Քրդաց գատ

րայր մը և Եփրատալ միշս կողմը (ի Մեծ Հայա) տանց with with a start of the start of the start with the start the start with the start of the start րեն 1 ժամ է «ս. Նիկողայոս» որ լերան մը գագաթեն է և ուր ուիստի կ՝երթան կարմիր գյուխ (Շիի) Քրդեր և երբեն Թուրջը, հրը «Չիյարեթ թերեսի» կր կոչես. Հայոց щţı մոմ կը վառեն և ըստ սովորու Թեան՝ իրենց հանդերձէն քուր մը կը փրցունեն և հոն գտնուած ծառին վրայ կը կապես։ Երբեմն ալ կտոր մի դերձան կը կապեն։ Հայք այս տովորու. [Ժիւնը դադրեցուցած են։ Նարվերի և Ապրանքի մեջտեղն է «ս. Սարգիս», ուր գետինն բարին վրալ պալտի նշան մր կալ, գոր կր համբուրեն։ Նարվերէն 2 ժամ կր տևէ Արտ. կայի ս. Գ. Նարեկացւոլ վանըն։ Վանուց և Նարվերի են։ տեղն արոտակ (արտումի պէս) ծառ մի կայ, գոր նուիրական կր համարին Հայը և Քուրտը և որոլ վրալ ևս կապ կը կա ubus Unit 5 dusphows Stans, yus webput hybers on my In np Warby War in farmer le grounch for Varbe par upor րունի Թագաւորն կառուցած է։ Նարվերի այգեաց (պարտել) 159 your u. We of net phy le u. Tous our netwood of por les. Tout աղբիւր մը զոր Հայք և Թուրքը ևս «Դրախտ» կը կոչեն։ Գիւզին վրայի կողմը, լերան բարձունքը, ապառաժին գագաթ քարաշեն տեղ մը կայ «Բերդ» կոչեցեալ. սորա ստորոտն աւհ. րակ տանց հիմունը կան, որը «Աւեր-անուիը» կոսուին։ Սա Նիզակ, Նետ և այլ զենք և դործիներ կը գտնուին երբե**մն։** 

Նարվերէն կես ժամ է Ապրանը գիւղն որ Թուրըադմա և 60—70 տներէ բաղկացեալ է։ Աստ կայ աւերակ եկեղեց մը և կամարակապ շէնը մը։ Կ'ըսեն Թէ բանի տարի յառաչ չիշատակարանով բար մը գտնուած է։ Շրջակայբն կան փա րախ, Խաչուկ օղլի, Թարան (դարան) պաղլարը և այլ հայկա կան անուամբ տեղեր։ Վերոգրեալ տեղեկուԹիւնըն գիւղին \$ Գրիգոր բանանայեն առնուած է։

### **Լኮፊ ዓፀፓ Լኮፊቶ**.

Ufumy wolkhihm's forth for the Sayu, 8 dad, bupme տեն իրը 3/ ժամ վերևն դաշտավայրի մը մեջ գիւղ մ է, որ . Փշատիի գիւղախմբին կեդրոնն է։ Բնակիչ՝ 70 տուն հայ և 30 տուն Թուրք։ Ունի 1 եկեղեցի և մի քահանալ։ Ըստ «պատասխ. տեղեկագրոյն»՝ վարժարան՝ Հայկեան, տղայը՝ 30, աղջկունը՝ 10, ծախը՝ 900 դահ., դասատու՝ 1, ուսումն՝ հայերէն, Bancweww. աշխարհագր. ևայլն։ Լճեցի մը կ'ըսեր Bt գիւզն ապորկապ գերեղմանը կան։ Կը կարծուի [Ժէ Ուռեկ, Կաղըրան, Արտոս և այլ շրջակայ գիւղօրեից մեջ ի հնումն Հայ բնակիչ կան եղեր, զի եկեղեցւոլ աւերակներ կան և շատ տետ ղեաց ու արտերու անուանը հայերէն են։ Գիւղացի Թուրքը կ ոսեն եղեր «Ինեկի մսուրա պաղլատը ն մի» (այսինըն՝ կովը մսուրը կապեցի՞ր)։ Լճեցիք ի հնումն ի Պօլիս ջաղացպա-Նութեամբ և Հացագործութեամբ կը պարապէին և Նիւթական վիճակնին լաւ էր, բայց այժմ անկեալ կր համարուին։ Մէկ մասն պանդիստու Յեամբ և մեկ մասն գիւղին մեջ երկրագործութեամբ և առևարով կ՝ապրին։

### ԲԵՆԿԱՑ ԿԱՄ ԲԷՆԿԱՆ \*)

Ալնայ հիւսիսային կողմն, 6—7 ժամ հեռի, ի Մեծ Հայս, յնդեր Եփրատայ կառուցեալ 160 տուներէ բաղկացեալ հայաբնակ դիւղ մ՝է, որ ըստ ազդ. վարչու Թեան՝ Ալնայ, և ըստ քաղար. կառավար. Տիւրիկէի կը վերաբերի։ Ի Կ. Պօլիս, հանրածանօԹ Ստեփան է՛ք. Փափաղեանի նախնիջն այս գիւղէն են։ Գիւղէն 5 վայրկեան հեռի է Ռապատ դիւղն՝ յեղեր Եփրատայ, մի բանի տուն Թուրջ բնակչօթ։

\*) Մարթ է ասել թ է և ուն դարս էր և բանիրուն վարդապետն Բանիկ կամ Բենիկ ասացեալ, որ արար զալեսպես Ճառս, և ալլն. «(Չամչ. Հատ 3, երես՝ 244, թ. 1251)։ Նաև ի ցանկն Չամչ. երես 139, «Բանիկ անեցի, բ. 1005». Բենկանի վերաբերեալն գրելու համար գիւզին արժ. 8. Ցակոբ քահանային գրած էի և նա 84 թ. օգոստ. 13 նամակաւն պատասխանած էր, զոր նոյնութեամբ ի ստորև կը գրեմ։

«1. Գաղ Յականու Թիւն. — Այնպէս կ՝աւանդուի Թէ Սենեջերին Թագաւորին իշխաններէն Բենիկ այս գիւղ շինել տուած է, Թերևս Անիէն կամ Վասպուրականէն եկող գաղ-Թականաց ի բնակու Թիւն, որը հետղ հետէ թաղմացեր են Չմշկածագէն, Բալու էն և այլ տեղերէ եկած գաղ Թականու-Թեամբ։

2. Արդի կացու Թիւն. – Ազգային. սկիզբեն ի վեր մեր ծախնիք ինընապաշտպանու Թեան և ջաջասրտու Թեան մեծ փորձեր տուած են. անոր ապացոյց է, մինչև ցայժմ Գրդաց (Օվաձրգ-Տերսիմի) տուրք չի վճարելնին, որոյ համար Բենկայ իւր շրջակայ գիւղօր էից մէջ միմիայն է. իոկ գալով դաստիարակու Թեան, այս մասին ալ Բենկացիք սկզբեն մինչև ցայժմ մեծ փոյթ տարած են. սորա ապացոյց ևս կրնայ լինել այն լնկերու Թիւններ որը սոյն նպատակաւ կազմուած են, և Շերկայն բաւական գոհացուցիչ է։

Տնտեսական վիճակն նախ բան զանկումն արժենգրնեց բաշական լաշ էր. ներկայն գոնացուցիչ. մեծ մասն երկրագործունեամբ կըզբաղին, մաս մի պախդուխտ են և մաս մ՝ալ կալուածատեր. իսկ բաղաբականն Տիւրիկոյ գայմագամունեան ներբև միշտիրունեւն է զոր կը վարէ գիշզիս երևելի ազգայիններէն մին. (Մեծարեան կամ Մեծատուրեան)։

3. Եկեղեցի և ուխտատեղի, վարժարան, աշակերտ և ուսումն. — Գիւդս ունի երեջ եկեղեցի. մին Ս. Հրեշտակապետ՝ գիւղին մէջ, իսկ երկու հատ՝ Ս. Աստուածածին և Ս. Երեջ Մանկունը յայնկոյս Եփրատայ, մին տասն, միւսն ջանն վայրկետն հեռի գիւղեն. երեջ ուխտատեղի գիւղի մէջ և մէկ հատ գիւղեն դուրս։ Գիւղեն կես ժամ հեռի Եփրատայ եզերջի վրայ կայ մի փրատակ որոյ համար կ'ըսուի Թէ եկեզևցի եղած է։ Վարժարան երկու. մին մանկանց ս. Մեսրովպեան, միւսն ողջկանց Նուննան՝ յորս կը յաճախեն 110 մանկունը և 30 աղջկունը. կ՝աւանդուին հայերէն, Թուրըերէն, Ֆրանսերէն, կրօնագիտուԹիւն, պատմուԹիւն, աշխարհագրուԹիւն, ԹուագիտուԹիւն, բնագիտուԹիւն, երաժշտուԹիւն և մարքնամարզուԹիւն, դպրոցաց ներկայ վիճակը բաւական գոհացուցիչ է \*):

4. ՀնուԹիւնը.—Ս. Հրեշտակապետ եկեղեցւոլ մէջ կան մի բանի մագաղաԹեալ աւետարան և մաշտոց լորոց մին կը կրէ հայոց ۹. Թուականն և որոլ վերջն գրուած է հետևեալն գոր աստ կ'օրինակեմը»։ (Ցիշատակարանն տես գլ. Ժ.)։

# **Գ**Լ. <u>Է</u>.

# ՀԱ8-ՀՈՌՈՄՔ. X

Ա. Գլխոչն ԱՀ Հայ-Հոռունոց նկատմամբ գրուածներեն կարելի է են Շադրել, Շէ ասոնը Ակնայ Միշս բնակչաց հետ Վասպուրականեն գաղՇած են կամ բնիկ Հայ լինելով, ապա յունական հալածանաց ժամանակ անոնց դաւանուՇիւնն ու ծէսն ընդունած լինին, հայ լեզուն, սովորուՇիւնըն և անուանըն իսկ պահելով։ Ըստ Ինճիճեանի, ասոնց ջահանայից զգեստն հայկական եղածեն, սակայն Շուի Շէ, յունանալու ըդձիշ կամ մետրոպոլիտաց պատուէրներով, ջահանայից տարազն այժմ յունական է \*\*), ինչպես որ հայկական անուններն հետզհետէ տեզի կուտան յունականին։ Վերոյ գրեալ փոփոխուՇետնց պատո ճառ կրնան համարուիլ՝ ըստ մասին՝ այլ և այլ ջաղաջներէ

\*) Ըստ «պատասխ.» տեղեկագրուն կը լաւելում.թ. «ղասասու՝ 5, ծախջ՝ 10,000 ղահեկան»։

\*\*) Հալ-Հոռոմը ցալսօր իրենց ջահանալից «պապա» (Հալթ) կ'ըտեն և կեո՞ն «պապա կին»։ Հալը ջահանալից «տէր-պապա» և կեո՞ն՝ «իրիս կին» (աերէց-կին) կ'ըսեն. եկող ու գիւղն ամուսնացող Ցոյնը՝ որը հայերէն չգիտեն և ընական է որ սիրեն իրենց որդւոց յունական անուններ դնել և յունարէն խօսիլ, և ըստ մեծի մասին՝ գիւղացւոց 'ի Կ. Պօլիս պանդխտուԹիւնն և Ցունաց հետ ունեցած խնամու-Թիւնըն։ Պէտը է յաւելուլ Թէ, երբ յիշեալ յոյն փետաները տակաւ առ տակաւ լնտանեկան լեզուին՝ հայերէնին կը վարժուին և կը խօսին։ լսած եմ Թէ Հայ-հոռոններէն շատ երիտասարդներ ալ 'ի Պոլիս յունական կրԹուԹիւն ստանալով մոռացած են կամ մոռանալ կ'ուզեն իրենց հայկական ծագումն.

Հաւանական է Թէ հին ատենները այլ գիւղօրէից մէջ ևս Հայ-Հուոմ դանուած ըլլան և ապա գաղԹած (Տես Գլ. Ա.) կամ Թուրջացած (Տես Նարվերի մօտ Ապրանջ գիւղի Արստօլ օդլու ևայլն), սակայն այժմ միայն չորս գիւղ մնացած են, որջ են՝ Վանջ, Ձորակ, Շրզու, Մուշեղկայ, որջ Տիգրանակերտի յունական (ժեմին կը վերաբերին։

Վանդի եկեղեցւոյն մէջ ծէսերը յունական են, սակայն ընԹերցուածոց բոլորն ալ յայսմաւուրջ, մաշտոց, ժամագիրջ, պատարագի խորհրդատետր յունականեն `ի Հայ Թարդմանեալ են։ Մաշտոց և ժամագիրջն տպագրեալ, իսկ խորհրդատետրն և յայսմաւուրջն ձեռագիր են։ Աւետարանն և Աստուածաշունչի մի մասն հայերեն և ձեռագիր, իսկ Սաղմոսն հայերեն տըպագրեալ։ Կայ նաև վերոյիշեալ ս. Գրոց յունարենն տպագրեալ։ Այսպես, երբ ընԹերցողն յունարեն գիտե, յունարեն մատեանջն, և և Թէ չգիտե՝ հայերենն կ`ընԹեռնու։ Եկեղեցւոց մեջ հայերեն ընԹերցանուԹիւնըն այնպիսի արտասանաւ-Թեամբ և եղանակաւ մ`է որ յունարենի կը նմանի, և անո վարժ անձինը դժուարաւ կը հասկանանս

Ինչպես վերը ըսինը, Հայ անուանը տակաւ կը փոխուին. 20—30 տարի յառաջ դեռ կը գտնուեին Պետրոս, Գերրգ, Ղազար և այլ անուններ, բայց այժմ ԲեԹրօ, Եօրկի և այլն կը դործածեն և հազիւ կը գտնուին։ Հայ անուանը, ինչպես է Եշան և այլն։ ՄիսիԹարական է սակայն Թե, իրենց նամակՆերև, տոմարներն, ընտանեկան խօսակցուԹիւնն, բոլորն հայերեն են, և վարժարանաց մէջ հայերենն՝ իբրև մայրենի լեղու կ՝ուսուցուի, սովորաբար հայ դասատուներէ որը քաղաքէն կ՝երԹան։ Նրենց ընտանեկան հայերենն ըստ բառից և ըստ արտասանուԹեան կը տարբերի վիճակային ազգայնոց լեդուէն։

Արանց զգեստն չար նման է Ակնաչ Հայոց, բայց կանանց զգեստն սակաւ ինչ կը տարբերի, և պճնասեր համարուած են։ Կերակրոյ մասին կ'ըսուի Թէ Հայոց չափ հոգ չեն տանիր։ Գոլովա \*) կոչուած տեսակ մը ուտելիք ունին զոր կը պատրաստեն ձաւարէ, ընկոյզով և շաջարով խառն, և վրան նուշով և նուռով կը զարդարեն։ Կարծեմ, սովորաբար ննջեցելոց չիշատակուԹեան առԹիւ կը պատրաստեն գորովութ։

Ջորս գիւղօրէից Հայ-Հոռոմը լստ վարուց և ըստ բարուց, փոբր ՝իշատէ կը տարբերին ՝իմիմեանց. Վանեցիք և Ջորեցիք աւելի կրթեալ և ազնուաբարոյ են։

Այս երկու գիւղերն շատ հարուստ սեղանաւորաց և երեւելի անձանց հայրենիքն է։ Շրղուցիք՝ միջակ վիճակ մ'ունին, իսկ Մուշեղկացիք պարզ գիւղացիներ են։

Այս ընդհանուր ծանօԹուԹիւնքն տալէ յետոյ, անցնինք իւրաքանչիւրին նկարագրուԹեանն։

**ዺሀኄ** ዋ.

Անայ հիշսիսային կողքն Սանտգպաղի Թաղին դիմացն, 'ի Մեծ-հայս, Եփրատեն հինգ վայրկեան վերև գիշղ մ'է։ Բընակիչ՝ 40 տուն Հայ-Հոռոմը և 5—10 տուն Թոշրջջ։ Դեռ 25—30 տարի յառաջ իբր 80 տուն բնակիչ ուներ, բայց երկիցա հրկիզմամբ՝ 10—20 տուներէ զատ բոլորն այրած և չետոյ վերատին շինոշած է։ Գիշղին եկեղեցին՝ ս. Գէորգ, Եփրատայ եզեր-

\*) Կուլիրալ, կամ կոլիվալ, ի, ից. դոլ.=(Յունարէն) հատիկ, ցորեն խաչած.

pr wywawth de fros for the for ◆րկչի 1722 և Հայոց ՌՃՀԲ Թուականին նորոգեալ։ Քահաwy tryne: Lucusuywawpwp, 'hsunest yww p or't bytr, k սորա անուամբ գիւղն Վանը կոչուած է։ Եկեղեցւոյն գրան կից կայ ս. Սարդսայ մատուռ մի որ Հայոց կը վերաբերի և ուր տարին մի անդամ՝ ըաղաքիս ս. Գ. եկեղեցիէն քահանայ կ՝ երթծալ և կր պատարագել Գիւղին մեջ է վարժարանն որ երկահո. է. \*) ծախջն եկեղեցիէն։ Հետևեալ տեղեկութծիւնըն գրե. .ղացիներեն ստացուած է։ Գիւղին վերև ապառաժ լերան ատորոտն կայ տեղ մը որ կ'ըսուի «Բերդ» և ուր կը գտնուին տանց հիմունը և բարէ սիւնը։ Ըստ աւանդութեան, անդ կը բնա. կին եղեր եօթ աունը՝ որը լետոլ իջած, կազմած են այժանեան գիւղն։ Այս բերդեն պեպ ۱ի հիւսիս Շրզուի կողմն կայ այր մի որ կ'ըսուի Հայ քարար (քարայր)։ Կայ նաև Մութ-"քարայը որ «Ալայի մաղարա» կ՝րտուի և որ Շրզուէն Մուշ**էդ.** կան գնալիք ճամբուն վրալ է, լերան ստորոտն։ Կրսեն թե ՝ այս այր այնչափ ընդարձակ է որ ծայրն դտնուած չէ, թե այրին մեջ աքաղաղ մի Թող տուած են, որ կարին քաղաքեն nalpu tojut to, le fot Sadfe up vous to wight to ponewo to Կայ լայրին աշաղան մը ոշր կ՝երքժան ալայ (մորքժին վրայ Ճերմակ կամ Թուլս բիծեր) ունեցողը. ախտաւորը կր յուացւուին և կը բժշկուին։ Սղջա պարտին կամ իւրեանց շապիկը և կամ քանի մը փարտ ձգել լաւազանն ۱ի նուէր։ Գիւղին վերև մորիներու մէջ կայ ուխտատեղի մը որենապատ, որոլ մէջ կայ քարէ պատկեր։

Այս գիւղէն շատ երևելի անձինք կը յիշուին, ինչպես է Ներկայ դարուս ԱՏ ի Կ. Չօլիս իւր Հարստութեանք ու պատուով Հռչակնալ սեղանաւոր Անաստաս աղայն։ Թէ Վանեցւոց և թե միւս երեք գիւղօրեից ապրուստն լստ մասին պանդրե-

\*) Դաստոու՝ 2. մին կրտսեր քահաճայն է և միւմն Հայ դաստոու մ՝ է իքաղաքիս- 59 -

annefotimeste le pour simofit upstrummet le matempnet que source. grefites

## 20104

Ναβάδ-Հայս, Աίτε δρ σωσ στη βραφουρία μα βαρουρία και βάλου και τη διαστική τη δημαρουρία μα βάλου και τη διαστική τη δημαρουρία τη διαστική διαστική τη διαστική διαστική τη στη διαστική τη τη διαστική τη στη διαστική τη

#### <u>ሪ የ ደ በ ኑ</u>

Անայ հիւսիսային կոզմն ի Մեծ-Հայս, նոր կամուրջեն իրը կես ժամ։ Բնակիչը՝ 30 տուն Հայ-Հոռոմը և 20 տուն Թուրը։ Եկեղեցի՝ ս. Յովհան. Ոսկերերան։ Քահանայ՝ 1։ Կայ

\*) Չաղաջիս և մօտակալ գիւզօրէից Հալերն գրեթե Հալ ուխտատեղեաց և եկեղեցեաց հաշատար լարդ կ'ընծալեն սույն եկեղեցեաց ևս. դոր օրինակ, չատեր իրենց ճամբորդին նաւ նստելու օրն հաչուելով ուիտի կերթան ի ս. Նիկողալոս որ պաշտպան կը համարուի նաշորդաց։ Նաև ի ս. Սարգիս, 'ի Շրզու ս. Յովհան, խանթետուր և Ալալի Մաղարա ուխտի կ'երթան. Ինճիճ. հատ. Ա. 308-'ի կարգի Հալ Հոռոմ գիւզօրէից կը գրէ. «Չորակ. եկեղեցի որ լանուն սրբուն Նիկողալոսի, առ որով և մատուռն Հալոց յանուն սրրբուն Գեորդալ, Առ Չորակաշ է բարձր լնառն կոչեցեալ «Սարին Սուրբ Սարգիս», լորոլ գլուին կալ աշտարակ ջարաչեն, որոլ ավոն հիմունջ և տոորին կողմանջ միայն երևին բարձր իրտն երեջ գրկաչափջ. ընդ երկրաշ տեղշուս գտանին երբեմն տէդջ երկաթիրջ»։ Ըսել է որ ի ճատուռ մի կալ եղեր, որպէս 'ի Վանջ և ի Մուշեղկալ դեռ ցալտօր կան։ վարժարան մի և հայ դասատու մի որ ՝ի բաղաբես է։ Ծանգըըն Եկեղեցիէն։ Շրզուի վերևն ուխտատեղի մը կայ զոր Խանրկտուր կ՝անուանեն։ Փորու խիլժ (խոստուկ) ունեցողը կ՝երթՅան։

### ՄՈՒՇԵՂԿԱՑ ԿԱՄ ՄՈՒՇԵՂԿԱՆ.

# **ԳԼ․ Ը․**

# 🔀 ՀԱՑ՝ ԲՈՇԱՑՔ․ ԿԱՄ ՄԱՂԱԳՈՐԾՔ

υηρω 10-15 տուն, ρωηաρիս վերին Թաղի Խնկաձորի մօտերը կը բնակին։ Ե՞րբ և ուստի՝ հկած են և իրենց հինսովորու Թիւնին ի՞նչ են, չգիտեմը. միայն 30-40 տարիէ 'իվեր, դայս դիտեմը Թէ, բոշայի կանայը մուրացկան են, և խօսքի մէջ, երբենն, ժլատ և աներեսու Թեամբ շնորհ խնդրող անձանց բոշայ է, Չինկեանէ է կ'ըսուի, նմանու Թեամբ։ Սոնը՝ Թափառաշրջիկ բոշայից պես՝ մաղ շինելով և մուրադով կ'ապրէին։ Լսած եմ Թէ, հին ատենները սովորու Թիւն է եդեր որ երբ Բոշայ մի ամուսնանայ աղջկան մը հետ որ բոշայի ցեղէ է, ամուսնացող այրն մաղէ մեծ պարկի մը (խարար) մէջ կ'իջեցունեն, և կինն կ'ըսէ. «ել խարարէն, ել խարարէն, ըսպենջդ (արթունի տուրը մ`է եղեր 'ի հնումն) պիտի տամ, իարաճդ (նմանապես տուրը մ`է հպատակ աղդաց համար, տես դլ. Ե.) սաղլամիշ պիտի ընեմ, ես պատկեն դուրս կ'ելՆէ, և կինն՝ իսր հանդիսասոր խոստման համեմատ՝ իրթև պարտասոր ղայրն կերակրելու և ապրեցունելու, կը սկսի տոպրակ յուս կամ իձեռին, բոշայ ընկերուհւոյ մը հետ մուրացկանութիւն ընել, և օրական ժողվածն տուն կը բերէ առն և ընտանեացն համար։ Այս սովորութիւն հասանականաբար այժմ դադրած է, Կ'ըսեն թե Ակնայ բոշայը հին ատենները Տիսրիկէի Հայ բոշայից հետ խնամութիւն կ'ընեն եղեր, բայց 15—20 տարիէ 'ի վեր, տեղսոյս Հայոց հետ խնամութիւն ընելով, հին բոշայներն տակաս սպառեցան և նորերն բոշայութենէ դադրած են։ Չուտ բոշայ համարուածին իսկ եթե բան մը հարցունեո, «ես կամ մեկը բոշայ չենը, կը պատասխանէ. հայրս կամ մայրս Հայ է և Սև աստեն կամ Տիսրիկէէն և կամ այս ինչ տեղեն եկած է և այս ինչ Հայ ընտանեաց հետ խնամութելնեն

Լսած լինելով Թէ ասոնք առանձին լեզու մ՝ունին, բոշայ Ճանչցուածներէն մէկը կոչեցի (84 ի գարունն), որ 40 տարեկան կար, հարցայ, և՝ շատ դժուարուԹեամբ՝ հետևեալ բառերն խօսեցաւ. յաճախ կրկնելով Թէ «հայրս ասանկ կ'ըսէր»։ Բոշայերէն Հայերէն

Ծալավ հայ. Մանկե տուր. Խալժինը ուտինը. Push (พาม) ปูกัน. Uwdby 5 1 we t, wyty t. <sup>∙</sup>₽<sub>ĽL</sub> prd. Մանկիկ (մանկինը) ուղենը, խընդրենը. Քուիչ մը եփեկը Surup of (uneldue) popped *ч<sub>L</sub>шг* պանիր. Խալիպ dpu . ſιος ปตป. 2/tup2 4 [m.f.

fwpgh հաւ, **աքաղաղ**. Գրաշ q / up. **V**mjl ogh. • *¶}\$þ\$* S [um fumn . Մանուսը ավեծ Sugpu byme. Թահին ավեծ՝ Swipe byme. Luipme 4 wp ww. mąghų. zueh Purpl plited, walted. Սոլավ 2116 Աքեհ *ш*يو. åbn\_p UP Swifeneptif, (Stage uwgittif). பாபிர். (யசு காபிர்) Թութ *∖\_\_*₽ Անքատ <u>רייקייגי</u> քահանայ, վար**ղա**պ**ետ**. Selenne Unchr 4 denter f. 1 wpp **4**2. Գար . 11. mm վառելու փայտ. կ*ա*հ 9 punc Թուրք, Տաճիկ. **Գրսուն ավեծ դարը** Swaphp blose (hurden) durate 4-wjl4 7fr. իննավ տղալ, պատանի. Updhe 4 ընացեր է, պառկեր է. մանուկն կուլայ. Չաղան (կուլայ) **Զ**րպուն պարեգօտ, տճ. էնթարի. անդրավարդիկ, ան. շալվար. Խարավանա *<sup>Կ</sup>Ըլ‴ԸՐ*</sup> բաճկոնակ, տճ. սալթա. Մանկեցի նալեց п**ւզեցի** չտուաւ. bbune (pd) կոռը ապականիմ. Մշախը (զա[Ժերէ) արևը ցալժեր է.

- 62 ---

Անծին Մայլավոտեր է Աղուէս

Մանուսը գանթն է ALSEP 4 Մանուսը (վերէն կուղայ) About grap 5. ջայրաւր պետեղւոր է Phil Unlu **Басир** (вушс) Մուսը ավեծ (քանիմը) չինիշ մանկե **Իննավ¹, (ֆիլան Ճան)²,** Գարէ<sup>3</sup>, (գնա) մայլը<sup>4</sup>, (բեր) ճանակ<sup>5</sup> մր պի-5/126, (nL) nL2/127, Znchuly Ն*ա[*Ժլլլի Աբիհ Նաթթրի ԱԹավ LE Ufourly if Frud *Կոհրաֆ* Loir Մերավոնց

417 գինովցեր է, արբեալ է. Չղբալիկ (կալժնէն ելած տեսակ մը ուտելիք). Հայրդ տունն Է. ńş. Մարդը վերէն կուգայ. յղացած է. Swpup joh 4. դևրեզման. մարդ. մարդը (ուն) եկաւ. մարդը եկաւ (քանի մը) փաpu niqt. Squig<sup>1</sup>, wyu file2, mhq43, quin ogh4, abp phis in fullite, ու երքժան".

Ցայտնի է նել վերոց գրեալ բառերու մէջ կան որ Հայ-Երէնի աղաւաղեալն է. կան որ պարոկերէն կամ արաբերէն են կամ այլ լեզուաց կը վերաբերին։ Եւ ինչպէս յայտ է,

- 63 —

ՅԵԷ և անուանց հոլովումն ու բայից խոնարհու**մն հայերէ։** են, բայց արտասանուՅիւնն՝ տարբեր <mark>ի հայերենէ՝ ատա</mark> մանց միջէն և ռնգային էր։

Abrnarbul runtru woung wish house oft, try by. բայրս և բոշայենց այս ինչ անձն որ ի Մալաթիա կը գրտ. նուի, անոնը ալ գիտեն։ Եղբայրն կոչեցի, հարցայ, **խնդրե**. ցի, դրամական վարձը խոստացալ, բայց հրդուաւ Թէ չրգիտեմ։ Ի Մալաներա Աինեցի բարեկամի մը գրեցի, որ այն անձին խօսած, հարցած էր, բայց նա ևս «չրդիտեմ» րսած էր։ Uum Lu 50-60 munthut topher persuits we surger, togit պատասխանեցին։ Չարմանալի բան. եթե բոշայները չուներն իրենց լատուկ լեզու մի, սոյն բառերն խօսողն ի՞նչպես յան. uumpuumhy Sumpty le fuoutyme spotem 60-th wetship puռերն, և ինչու աեր թե եղրայրն կամ այս ինչն ալ գիտեն։ Կամ այն է որ լիշեալ սակաւաԹիւ րառերն «Արկոտեան» լե. գուի պես այլոց անհասկանալի լինելու համար հնարգւած են, և կամ բոշայից լեզու մի կայ Թերի և աղաւազետոլ և բոշալը չեն ուղեր յայոնել. Հաւանականաբար այսու պատ. Ճառաւ Թէ, իրենց բոշալ լինելուն վերաբերեալ ապացոլց կամ նշան մի տուած կ'րլլան։ Իմանալով թե Կամախի ըա. ղաքեն ալ հայ բոշայք կան, հոն առևտուր ընող Ակնեցւոյ մը հարցալ, նա ևս պատասխանեց Թէ որոշ լեզու մի չու. Նին, այլ հայերէն կր խօսին։

Աւելորդ չեմ համարիր ղայս ևս գրել Թէ, հայ բոշայից անուանդնն, կրծնն և սովորու Թիւնդեն այժմ աղգայնեն տարբերու Թիւն մի չունին. և՝ ինչպես ըսի, կան մեկ բանի տուն որ Հայոց հետ խնամեցած և բոշայենց տան անունն փոխելով այլ տան անուն կը կրեն, և կան որ Թէև բոշայենը կ՝ըսուին, բայց բոշայու Թիւն չեն ըներ, այլ ոստայնանկու-Թեան կամ այլ արհեստի ու աշխատու Թեանց կը պարապին։

### **Գ**<u>լ</u>. Р

#### <del>የ</del>በኮቦ<mark>ጉ</mark>ቶ፣

Իրրև լրացուցիչ մասն Անայ վիճակադրութեան, կարեոր համարեցալ Անալ Սարը-չիչեյի լերան և այլ կոզմերու Քրդերի բնակութեան, ապրուստի, սովորութեան մասին ևս գրել։

1. Գոմրաշցիջ։ Տիւրիկեի հողև, Թողուտու մօտ Պուռմայի խանն կը ձմերնն. իրը 30 տուն, տուն գլուխ 5-6 հոգիէ բաղկացեալ։ Ասոնց 10-15 տուն, ամառը Ակնայ մօտ Տիլլի չային կողմերը կուգան։ Ջորեպան են. ցորեան (գոր գիւղացի մշակեն կը գնեն), փայտ, պանիր և այլն Ակն կը բերեն և կը վաճառեն։ Կրօնն՝ շիա են (Գըզլպաշ)։ Ունին՝ ՛ի Գարապել կրօնապետ մը զոր տետե կը կոչեն և որ այժմեան ցեղապետնին (Պօյ-Պեկի) է։ Սա երբենն կ'այցելե և կամաւոր ընծայներ կը ստանայ։ Գոմրաշցիջ իբրև 20 տարի չառաջ 50-70 տուն կային և Ակնայ Ապրանջ և Նարվեր գիւղերու մօտ կը բնակենն, բայց զիւղացիջն բողղջելով, կառավարունիւնն ցրունց զԳոմրաշցիս, որոյ մեկ մասը Սևաստի մօտ Գարապելի մեղիի կողմը, մեկ մասն ալ Տիւրիկեի երկիրը գնացին. քնացեալջն վերոյ գրեալջն նն։

2. Ագուշաղցիլը։ Տիւրիկեի հողևրը, Մրջնկայի չայի մօտի այրերը, Տերական, Տեժտելըևար և Լիվան գիւղերը կը բնակին. 60—70 տուն։ Ամառը Սարը-չիչեկի լերան Մեչիտ ըսուած տեղը կուգան։ Հովիւ և ջորեպան են։ Կրօնիւ՝ Սիւննի Մահմեդական։ Կառավարութիւնն՝ Տիւրիկե։

3. Քարաժորցիք։ Տիւրիկէի Գարասու լերան դիմացը Պօյպէկի Հազգ-վերտիի գեղը, Թօնտուր և Լիվանլը գիւղերը և Օրբա-գիւղ, և մաս մ՝ալ Արաբկերու վարի Տէժտէն գիւղն կը բնա կին, յորոց ոմանը երկրագործ են։ Բոլորն 70—80 տուն։ Ամառը Սարը-չիչէք Գարասու կուգան։ Կրօնն՝ Սիւննի։ Ապրուստն միւս բըրդաց պես է։ Կառավարութեր լստ մեծի մասին Տիւրիկեր և Յնացեալն Արաբկերի կը վերաբերի։

4. Անժմացիք։ 100-150 տուն. գիւղերնին Արաբկերի՝ հողն է։ Ամառը 'ի Սարը-չիչէք Սամատաղը և Էրկիւ-տու կ'ել-Նեն, որ Արաբկերի սահմանն է։ Կրշնն՝ աղանդաւոր։ Ապրուտո՝ Ջորեպան։

5. Սինանցիք։ 50--60 տուն. ՄալաԹիոյ հողն կը ընակին. բաղմաԹիւ մաջի և ուղտեր ունին։ Ամառը ՚ի Սարը-չիչէկ ՉիյարէԹի կողմն կուգան, շատ պանիր կը բերեն որ լաւ է։ Այլ և այլ կողմ ուղտապանուԹիւն կ՚ընեն։ Գրօնն՝ Սիւննի. կառավարուԹիւն՝ ՄալաԹիա։

6. Փէրչիջեանցիջ։ 60—70 տուն։ Կապան-Մատենի և մաս մ՝ալ Քարբերդու կողմերը կը բնակին։ Ամառն Սարը-չիչէկի մօտ Սու-պաթան ըսուած տեղն կուգան։ Կրօնն՝ Սիշննի։ Ապրուստն՝ ջորեպան և հովիւ։ Կառավարութիշնն՝ Մատեն։

7. Ռաշորցիք։ Իրը 30 տուն Մատենի հողն կը **բնակին։** Ամառը՝ Ակնայ իրը 3 ժամ, Մազոնանի գլունն կուգան։ Կրշնն՝ Սիւննի։ Ապրուստն՝ ջորնպան և հովիւ։ ԿառավարութՅիւնն՝ Մատեն։

8. Տրիժանցի ը։ Իբր 200 տուն Արարկերի և Առղավա-Նայ մեջ տեղը կը բնակին։ Ասոնց մեկ փոըր մասը միայն Սարը-չիչէկ ճամատաղը և Էրկիւ-սու կուգան։ Կրօնն՝ Սիւննի. ապրուստ՝ ջորեպան և այլն։ Կառավարու Թիւն՝ Արաբկեր։

9. Նէրվիքեանցիք։ Ցառաջ շատոր էին։ Տրիժանցոց Տետ Թշնամու Թեամբ մէկ մասն այսր և անդր ցրուեցան. այժըմ իրը 50 տուն. Առղավան կը բնակին. երկրագործ են։ Ամառը Սարը-չիչէք Էրկիւ-սու կուգան։ Կրօնն՝ Սիւննի. կառավարու Թիւն՝ Առղաւան։ Ասոնք են որ Ակնայ տանեաց շրթջապատին կողունձն (արտումի կեղև) և ճաղերն կը բերեն։

10. Ըսպահի-ուշաղցիք։ 60—70 տուն, բնակուԹիւն՝ Առղավան։ Ամառն Սարը-չիչէք Էրկիւ-սու կուգան։ Ապրուստ՝ ԵրկրագործուԹիւն, ջորեպանուԹիւն և հովուուԹիւն։ ՉաՆիրն՝ լաւ։ Կրօնն՝ Սիւննի. ԿառավարուԹիւն՝ Առղաւան։

11. Մալիանցիք։ 50-60 տուն. բնակութիւն՝ Առղաւան։ Ամառն ՝ի Սարը-չիչէ ք Խանտիլլու կուգան. երկրագործութեամբ, ջորեպանութեամբ և հովուութեամբ կ՝ապրին։ Կրօն՝ Սիւննի. Կառավարութիւն՝ Ասղաւան։

12. Շալ-ուշաղցիք։ 20 տուն։ Արաբկերի հողն, Տեժտե գիւղին դիմաց գիւղ մը ունին։ Ամառը գիւղերնուն մօտերը, որ Սարը-չիչէքի սահման է՝ վրաննին կը զարնեն։ Ապրուստ՝ երկրագործութիւն և մասն ինչ ջորեպանութիւն։

Ահա այս Քուրդերն որ իրը 1000 վրան կը հաշուուին, վերոյ յիշեալ քաղաքաց մօտ գիւղօրեից մեջ կը ձմերնն և գարունն, մայիսի սկզբեն, Սարը-չիչէ քին սահմանակից լեռները կ'ելնեն և իրննց որոշեալ տեղերը վրան կը կանդնեն, որոյ «Օպա» կ'ըսեն \*). ոչխարները կ'արածեն. պատրաստած պանիրն Ակնայ, Արաթկերի և Տիւրիկեի քաղաքները և գիւղերը կը բերեն իրենց ջորիներով, ու կը վաճառեն։ Ջորեպանները՝ Սևաստեն, Գանկալեն, երբեմն Քարբերդեն, Առղաւանեն և այլ տեղերէ ցորեան կը բերեն, կը վաճառեն։ Կան և ոմանք որ վաճառականի բեռներ կր բերեն։ Չմեռան ոչ ոք կը մենալ լեռներն։

Քրդերը իրենց զդեստն և այլ պիտոյքն Ակնէն, Արաբկերէն, Մալանիայէն, կան ուր որ երնժան՝ անկէ կը հոդան։ Ընդ-

\*) ՏեղեկուԹիւն ունեցող ուրիչ ազդալին մը կ'ըսէ Թէ Սարըչիչէք եկողը Ագուչաղցիք և Սինանցիք հն։ Փէրչիքեանցիք և Ռաչոր ցիք Ակնալ մօտ Չալ ըսուած տեղը կուգան։ իսկ միւս ԷչրէԹ ք Սարը չիչէքէն անդին Տիւրիկէի և Արաբկերի կողմերը կուգան։ հանրապես աներկիող, հուժկու և բաջառողջ մարդիկ են։

Շատերը զինեալ են հին տեսակ (կայծըարով) հրացաններով, ատրճանակներով ու սուրերով, և բաւական բաջասիրտ են։ Տրիժանցի ու ԱՅմացի ցեղերուն մէջ կը գտնուին շատեր, որ պատեհ առնժիշ, հայ Յէ Թուրը ուղևորն անիտոիր կը կողոպանն, ենէ կառավարունենն և րկիշղ չունենան։ Սինանցիք, Մալիանցիք, Ըսպահի-ուշաղցիք և Ռաշորցիք աննաս են, իսկ ճնացեալ ԷշրէլՅներուն մէջ գող կամ աւաղակ բիչ շատ կը գտնուին։ Թէ և լեռնաբնակ և ոչ կիրն, բայց ընդհանրապես հիշրասեր են, և մէջերնին թարևրարոյ անձինբըն պակաս չեն։

Աղանդաւորները իրենց «Ցէտէ»ն ունին որ երբենն կ'այցելէ։ Կ'ըսեն Թէ երբ Ցէտէն դիւղն գայ, ժողովուրդը կը Ներկայանայ և ծնկան վրայ քալելով, Ցէտէին ուսը կը համբուրեն, և անոր շուրջը կը բոլորին որ բարոյական խրատներ կը խօսի անոնց։ Կ'ըսեն Թէ 'ի հնումն տեղ մի կամ գիւղ մի կայ եղեր, ուր Տէտէն այցելելով, որոշեալ օր մի, հաց ու գլիդի բերել կուտայ, հանդիսապես հացն 'իգինին կը ԹաԹխէ, գոր

Լոգմա կ<sup>1</sup>անուանե, և ամեն մեկուն կուտալ որ կուտեն։ Կ<sup>1</sup>րսեն նաև Թէ Քրդաց ոմանց մեջ կայ եղեր խոստովանութեան պես արարողութերեն մնես զոր կը կատարե Տէտեն։ Ցետոյ ավեն ոք իւր կամաւոր ընծայն կը մատուցանկ Տէտէին։ Անոր պաշտօնն ժառանգական է։ Այս Քիւրդը՝ գրեթե ընդհանրապես, ո՛չ ծում ու նին, ո՛չ աղօթ ը։ Եթե ժողովատեղի (ճաdh, մըկիթ) ունննան, առ երեսս է. վիայն, ամեն տարեդլիսոլ Մուհարրէ. **մին**, 12 օր ծոմ կր պահեն, և <sup>1</sup>ի լրման ծո**մին, զ**ոհ (գուրպան) կ'րնեն. 12 տեսակ չորցուցած պտղովը ապուր մի կ'եփեն.սորա «Աշուր այի» կ'րսեն։ Մուհարրէմի հանդեսներն 'ի կ. Պօլիս Պարսիկը ևս կը կատարեն. զի ասոնց մեկ մասն Սիշննի և մեկ մամն աղանդաւոր (շիա) են։ Իսկ սիւննի Քրդերն իրենց Իսլամական պարտաւորութիւնըն կը կատարեն։ Անգամ՝ մի Թուրք դատաւոր մի, իբրև զուարճարանութիւն, Քրդու մի հարցուց. «Սեն Իսլան միսըն, Քուրդ միսըն». (Դու Մահմետականն ես թե Քուրդ ես)։ Քուրդն որ՝ հաւանականաբար՝ այսպիսի հարցում մի արդեն լսած և պատասխանն սովրած ըլլալու էր, անշփոթ պատասխանեց. «Էլ Հեմտուլյան (Էլնեմտիւլիլլան) միւսլիման ոմ, Քիւրդլըդոմաս զիլատէ» (փառը Աստուծոյ, **Իսլե**ամ`եմ, Քրդու Թիւնս ալ աւելի կամ առաւելու (Ժիւն 114): ԵԹէ ստոյգ է, հետաքրքրական է Թէ, Քրդերն՝ գրեԹէ ընդհանրապես՝ բաղաբական լուրեր շուտով կը ստանան և կը հա. ղորդեն միմեանց։ Թէ ի՞նչ կերպով, չգիտեմը։ Հետաքրքրական 5 un le 'h strancum singer mun le fuout jeher 500 penge le Թերևս աւելի հեռուն դանուող Քրդու մի ընկերն բարձրաձայն elo io, h with he hwith, h chaits, had win fits what had իրն ի՞նչպես եղաւծ և այլն կը հարցունե, ընկերն ալ կը պատասխանել և կր հասկնանւ

Իրենց մեջ սովորու Թիւն է որ երբ մեկը այլացեղ Քըրդու մի հետ Թշնամանայ, բոլոր ցեղն Թշնամւոյ և ցեղակցացն հետ կը Թշնամանան, իրարու ջորի, ոչխար և այլն կը գողնան և մինչև իսկ սպանու Թիւնը տեղի կ'ունենան, Ըսպանելոյն ցեղն ալ 'ի վրեժիննդրուԹիւն, հաւատար կամ աւելի Թուով մարդիկ կը սպաննեն Թշնամիեն։ Կ'ըսուի Թե Ազուշաղցիք և Գարաժորցիք, երբեմն աքաղադի մը պատճառաւ Թշնամանալով, վերջապես Ազուշաղցւոց ցեղապետն կը ղարնուի կը մեռնի, սոքա ալ միւս կողմեն մարդ կը սպանեն։ Այս ԹշնամուԹիւնք երբեմն տարիներ կը տևե և յետոյ, քըրդական սովորուԹեանց համեմատ, կը հաշտուին։ Երբեմն հակառակորդ ցեղն ուրիշ ցեղ մ'ալ դաշնակից կ'ունենալ. կլ, պատահի նաև որ միևնոյն ցեղին վերաբերող Քուրդը իրենց մեջ Թշնամանան։ Կ'ըսեն Թե, 5—6 տարի յառաջ Գոմրաշցի հսկայ և քաջ Քրդու մի աղգականներեն միսյն աղջիկը՝ նոյն ցեղեն ուրիշ Քուրդ մի առևանգած ըլլալով, առևանդողաց գիւղին վրայ չարձակեցան, պատերաղմեցան, և աղջկան հայրն ղարնուեցաւ մեռաւ. միւս կողմեն կին մի միրաւորեցաւ, Թէ և ոչ մահացու։

Շատ Հայեր պատմած են, Թէ հեռաբնակ և մերձակաչ բոլոր Գրդերը համակրու Թիւն մի ունին առ Հայս։ Հայն կլրնայ ընտանեաց մէջ երԹալ, և կանայը երևան կ՝ելնեն։ Սոյն Թոյլտուու Թիւն կամ վստահու Թիւն ըրիստոնէից համար է միայն։

Բոլոր Քուրդը իրենց տղաչըլ կը Թլփատեն, և իբրև կնչանայր կամ սան, Քիվբաց—ի սովորուԹիւնն շտտ յարգի է իրենց մէջ։ Կնչանայր Քիվրան Երբենն Հայ մը կ'ըլլայ, որ փոխանորդ մի կ'ընտրէ և Երբենն անձամբ կատարելու ալ ԹոչլտուուԹիւն կ'ըլլայ։ Քիվրան զԹլփատելի տղան գոգն կառնու, և Թլփատողն՝ ըստ օրինի կը Թլփատե։ Քիվրային պարտաւորուԹիւնն է Թլփատելոյն նանդերձեղէն ընծայներ տալ և ճակատն ոսկի կախել։ Թլփատելոյն նայրն կը փոխարինէ ձի, գորգ, կապերտ, կով, ոչխար և այլն տալով։ Քիվրան երբ ուրիշ անգամ այցելէ, ո՛չ միայն Թլփատելոյն ընտա նկքը այլև Օպային գրացիջն իսկ կը յարգեն. Թլփատելոցն ամուսնուԹեան ժամանակն ալ նոյն Քիվրան է որ ընծայ կը առածի և կը ատանտայ։ Գիվրա անունն այնչափ յարգի է որ երբ շուկային մէջ Գուրդ մի կանչել ուղեն Գիվրա, բիվրա կ<sup>չ</sup>ըտեն, իբրև շտիրելի բարեկամ» և այլն։

\*) Ըստ տուակին, երբեմն ցորեանն լԵրուսազէմ ուխտի եր-Բալուն, կ՝աղառնե զգարին հացի, ապուրի ևալլ պարդ ուտելեաց համար իւր տեզը բռնել. երբ գարին կը հարցնէ նէ «Նմորեղէն կեբակուր ալ բլլանն, »Չէ, կը պատասխանե ցորեանն, Նաքութ էչչէ մի խառնուիր» (զի անկարող հս առ ալդ).

82. While funcinci (Sopp) pup it & Aquer, 40 fub jop չեն կրցեր հանել։ 84. Խեն/ծն է գացեր հարսնետունը, աս աղեկ է ք'զ մեր (քան զմեր) տունր։ 85 Խժոտ ընկողը (ընդոյդը) մախթով կը փորին։ 86. Varan wincht jace sacht, Swump fallent and sacht 87. Woupp of the shipper ship (quig) une interior 88. Խօպքր՝ մեծին, ջուրը՝ պղտիկին։ 89. Jagen (Swup) 4kgfir (4kgh an) 1hr (1hmp) quus 90. Ծուռ Նստինը, տրրուստ (ուզիղ) խորըԹինը։ 91. Կակղնաս չօրպասի (ապուր) Թող ըլլալ. \*) 92, Կամաց երթաս, կամկար կ'ըսեն, թեղ, թեղ (արագ) երիժաս շրնետա կ'րսեն։ 93. Կատուին փինին դեղ ին րսեր, խորունկ է Թաղեր։ 94. Կատուն բացախ չի խմեր։

95. Կիշեռած քարը չի պակսիր։

96. Կոյած (կոտրած) կամ կրյած (կտրած) հացը չի կտցուիր։

97. Կովուն տերը ավեն օր մածուն չուտեր։

98. Կուշտն ի՞նչ գիտէ Թը (Թէ) աշխարհս անօԹի կայ։ 99. Կուտը (հատիկը) կուտին օգ է (օգնական է)։

100. Հա (այո) ըսէ ու կաւ քսէ.—(Եթե մեկը՝ հակառակ կարծիք մը կը յայտնէ՝ մի՝ հակառակիր, այլ գործդ շարունակեւ

101. Lusfi Jur, yumacht chfing put:

\*) կ՚ըսեն թե ժամանակաւ թեուրջ մի աղջատիկ չալ մարդու մի տուն կ'իջնե և կ'սկսի զանազան կերակուրներ ուզել. տանուտերը «Աղա, չունիմ» կ'ըսէ. բալց հիւրը կը պնդե. մարդն կը պատասիսնե թե «կակղնաս չօրգու» կալ, եթե կ'ուզես՝ բերեմ։ Երբ հիւրն լաւ մի կ'անօթեննալ՝ կ'ըսէ. «կակղնաս թող ըլլալ, բերե. Նուտերն ալ իւր պատրաստած հասարակ ապուրը կը բերէ.

- 208 -

102. Հայուն հարքի խելքը ինծի պիտեր։ 103. Հաստո ու բարակ մեկ գին է, վայն եկեր բարակ Juitanphe 104. Հարուստը խրատ ին հարցեր, իր կալուն վրայ է կալաձեր (կալաձայ ընել, գրուցել)։ 105. Lupnenne Marth, que lo beens, way wone Marth մարդ չիմանալ։ 108. Հարուստին հաշը ածան կուլլի, խորոգը կարգը**ծանս (Ոմանը կը լաշելու**ն) Շունն՝ հաչան, կատուն՝ dելան։ 107. Lurufin uncan ulquite 4: 108. Lugi 'h Sapal' (Sapli) ungut 'h hapali \*) 109. Հայ ու գինի ունիս, իմ սէրը դուն ես։ Հայ ու after saches he gle gante hes 110. Հաւր իր առջի ածած հաւկթին վրայ կու խնդայ։ 111. Lung gorp you fully Unmarwo you twift: 112. Հաւ մի չի պահողն հաւկիթ մի չարժեր։ 113. Lonary action popular for the former 114. Հերս ելիր (եթե բարկանաս) բեար (շահ) արե. Stopa top (totand) quere (four) d'uters 115. Հերջես (ամեն մարդ) իր Բավլին կուլալ։ \*\*) 116. Longto your por sh you, osp upwind (yound) young 117. Հօրբրոցվեն կուղայ՝ հօր հոտիկ, մօրբրոցվեն կուyung' son Sounfils

\*) Ո**մանջ՝** «Հարսն 'ի հորուն» կ'ըսեն, և ոմանջ ալ կը լաւես լուն «հող դրամն (այսին ջն թաղման ծախմս) գտուն ճօթուն»։

\*\*) կ'րանն թե երբեմն կապան-մատէնն այր մի (մետաղի) գիչելով այն գործաշարներեն չատ մարդ մեռած է, որոց մէջ մի բանին անաշանջն «Կավլի» են եղեր, Ուղևոր մի տեսնելով որ մի բանի տեղ «Գավլի» կ'ողբան՝ կը հարցունէ, թե ո՞վ է այս անձն. կը պատասխանն թե մի բանի հատ են և ամեն տուն »իշր Բավ- 210 -

119. Ճնճողին (ճնճղուկին) ըսեր ին Թը ուղջդ ինչու բարակ է (կամ կարմիր է). ըսել է Թը «ցրտէն է».—Ես բեղ ամառն ալ տեսայ։

120. Մաման բան կու տայ, ետև Հան կուտայ (նենդամիտ կամ մեծ մարդիկ երբենն նուերներ կընեն, յետոյ կրկինն տուժեր կուտան)։

121. Մանե, մանե, ման խանծուն, մանը կանե քեզ խանծուն։

122. Մարդն ի հալաւը, էչն ՝ի փալանը (համետ)։

123. **Dw**p<sup>w</sup> (*þ*) 4wg, n. m<sub>2</sub>wg; (*þ*) 1wg;

124. Մարոնցս տնակն հեռուն պիտեր, պարծենալու ալ ի՞նչ պիտեր։

125. Մար (մայր) պիտի ու բերան չի պիտի։ 126. Մեծ կատուին խաղ չի վայելեր։ 127. Մեծ պատառ կեր, մեծ խօպը մի' գրուցեր։ 128. Մէկ մ`ալ հարս լընիմ (լինիմ`), կըկըդ տի նստիմ։ 129. Աստուած մէկ աչբը մեկալին Ջահտան (կարօտ) չանկ։ 130. Մէկը մեկին հողէն (վիճակէն) չի հասկանար, կէտ գիչերին ժամ կու կանչէ։

131. Մ*էկը վ*էկին սատանալ, վէկը վէկին ջահանալ։ 132 Մէկ (մարդ)կալ հազար կ՝աժէ (կ՝արժէ), հազար կալ,

**մեկ մի** չարժեր։

133. Մ'րսեր (գել խօպը) ուր չի լսես (փոխարէնն)։

134. Մի ծեծեր երկըրի դոնակ, կու ծեծեն թուկին դրթնակդ։

135. Մինչև խելօբը մտմտայ, խենքը տղոն կու կարդէ։ 136. Մինչև հաստը բարկընայ (բարակնայ), բարակին հոգին կ՝ելլէ։

137. Մինչև քաջուն առուն ջուր գայ, գորտան աչուրն դուս կուգայ։

138. Մինչուկ (մինչև) գլխուս կապելը սորվեցայ՝ երիկս alung: 139. Thur pyrate sh quamps 140. Մ'ուղեր ատելուդ (ատելիիդ), կուգալ սիրելոյդ։ 141. (Ոմանը քՀարմնացուն) Մօտեն չեն առներ Թր կրս-Spome t, կեր Pour Atranti կուրերին, կեսը տարած է։ 142. Նաչարը (անկարողը) կ'ուտէ դանճար (դանջար) 143. Նատիկը մանիկը պալոգ մ երկութ, թան զուր կամ **քանդ** ուր բերինը նսապար (լուր) մ նրկուը։ 144. Շանը պոչը 40 տարի մենկենեն (մամյոլ պես) դնես, sh mpppumpp: 145. Շերեփն ոսկիէն լրնի, մարդու (այյոց) դուռ կերթժայ։ 146. נגיף כלי ל, שרארך קלי לי 147. Tonton you Suspit, when yo further yo promotion 148. Շունը շանը Հանին (Հայնին) կ'երթայ։ 149. Touto 2000 April 2000 Southers 150. Touto 2500, Surpute 'highunenes 151. Շունն հայելով գալ (գայլ) կու բերէ։ 152. Շուն ու գալ (գայլ) լրնիս, մար չիլլիս, փատի հար լ**բեր, հար** (հայր) չիլլիս։ (Մեծ է կսկիծն ծնողաց՝ զաւակացրն Թշուառու Թեան ժամանակն)։ 153. Ողջը գլուխդ աւհտարանին տակը մի' դներ։ 154. Ոսկի գօտևորը մարդու դուռ է գնացեր։ 155. N' fith wong when he helt wong when 156. Ո'վ իր հայը (գոյ.ը) շատ համարի, ը'ղայլունն (ըան **զայլոցն) [Ժեղ** (կանուխ) կու հատնի։

157. Ո'վ աստի աստի, աստովողը (փորու աին ունեցողը) Թաղ չի աստի։

158. Ո'վ կերեր՝ առղան (ակռան) առեր, ով չէ կերեր՝ մտացն է ուղեր։

159. Ո՛վ որ սուրբ գիտես, խաչն անոր ծոցուն կ'ելլէ։

160. Ո' վ չուսի (ճարպիկ), ան կուշտ։ 161. Augu (yud umn un afti) bob f ( ugh f, y, grug-Ubpart your Jugger 162. N'pp Somet, App Guerometes 163. Ո'րն ուր չուտիկը, ան տանը չունեւորին։ 164. Apral's yours phop and apples, aprals the same two րուխին (արեխին) չուան։ 165. Ուզան (խնդրող) բերանը կթժան կով մի կարժէ։ 166. Ուզողին մեկ երեսը, չի տուողին երկութը։ 167. Reg (ng) page wwarh, neg waarpath part funing Annah (Awnwah): 168. Ուչ ուխտին մում խոստացիր, ուչ չօլուխին (տղա-·լին) բան (ուտելիք)։ 169. ALS WWWWWAP REPUBLIC, ALS WIGP EPHUN 170. Ուտին որդիքը, վճարին հոգիքը։ 171. Acomp the aport, apophage about 172. Չի լացող տղին կաթ չեն իտար։ 173. (Զաւակ) Չի կալլողը (չունեցողն) մեկ տերտ (վիշտ) dh netifi, ywyngp Swgwps 174. Չի համրած ոչխարը գալը կու տանի։ 175. Պարը մանողը կա. Ճարայ (կ'երերայ)։ 176. Quitung So-par swatnahp: 177. Ջորիին հարցեր ին Թը տատդ (հայրդ) ով է. ըսեր t for the nugher (ptrhu) t: 178. Ջուրը գայ, ջաղացն աղայ, խեննեն ուտէ, ելլէ խաղայւ 179. Ջուրը չի տեսած՝ ոտքը մի՛ չրլպրիսցներ (մի՛ մեր-՝ կացներ)։ 180. Ջրին ըռատնալը կրյրելու նշան է։ 181: Սևր սապունն ինչ անե, խենթեր խրատն ինչ անել 182. Սիրտր սիրածն եկեղեցին պսակած է։

- 213 -

183: Սիրտը (որգեկորոյա մօր կայլն) 40 գամ (բևեռ)՝ կը մխուի. մէյմէկ հատն ելնելոմ՝ 39ն կելէ, մէկն կու մեայ։ 184. Սոխը ջանի կէդուես, կու կեղուուի։ 185. Սոխ չեմ կերեր ուր սիրտս երի։ 186. Սրտէ 'ի սիրտ ճամբայ կայ։ 187. Վատ պարտկանեն հող ու մախիր։ (Անշահ բաներ պիտի առնես այնպիսիներէ, կամ անշահ ալ ըլլայ, առ, խալսէ)։ 188. Վէգ ձգելով (գուշակու[Ժեամբ) աղան չի գար։ 189. Տան-տիկինը գող կ'ուլլի։ (Տանտիկինը խնայողու-Թեամբ կը վարուի. երբենն մաս մի կը պահե և պետը եղած ժամանակ երևան կը հանէ)։ 190. Տատը (հայրը) տղուն եզի (այգի) մ է տուեր, տղան տատին կող մի (ողկոլց մի) խաղող չէ տուեր։

191. Տերտեր եզի գեղն ինկի, երբ ուր չեղաւ գևան ինկի։

192 Տեվեին (ուղտին) ըսիր ին Թը ինչու շրլլիդ ծուռ. Հ. ըսեր է Թը որ տեղս արուստ (ուղիղ) է։

193. (Աստուած) տէրտը՝ (վիշտը ևայլն) բաշողին, ըաթին՝ չափողին կուտայ։

194. (Փոխ) Տիտաս ու (դրամը, կամ վաճառքը, և երր ուզես) գէշ տ<sup>3</sup>իլլիս (տի լինիս), մի տար ու գէշ եղիր։

195. Տունը չի կայ Թան-ջուր, ++++ (ետևը) կախել է Հանչուլ (ծոպի պես զարդարանը / 1 ե ողեր)։

196. Տուր (կամ) տամ ունևորին, տամ չունևորին, տամ ոսկի գծաևորին։ (Աստուած ինձի առատօրեն պարգևէ որ աժենուն ալ տամ։ Կանայը ոմանը պարտէզն հունտ սերմանելու կամ տարեկան խաւուրման Թակոյկն լեցսւցած ատեննին՝ իբրև բարեմաղԹուԹիւն կ'ըսեն. «Տամ ունևորին, ևայլն»)։ 197. ծաւը լեռներուն ին տուեր, չին դիմացիր, առեր

առարուն ին տուեր։

198. 8որենին ծառը պղտիկ է, ամմա (բայց) իլնողը կու կատրան։ (8որեննն առևտուրնն միսասը մեծ և կործանարար կը լինի)։

199. Ցուրտը խլլոտին մահանայ (պատճառակը) է։

200. Azuda, damla uh aml.

201. Քանի հագնիս ատլաս ու խաս (կերպաս), կինէ -ատմես (վերպաս) կ՝ըսին Լորտուենց (միջին կամ աղջատիկ ընտանիք մը) հարս։

202. (Պէտը հոգացած) տեղդ մարդու մ'ըսեր։ 203. Գելը դեղ գիտնալ, իր գլխուն կ'անէ։ 204. Գիչ բեռցնը, Թեզ (շուտ) դարձիր։ 205. Գու մոմդ ու խունկդ բեզի՝ մեր ժամը մի՛ գար։ 206. Գուրդը տեսնես՝ հաց ուղէ, որ ան բեզնէ չուզէ։ 207. Գուրդը բէնը բառտուն տարին կը հանէ։ 208. Օմն ուր (որ) օմ է՝ ջուր խմած տեղը (մարդ) չի

484p (hum][24]):

209. Ստար աչըն ուր լուս կալլէ (ունենալ)՝ ան հերիը է աս տնուտրին (աշխարհիս կետնչըին)։ — Ստարին բարեկամութեան վրալ մի վստահիր, եթե գտնես բարեկամ մի, որ Նուազ կարող բայց անկեղծ լինի, այդ իսկ բաւական է այս աշխարհիս մէջ \*)։

**ԳL. С.** 

## **ԱՍԱՑՈՒԱՑՔ**

1. (ԵԹՀ չի գայ ևայլն) Ազռաւները սև՝ տի հագնին։ (Գրու հոգ է)

\*) Կալին մի քանի անհամեստ առածներ ալ, զորս անպատ– Համ համարեցի գրել։ - 215 -

2. (Junto wate) Ugplan Bugano tato to - Fains antite guo qahumu Swahp querquerate fi 3. U thus, que (que j) thus. had que thus, Jupp hyme putrind (fumpting finege): 4. «Uihsu harimimu and changes and the second construction of the second construction of the second րին։ --- Մինչ մեկ դժրաղու Թեան վրայ կը հողայինը, առելի des չարիք մը պատահեցաւ։ 5. Ալինը (Ալնայ) մեջ՝ ըար մի տնկեց։ Մեծագործու. pphi of prous 6. (այս դէպ.er, ևայլն) Անենի օղ Թող լրնի։ 7. Աննճուիդ կամ ակօնճդ կրլէ ետիդ դիր։ -- Չես լրսեր, "phą կամ ձեզ համար ի՞նչ բամբասանըներ կ'ընեն։ 8. Ակնճուին (ականջներն) երկան էլ 9. Ակնճուին կախեց։ 10. Ակորիկ մինել:---8երեկն կամ սովորականեն դուրս Sundianon Sunz d' puli ; 11. Uyawy apully (uk qulk): (Sayu, Suulphak uj unug, Նեղու [ժետնց կամ Նախատանաց)։ 12. Ակռայիս տակը (սխմելով) արուն Թօր եղաւ։--Երկար համբերեցի, որպեսզի երեսը չի զարնեմ յանցանքը։ 13. Ulawy low propagates 14. Ակռայն (կամ) առղայները թափեր է։ 15. Ակռայները ճեպս (գրպանս) է։ --- Անոր նենգու [Ժի.-Նր գիտեմ. չի կրծար ինձ դէմ խօսիլ կամ քնասել։ 16. (wyu huz qapoti ywa wustu) Uyawa wate ti 17. (Junio membriling) Upamu, yul, wham for Sulp enfe Sintel; 18 (այս ինչ ղարդ ևայլն) Աղբարն աղրօրը այս դինը 5 fr anau pr

19. Աղ թերել գնացել է։ ..... «Մեռեր է» (անարգական է)։

- 216 -

20. (win pris durawap) Ugpop ute Smi t: - Uwawap of np sh dwamnchp, bpywp workt yn stowgi 21 Ugp sop 5: - Luparum le pupkykyfy 5: 22. (qubile for de) Unto to mutile to many to 23. (www.g.pp) Un ne incp bywe. ywit Unneiner ne աղձրմուր եղաւ։---(խնջոյից) Ուրախութիւնը դադրեցաւ, տակն ne dpws bqwes 24. Ամենդ ի վրայ եկէք, ազուորին կապան կարեցէք։ 25. Ամեն թատան գիծ տի դնինը։ 26. Udbunt jo, jo, fus up jo, jos - Leuf yeur ungter ձևանալով ամենը կը խարես, զի՞ս ալ խարել կուզես. զիս որ Aphontal files pipuing, your to undertrange quein (10 10 poter). 27. Udarp qualu (quarle) 4: 28. Ulanp terte 4: 29. USympe Jack & filipr:- (87/ 5, 1940gus 4): 30 Udiyta Som Guntats-26 number, qque zuenp ts 31. (վասն անձի կամ իրի) Ամպը չէ գոռացեր վրան։.... Bupbeluvine for the same for the same 32. Ամպի պես կու գոռար։ — Մեծափարթժամ հարստու-Թիւն ու ազդեցութիւն ուներ։ 33. Uspe ('eut, et'e \$445 % (quummute) (nr. euzte **Կարդալ չգիտե, կամ գիտցածն աննշան է։** 34. Us when the ship by up - Uju pomul het pup for and խեսանի մարդ չերլեր։ 35. Ան գեղն ուր աղա չի կենալ, կէչիին (այչ ին).... աղա կու կանչին։ 36. Ան ժամանակները տեվեն (ուղտը) խուռմալ (արմաւ) կու Թրքեր։--Այն ժամանակներն աժնուԹիւն, առատու-Թիւն կար։ 37. Անլուսնկալ գիշերը կերնժամ հոն։ — Կուզեմ, պար. տաւոր եմ այցելել, բայց զբաղեալ եմ ևայլն։

39. Անձը դրեր անձին կու տքայ, ինք (զինքն) Թողեր երկիր կու հոգայ։ (Ոմանք կ'ըսեն, տիկը դրեր անԹը կու որայ ևայլն)։—Խնքն ողորմելի է և զայլս կը հոգայ։

40. Ան շանը ան շարականը շատ է։

41. (խնդիրը վեծը) Անուշ տեղը կապել։

42. (q) Uzhumper Snepr lagnegar 4:

43. Աշխարքն աշխրքով ըսին (Թէ մ՝ընէր), մաիկ չըրաւ - Բաղմաթեւ մարդիկ ըսին, մտիկ չըրաւ։

44. Աշխարջ ուր վրայ գայ (չեն կրնար համոզել, կամ, չեմ ընդունիր)։

45. Աշխարքս Հան կրյեցաւ, կամ՝ Աշխարքս պանիր, խաղող, ևայլն կրյեր է։

46. Այսարքին վրայ հեծեր է։ Աշխարհային ո և իցէ գործ կամ դեպը չի հոգար. միշտ գուարն է։

47. Աշխրթով եղաւ (այս ինչին այցելուԹենեն ևայլն)։ ---Շատ ուրախացաւ (այցելուԹենեն ևայլն)։

48. (վասն կնոջ) Աշնան տան տիկի՞ն տիլլի։— Ձրմրան և ըստ մասին գարնան ևայլն պարէնը զոր աշունն կը լնուն, դեռ Հմեռ չեկած պիտի սպառէ՞. լաել է որ տան-տիկնու. Թիւն չգիտէ։

49. Աչիցը արուն կու կաԹէ--Երիտասարդ, Կորովի է։

50. Աչիցը որդը կոտրել։--Երկիւղ աղդել։

51. Աչիցը ջուր տալ։—Խօսեցեալն կամ նորապատկ ամուսինն տեսնել։

52. Աչիցս լուսուն գնաց (այս ինչ իրը)։ — Ակամայ տուի։ 53. Աչուիդ չոր իքեն (մինչ չոր է, ծեծ կերած՝ լացած չես) այս ինչ իրը տուր կամ գործէ ևայլն։

54. Աչուին դուռն ի կուրս կուդայ։ .... Հիւանդութեննեն, գութելեն, հաղալեն շատ կը նեղուի։ 55. Աչուին ցից, thugs -- 1. Կոկորդը բան մր thung 56. Usurnen wy, uneprenen (unge) wy, Unument Ap **մե**կին զորմի։ 57. (ատ դործեն ենքե այնքան մի շահերի) Աչքդ կու հաներլ — Ինչ քնաս ուներ. չե՞ որ դիւրին շահ մեր։ 58. Usekount inc byto 5: -- Superisting to the 59. Աչըր խոշորնալ։ .... Գործի մը, աշխատութենան մը և այլն մեծու Յենն, ծանրու Թենէն վախնալով դժուարանալ։ 60. (ուն վաճառըն ու մեր) Աչըր բաշեց։ — Այս ինչ նենդեալ վաճառը արժելողը կամ բարձր գնով այս ինչին վաճառեց։ 61. Use fught 1: 62. Use neuf ne unbuible sneufs 63. Աչ.ը չունիս. ը[Ժի ծակ ալ չունիս։ 64. Աչ թս ճամրան մնաց։ ըրն ստանալ, զի նոր սկսար։ (Կ'րսեն թե մարդուն մեկր՝ խոտր դմակով ոչխարի մր բերանդ տայէն ըիչ մր վերջը Հեռ. .pp դենակը տարած է տեսնելու համար թե խոտը ուտելէն 1 վեր մեծցած է)։ 66. Ug pungen uf t: 67. Առաջ փախչող է։ — Ժրարար կ<sup>դ</sup>աշխատի և Կլու. Թեամբ կը ծառայէ։ 68. Unwy pp for the gwith - 4p Swingt, wwet for aft funumutuning qual Spanyarphings. 69. (գիտես Թր) Առաջըն ինկեր էր։ — Օրհասական էր

գոգցես մահուան վտանգին կը դիվեր։

70. Առնետի տնկած ինկող (ընդոյզ) է։ -- Հայր, մայր, աղգական չունի։

71. (վասն պատանեղ կամ երիտասարդի) Առնողը 3 օր տի խնդայ։—Դաժան, անառակ մ՝է, հետն ամուսնացող աղջիկն եթե երբէը երջանիկ օր մի պիտի տեսնէ, այն ալ առա-

queunto unany upop mobile. (gh unuuh 3 opt ubought pp-Նասորու Յեսմս դեռ ծանօթ չլինելով թերևս ուրախութիւն d''qqwj):

72. Առանց դմպուկի (առանց Թմրկի) կու խաղայ։ 73. Ասեղը շուղը կ'անե (եթե ուղէ)։ -- Կրնալ պատեն ժա. մանակ մի գտնել և ուղած տեղն երթայ հնարր գտնել ևայլն։ 74. Unty Later fur sty fiture

75. Un fitos anch & bylen gifuncus

76. (Sutophpaf, muto lewijt pungquume (Bhuto 142): Un **կարաուի, ան գ**տնողչէը կուտան։ — Սյս ըան զայն շատ լաւ է։ 77. Ungp (unmap) incubility isopt (such) to -Baget pungղաւոր է։

78. Ապր (աստղր) ցած է։ -- Դժրաղդ է։

79. Ասված (աստուած) Արտը նայեր, փուշը տուեր է։ ~ 80. (մոլու թեան մի կամ անհաճոլ գործի մի նկատմամբ խոսողն իւր համար) Ասված գրեր է նր՝ աւրրէլ--Ալդ գոant Bhis, and , ննամու Bhis ևայլն չեմ ուզեր լնել, Ա. առանծ չրնել։

81. (երկար ատենե 'ի վեր տառապող հիւանդի համար) Unduro hopper purpenge defe mug:

82. Աստուծու միայն օրը։ - Հանապաղօր։

83. Ատ սերը շատ մարդ է կշտացուցեր, վրայ սալունն է կրկրդցուցեր։ — Մի կարծեր Թէ այդ սէրն հնայուն է, այլ ինչպես բաղումը դու ևս պիտի լոդնիս, լագենաս։

84. Ատ սերն ուր աշխարը եկաւ, ադ սիրուն վարպետր **մե**կը էիկը։

85. Աա փատե, (սահե, անցիր), մեկալը չալե (Նուագե)։ --- ALphy 4kpm put, lunpsE:

86. Up to (dhyle) ale ywone & wighters

87. (այս ինչին հետ) Արտեր ջուր չօսնիր (չանցնիր)։ --Baget Simbophil, uppad bilgs

88. (ի գովեստ) Արարատ աշխարքը (Նմանը) չի կայ։— Աշխարհիս մեջ Նմանը չի կայ։

89. Արևը քարին վրայ է (վասն անձի)։ — Ծերացեր է, մերձ է Դի մեռանել։ (Երբ երեկոյ ըլլայ՝ արևը Ակնայ արևմտեան լերան ապառաժեայ գագանժեն կ՝անցնի և իբր 2 ժամ յետող մարը կը մտնէ)։

90. Արծել-Ընկեր մի ճամբել պատրուակաւ մի։

91. Upneto populo f: Unen dusanna f:

92. Արուն ելլելիք տամարը (երակը) գիտէ։—Գրամ եայլն ստանալու համար գիտէ, Թէ որո՞ւ և Բնչպէս պիտի գիմէ։ 93. Արունը կու ցողայ։—Աղջատ, խղճալի ողորմելի է։ 94. Արունը կու ջաշէ (արենակցուԹեան բնազդմամբ

կը ճանչնան կամ ճանչցան մեկզմեկ)։

95. Արուն կը կըլկըլցնե (կը տանջե)։

96. Արուն կու հոտի։ — Այս ինչ տեղ աւաղակ ևայլն կայ, սպանութթինկը անպակաս են։

97. Արուն հաշի պես կու դողալ։ — Սարսափահար կը դողայ։

98. Ափդ աղնծով տի լեցնի՞ն։ — Կարծես Թէ առատօրէն տի վարձատեն դջեղ բու աշխատութեանցդ ևայլն համար։

99. Ափ մի ծաղկով տուն կու պահեւ —Ամեն բարեշը լի տուն կը պահեւ

100. Աւլեր ու աւելը կախեր է։ — Տունն ոչինչ Թողած է, բոյոր գույքն տարած է։

101. Բալլին (բանալին) (յ)իս, ու կղպաբը բեղ։ –Այս ինչ դործն անկանոն, անվստահելի վիճակ մ՝ունի. կամ, անունն իմ վրայ, պաշտօնը ուրիշին վրայ։

102. Բամպակն երդիքն (տանիք) էղներէ կամ էղնած է։ ---Թե[ժեամիտ է, կամ, սնանկանալու վրայ է։

103. Բան լաոզին բերանը կու ծռի։—Այս ինչի մասին վատ ասելը ղրպարտութիւն է։

104. Բան մի է կ'եր Թայ, Թող տուր ուր եր թայ- Կարգ,

**կանան չկալ. ս**պասնլու է տեսնեմը ննչ ելը պիտի ունենալ։ 105. Բարև սուողին էշը կու սատկիլ....Այն ինչ մարդն und nudutes sup 4: 106. Բարի ծաղիկ (սովորարար, պատանեաց և երիտաապրդաղ համար հեղնարար)։ -- Անառակ, անրարոյական։ 107. Բարի՝ ուր հացը կնրիժալ, մենք ետրւէն։ Մեր այս սխալ ընթացքին համար չէ որ յաղ քատութիւն կը դի-Jules 108. Բարձ տելի (իրը րարձ) բէօշէն (սենեկին վերի 4ngurp)ին դրեր։ 109. (անոր) Բարով լսողը 7 անդամ Էջմիածին պիտի .Ir Jug ulipun h: -- Շատ չար անօրեն ևայլն է։ 110. Բացուեր (ուր, որ) հով բանիւ—(անարդաբար) Որով- 🔪 - Anole ene perter and a second and a second and a second and a second a s կամ կը Հանձրացնես, գնա ասկեւ 111. Fbn\_ pnubg: 112. Floren outfo & put ne quint .-- (wign fine that the base 113. Բերան բերնի ին տուեր։ .....Միաձայն, համախոհ են։ 114. (գործը) Բերան է եկեր։--Լրանալու, լաջողելու Jpmg 4: 115. Բերանը բաց է։ — Խորհրդապահ չէ։ 116. Բերանը բնառել։ 117. For put p for the Star Style files of for the start we **Նուլսը կրսե, կարծես** Թե արատուած է։ 118. Բերանը լեզու դրեր ին (հրահանգած, խոսք սովւ «Հերանաներ» 119. Բերանը մեղրը բաշել։ Հրապուրել, շահեցունել, - ասկաւ մի յեսող միսասելոյ կամ շահածին կրկինն անկե շահելու **Դոպատ**ակալ ւ 120. Բերանը ոսպը չի Թրջիրդ-Նսածը իսկոյն կը խօսիդ 121. For puting in pugar hos

- 222 -

122. Բերանդ սեւր կար։ Ըսածդ գուշակածդ կատարեցաւ։ 123. Բերանը սրբեց։ Ուրացաւ, չգիտել ձևացոյց։ 124. Բերանը փոյրազին (հիւսիս կամ՝ հիւս. հողմ) է տուեր։ Անգործ կեցեր է։

125. Բերանն, ի՞նչ կուտես։ — Հարուստ են, միշտ համադամ կերակուրներ կուտեն։

126. Flow Sale :

127. Flowbu bobgues-Uju fils anosti fumunebgugs

128. Բերանս մաղ բուսաւ։ —Շատ խօսեցայ, յորդորեցի, բայց մտիկ չըրաւ։ Բերանս... (ո՛և իցէ իր մը խնդրուած, առաջարկ ևայլն) բուսաւ, շատ ըսի, առաջարկեցի, կրկնեցի՝ մտիկ չըրին։

129. Բեր հաղար Թեղնիք ուր, դնէ հաղար բերնի։ — Խօսբըն որ անդան մի հասարակու Թեան բերանը ընկնի՝ անկարելի է զայն ծածկել։

130. Բերնին համը աւրեցաւ։ — Նախկին հանգիստ կամ գուարԹ վիճակն չունի։

131. Բերնին հոտը ջաշել։ Մէկու մը ծանր խօսքերուն Հանձրու Թեանցն համբերել, լուծը կրել, ներկայ կամ ապագայ շահու մի համար։

132. Բերնին պատառը չէ։ — Կարողութենեն վեր է։

133. Բերնիս պառկեցաւ։ — Հաշակիս եկաւ. համողուեցաց Թէ կր լաջողի, լաւ է։

134. Բերնովը խուշ (Թռչուն) բռնողը (չի կրնար շա. Տել)։--Ամենեն ճարպիկն անգամ (չի կրնար զայգ)։

135. Բեռ մի բամպակը բերանը չի գոցեր։

136. Բիր Նետել (երլԺալ)։—Մէկու մի երլԺալ ծանրա-Նալ, Նպաստ խնդրել։

137. Բոշային պագ մի տի տաս, տուր ու խալիսէ։—Ու այդ հոգէն ազատէ։

138. Բուրդը Թող տուեր է։ Աղքատացեր, մնանկացեր է։ 139. Բրդերը տնկուեցաւ, դրդոտեցաւ։ Զայրացաւ, կատղեցաւ։ 140. Բրի Ճոխ ցոյց տալ։ — Սպառնալից խօսը մ՝ ընել։ 141. Բրին երկու Ճոխն ալ բռներ է։ — Ոչ այսպէս կ՝ընգունի, ոչ այնպէս։

142. Գազին վրայ նստի, կամ միզե՝ դազը կու չորնայ։ -- Յոյժ ժլատ է։

143. Գալոզը մայրս կու հարցնել.—Աժեն անոնք որ ինձ կը դիժեն, տեսնուիլ կ'ուզեն՝ ինձժե շահիլ կամ զիս խարել կ'ուզեն։

144. Գազտուկ մախանք մի՝ շիներ։ — Խարեպատիր ձևերով մի՝ խնդրեր։ \*)

145. Գեղը պաուկ՝ ինչը շերեփ եղեր է։ -- Ամեն առւն կը մանե, կ'ելնե, կը յուղէ, կը խուովէ։

146. (այս ինչ երևելի անձին մահուան առեժիւ) Գեղն արունատ տի փլչի տիգայ։ — Գեղէն կամ բաղաքեն մեծ բաղմուքժիւն տիգայ ՝ի միսիթարութիւն։

147. Գեղ վրայ հասկցնել։ — Անուղղակի խօպքերով կամ հարևանցի ինհ հասկցնել պատշանն, իրողութիւնն ևայլն։

149. (ընտանիջս) Գետը (կամ ջուրը) լեցնես, գետը կու կայնի։--Անկարող եմ, և ընտանիջս շատաւոր են։

150. Գէուը (աղտը) փեշդ (բղանց) մի' բաշեր։--Այս գործը մի'ստանեներ։

151. Photo & boto - Fui of obud junt 24:

152. Գլխուդ ջուր դիր։ — Խնձմե կամ՝ ուրիշէ օգուտ չի կայ. գործդ ինչըդ տեսնել ջանա։

153. Գլխուն դարուդուր չէ եկեր։ — Նեղու Թեան դժուա-

1

\*) Կը պատմեն Թէ ժամանակաւ մէկը երկաԹադործին պաոտտու մի երկաԹ տանելով՝ ինդրեր է ծեծել բարկցնել, լետոլ մէկ կողմը ծակել տուեր է, լետոլ ինդրեր է միւս կողմը սրել։ ԵրկաԹագործն հատկնալով ըսեր է. «Աղբար, չըսնս ուր գաղտուկ մախաԹ կու չինես». , **թուքՅեսմս** չէ հանդիպեր։՝

154. Գլիմուն պարապար (հաւասար) կու բռնել — Վրան կու դողայ, կը պաշտե զայն։

155. Գլխուս կամ գլխուն շատ գըխիկ դրաւ. կամ՝ չի դրած դխիկը չի քնաց. կամ՝ Թրծեր դրաւ գլիուն։ — Բաւական դաւ, խաղ խաղաց, փորձանքներ բերաւ։

156. Գլոխ առնե՞լ տերնժաս։ — Ինչեւ կաճապարես մեկնիլ։ 157. Գլոխը բարձի մը դնել։ — (Գործը) այսպես կամ այնպես կարգադրել։

158. Գլոխը պարնել (այս ինչ տեղը)։ — Այցելելով անցնիլ։ 159. Գլուխը (գլխուն) պարնել (իրմը)։ — Ցաղտկանալով, վշտանալով տալ։

160. (վաճառելի ապրանքի մը) Գլոխը կապել։—(ապրանքին) Բարձր կամ չափաղանց գին մը արժեցնել, այնպէս որ ուրիշները չի կրնան գնել, իրեն բերեն։

161. (Տօրը, վարպետին) Գլոխը տի լուանալ։—(Տայրը, վարպետը) Պիտի գերազանցե ստուեենան, նենգունեան մեջ։

162. Գլոնիը փորը։ — Թող ըլլայ։ Երբեմն կանայը «Մեղ քը Հլլին» իմաստով կ'ըսեն. «Մտիկ չաներ նը ի՞նք գիտէ. գլոնն ՝ի փորը, կամ, այս ինչ կարևոր պարագային մէջ ծախք մր պիտի ըլլայ եղեր, Թող ըլլայ. գլոնն ՝ի փորը»։

163. Alahu unur unur, had, undernes

164. Anntun führ 24:

165. Գլոիսս խոսո մի մնայ բումնելիք. (Ամեն՝ տեսակ նեորու Թիւն, արկած պատահեցաւ։

166. **9 10 10 10 10 10 10** 

167. Գլոիս ըերելու ժամանակ չունիմ։

168. Գնացած տեղեն խապար (լուր) կուրերեւ—(Այս ինչ դեղ կան՝ հարուած) լոյժ աղդու է։

169. Գնադիկ, ուչ եւրլնաս, ուչ պակսիս։ — (Ինչ որ է վի-Ճակն՝ նոյն է. ոչ առաջ կերթծայ ոչ ալ կը յետադիվեւ 171. Գտար մարդը, քաղեցիր վարգը։ — (հեգնաբար) Այգ մարդեն շահ կամ շներհ պիտի ստանաս։

173. ጉመሩስል ሩ።

174. Գանակը պօղազը (կոկորդը) կու քաեւ—Ապրուստի կողմանե շատ անձուկ վիճակի մեջ էւ

175. Դանն գնա (անդի՞ն գնա) կ'ըսէլ — Զօր. այս ինչ պըառուղն քաղցը է՝ շաքարին դանն գնա կ'ըսէ. կոպիտ է՝ իշուն ունն գնա կ'ըսէլ

176. Դաւ Թենց խահունն դարձաւ։ — Իրարու կ'ըսեն Թէ «Տղայը, խահուն բերեը այցելուին համար», բայց բերող չի կայ։ (Դաւ Թեանը զուարճախօս լինելով՝ հաւանականաբար կատակի համար այսպես կ'ընեն եղեր)։

177. hulf. \*)

178. Դորմի համ տուաւ։ — Ձանձրացոյց, տաղտկալի եղաւ։ 179. Դեղն երդուընցեր՝ դեղ չի ըներ։ — Անդարմանելի Հղարձաւ. չի բուժուիր։

180. Դեմ դողալ (ուտելիջի, հանդերձի, դրամի ևայլն)։ —(սակաւ ինչ ուտելիջի ևայլն)։ ԿարօտուԹիւն ջաշել։ (Դե՞մ կու դողաջ...\_Չունի՞ը, կարծտ էջ)։

181. Դիպդպիլ։ — 1. Իրարու դպչիլ. 2. երկու ուտելեաց կամ այլ իրի մը համար ասդին անդին երԹալ ընտռել կամ պատրաստել։

182. Դմակ է ու դանակ է։ ....Այս ինչ տեղ կամ գործին

\*) Կը պատմեն Թէ Խօչենց Դաւիթ անունով տղան սրդողելով՝ տանեաց եզրը կ'երթալ և կ'սպառնալ ինջզին ջն վար ճետել. հայրն հայլն, կսկսին համողել, յորդորել, աղաչել որ աստին գալ. երբ Դաւիթ աճհամողելի կը մեալ՝ կ'ըսեն «Դաւիթ, ինկի». տղան կ'սկսի ցուիջէն ետջաչուիլ, որչափ կ'ստիպեն ընկնիլ, այնչափ ետ կը չաշաւի, վերջապես ամարն կուգալ. մեջ պատիւ, հարտառեթիւն կայ՝ բայց վտանալ և մտահոգութիւն ալ կայ։

183. Դմակը մեծ է, կու ծածկէ։ Հարուստ, է ըրած կասը կամ գործած յանցանքը կը ծածկուի։ 184. Դմակին վրայ եղ բսել։ Հարուստին գրամական և այլն նու էր տալ, որոյ պէտք չունի։ 185. Դուն աղուես ես նը, ես ալ ագին եմ։ 186. Դուն վերի արտին ցորննն ես։

188. Դուռը գոցուեցաւ։ — Հայրն կամ որդին մեռաւ. այր չի քնաց, տունն գոցուեցաւ կամ գոցուելու վիճակին հասաւ։

189. (Երբ այն աղջիկն հարս առնուն) Դուռն Երդիքեն տի բացուի։ — Այն աղջիկն լաւ չէ. գնացած տունն պիտի կործանի։

190. Դուռ ւ՝ երդիք կու քրքրին (այս ինչ աղջկան հօր տանն)։ — Աղջիկն `ի հարսնու Թիւն կ`ուղեն (հօրժեն), կը պընդեն, կը կրկնեն։ (Այլ խնդրոց համար ալ Թախանձելու իմաստով կը գործածուն)։

191. (զգեստը ևայլն... Հմեռս կամ գիշերն) Գուրս չի Հգեր։—(զգեստը 'այլն այս ինչ ժամանակ) Չի տևեր, չի գիմանար այլ ևս։

192. Դրևր ես Նը գիտ։ — Վերցուցած գողցած էին։

193. Դրոշմը անանկ է։ – Երևոյ Շեն մի' դատէը, այնպես չէ. այլ ընու Շիւնն այնպես է։

194. Եախա («ծիք) կու ԹոԹվեւ—Շատ դժգոն՝ զզուած է։ 195. Եախան («ծիքն) երկուք չիլլիր։— Որովնետև ծոչլ, Նախանմոտ կամ խարդախ ևայլն է, լաւ վիճակ մը չունի։

196. Ծափան չի բացուած սուտ մի խօսեցաւ, կամ կու խօսի։—Նորաննար կամ աննաւատալի սուտեր խօսեցաւ կամ կը խօսի։ (Ծանրագին պերին»Հիսկ շապիկներուն օձիքը՝ չե -- 227 ---

գործածուած ըլլալու ՝ի նշան՝ չեն բանար. գնողն յետոյ կը բանայ. Թերևս սորա նմանուԹեամբ է)։

197. Նա (կամ) հրում, հա մրում։ (ծամանակաւ Ակնեցի մը կյադր Թե ուղիղն «Նա յարձ, հա մեռձ» է)։ 198. Եկեր պատեր, ճարն է հատեր։ Գործը, պետքը անհրաժեշտ է այլ ևս։

199. Եկտեր ձեռ բդ ԹոԹվիմ։—(հեգնարար) Եկտեր որ շետրհակալուԹիւն յայտնեմ պաշտօնդ, յանձնարարած գործա լաւ կատարելուդ համար։

200. Եղեր ուլիկ Թը տուտէ խոտիկ։ Հարմս, հարսին մայրն կամ ծառան ևայլն պէտը է յանդիմանութժեանց համ րերեն։

201. Եղը աղայենցմե, ալուրը մոլլայենցմե՜ (էր)։-- Պէտ-"թերն, կերակուրներն ասդիէս անդիէն էր հաւաքեր։ 202. Ե՛զը (իւզին մէջ) պառկեցաւ։

203. Une fumph, you donner of:

204. (վասն մարդոյ) Եղի (ի.ղի) պես ջրին երեսը կ'նլլէ։ —Դուրս կը պրծնի.պատճառներ մէջ բերելով զինքն կ'արդարացնեւ

՝ 205. Ծպիսկոպոս, կամ, կանժողիկոս եղեր է։--- Յոյժ ար. թեալ է։

206. Bu (wir ywir willerin wi) whawn Stolip fil (gwinhfe Sweiffel ufe): -- An pâle Sweiger bis

207. Ես անոր կու սորվեցնին Թը (եԹէ) Թանը մածու-Նեն կելք քի (Թէ) մածունը Թանեն։

208. Ես իմ արծած ոչլսարս դիտեմ։

209. Նաի Թօրին պարուտ (վառօդ) Թող պահեւ – (Քարն ականով կոտրելուն, նաև սնանկանալուն՝ «Թօր նետել» կըսուի)։ Շատ հակը կ՝ընէ, Թուի Թէ սնանկուԹեան «Թօրչն ալ պիտի նետեւ

210. (վասն կնոջ) Եար չունի, էոջի չունի։ Մեծ կամ գեղջը ղաւակներ չունի, աղատ է։

1

211. Ետի տերը դտաւ --- Չգեստը ևայն չարաչար գոր-Susting Spugar, Sustagars 212. Ծարը առաջըդ տի նայիս։ — Վերջր ամօնժապարտ պիտի լինիս։ 213. Երած արտին փին միսին արանը։ 214. Ե° μ (ե° μ) եղար տէրտէր, եր եղար տէր պապաւ 215. Երբ քեյէքը (եղնիկն) ծառն ելնե, այն ատեն տի կատարի :---(Այս ինչ գործը) ընտու չի տի կատարուի։ 216. brancie Seh utu har hult: 217. Երդում կատարում կ'անեւ-Երդնլով կ'երդնու։ 218. Brbu afu sate 219. Երեսդ կուդամ .-- Կը վայլէ որ յիշեմ իմ արած բարու Թիւններն։ 220: bphu huur 221. breun h'unh. hund, brbun h'boffs-Ubs not d't. ի՞նչ կ'րլլալ եթե այդ ծառայութծիւնն ընկ։ 222. Ophup Santo yan Saft -- Un youpho ganto water for 223. Երեսը վար տալ։ \_ Կշտամբել, այպանել։ 224. Երեսիդ ջրովը (գնա, կամ տուր ևայլն)։-- Մինչդեռ պատիւգ վրադ է (գնա, ևայլն)։ 225. (վասն աղջկան) Երեսին գիրը մարդ չէ տեսեր։---Պարկեշտ է, մարդոց երևան չնլլեր գրեթել։ 226. Երեսին ըուէնկը (գոյնը) տիրացուի ըուէնկ կու մա-Նի (Նմանի)։ ---Գունատ է։ 227. Երեսին կաշին հազնիս Պաղտատ երթժաս, չի կտըըտիր։--Չամաչեր բնաւ. ամուր երես է։ 228. Երեսին ջուրը գնացեր է։ 229. Երեսն ի վար կանի ես հնացեր։ — Այս ինչ անձէն կամ իրէն կախումն ունի ձեր գործը կամ ապրուստը։ 230. Երեսով ազատ կ՝անկ։ — Քաղավարութեամբ և մե. ծարանօք կրնայ գոհ րնել (հիւրերն)։

- 229 -

232. (հօր, զաւկի, կամ իրի մը նկատմամբ հեղնարար) Երեսս մէջը կերևայ. (իրը հայելի)։ — Լաւ չէ։ 233. Երեսս չի բուներ։

234. Brbu unewig wummen y'negs

235. ԵրկԹէ լէպլէպուկ է (րոված սիսեռ)։—Այս ինչ գործը կամ այս ինչին ծառայուԹիւնը շատ դժուար, անտանեյի է։

236. Երկթե չարուխ (տրեխ) հազաւ։ — Տաժանելի ուղե. «որութիւն, աշխատութիւն կրեց։

237. Երկինքը աստղ մի չունի։ — Ո՛չ զղջ ունի պաշտպան կամ օգնական։

238. Երկնային տէրը արաւ, կամ ըրի Թը.... մտիկ չըրաւ։—Շատ Թախանձեցի, բայց մտիկ չըրաւ։

239. Երկնքեն ի՞նչ է եկեր ուր գետինը խապուլ չէ աթեր (չէ ընդուներ)։—Այս հրամանին կամ դէպքին ի՞նչ կրրնամը ընել, բայց եթեէ ընդունել։

240. Երկու Թրին արան (մեջ) քնացեր է, կամ քնացի։ — Անելանելի դրու Թեան մեջ լինել։

241. Երկու խենդին խելօք մ՝են դրեր։—ԵԹէ իրաւունբը չըճանչնաք՝ մէկը կը գտնուի որ իրաւունքը պաշտպանէ։ 242. Երկու Հուն Թապլեցայ։—Երկու անդամ այրիացայ։ 243. Երկու ՃոԹը (ծայրը) իրար չի կրնար բերեր։

244. Երկուը արաւ իշուն վրայ ձգեց։ — Աշխատեցաւ կատարել, բայց չի յաջողեցաւ։

245. Երկու քարին արայէն (մեջ տեղեն) ալուր մի Թող Ելլե, որմեն կելլե, Թող ելլէ։ — Թող ես շահիմ, բայց որմե՝ միևնոյն է։

246. Երկրի տղայ գիրն ետը էն կու կարդայ — Մարդիկ Ճարտարափի են գաղտնիքն կը գիտնան։

247. Եփած ապուրին մեջ ջուր մի կապեր,---Սակարկու-

Թիւնը խնդիրը լրացած է. զանազան առարկութեամբ մի՛ պզոորեր, մի՛ եղծաներ։

248. Զանը (արդեն) ջաղացքը ջուր չի կայ (կամ տունը մարդ չի կայ) դիւունաքն ալ իրար կու տան։—Արդեն Թշուառունժեան մեջ է նորանոր դժբախտուԹիւնը ևս վրայ կուդան։ 249. Զարկածը շատ է, ձգած չի կայ։—Մեծամեծս կը

սլարծի, բայց գործ և արդիւնը բնաւ չի կայ։

250. (անտր հետ) Ձար (նարդի խաղի քուէ) չեմ կրնար նետել։—Չեմ կրնար մրցիլ։

251. Էլային ԹուղԹը առաւ։—Պնդեց, հակառակեցաւ, վերջապես գործն կարգադրեց, բայց այնպիսի կարգադրու-Թիւն մի որ հակառակորդին պահանջածն այլ այն էր արդեն։ 252. Էշը դրին (այս ինչն)։—Ծաղր ու ծանակ ըրին։ 253. Էշը Տախանով (եղանակով) զռալ կու տան։—Ամենբին կարդի կանոնի կ՝ենԹարկեն։

254. Էշը պոչ մ<sup>\*\*</sup>ունի, այն ալ այն։ — Անոր գրաղու**քն** ալ այն է. միշտ հետն կը պատցնէ։

255. Էշը գր. (պարապ) ճամբեց։ .... Հիշանդացաշ, պիտի ժեռներ, բայց ապաջինեցաշ։

256. (բեպապի հոտ կուղայ, կ՚երԹաս ուր) Էշ կու Հոաղին։

257. Էշն ախոուր կու խնդայ։ ---- (անանկ սուտ կը խօսի որ) Բնաւին անհաւատայի է։

- 258. Էո. բր դպաւ (վասն անձի)։ Զանաց։
- 259. Concie for et phi-unert for the

260. Քաղենը տ<sup>յ</sup>ելլես։ — Ինչնե հանդերձդ ծանր կը հաղնիս։

261. Թաղին (բարակ) մեր Թազին է, չուլը (վրայի լա-Թը, բուրձը) փոխեր է։

262. Թան ետի, կրունկ էռջիւ — Անկանոն, խառն 'ի խու\_ որն բան մ՝ հղաւ, գուլպայի սխալ հագնելու պէս։

(whith it was fine to the fully in the second secon poli wint to zusting 265. Բանով պատարագ կուլլի — Մենք արանը՝ եղաւ։ 266. Թանա ԹԹու է ըսող չի կայ։ — Մարդիկ սովորարար իրենց ունեցած Թերութիւնն չեն յայտներ։ 267. (ptg) Puyulup ynigit y'nints - thouse zun Suportion f: 268. (այս ինչին) Թասէն (դաւաթեն) ջուր է իսներ։ -. (անոր) Բնոլթը ստացած է։ 269. Pug only sh www.hpr. Pb fol put sh patters 270. Թելէ դերձնե կրյուիլ (կտրուիլ): -- Նիհարնալ, ու-Amanyme Ellmis 271. Թելին դպչիլ։ --- Անհաճոլ խօսը մինելով բարկացնել։ 272. Բեպոէն Յեպուո մի լրնի։ — Ի յիշատակ զաւակ Sp nithbuy: 273. Թևր ճանեց, (հոն հկաւ ևայլն)։---Կարծես բնաղment it bowers Ante blue lewight 274. (այս ինչին) Թևովը կու Թռչիչ-(անոր) Ապաւիանելով կամ անոր շնորհիւն է որ համարձակ կը գործէ կամ կ՝անիրաւի։ 275. (այս ինչ գործը ևայլն) Թեփեն հանել .--- (այն գոր-. ծր ևայլն) Լրացնել, գլուխ բերել. որ մէկ հոգն պակսի։ 276. Թե+երլելը (անիւր) կոլնեցաւ։ —Գործի ընթացըը :կասեցա\_**:** 277. (pp voup' Sulline Nom Shev) Phne Ipug 2h qup: -Two leptu opnius 5: 278. Phile (մազը, աղուամազը) վար կ'անեւ-(Այս ինչ ղաժան, partumenp անձն) կը շոյե, սիրտը կը շահի։ 279. Թող կրյին (կտրին) առտուանը, չի խրկին իրիկուա-**Նը։—Բնաւ վախ**նալու բան մը չունիմ։

280. Թող հինայուի (Հեռըը հինա դնկ)ւ-(հակառակորդրն կործանեցաւ. ուրենն) Թող ուրանանայ (վրափագր կատաrbgwc): ճակ մը ստացալ. հանդիտականը խառն 1ի խուռն կը խօսին, 40 400860: 282. לחור...ועם לשוששולים בל בליו --- (שום לעולט) השורת whither the web into the 283 Թուղթը պակաս էլ-թեթևանիտ, թեթեևսոյիկ էլ 284. (win hustin Pranp une pwohr (win hus wuthu) ի նպաստ կր աouh, կր պաշտպանեւ 285. (իլուր կամ իտես այս ինչ գեղեցիկ աղջկան կամ իրին) Թութն ու շողութը վաղեց, կամ Թութր կլյեց։ 286. Թուքս բերանս չորցաւ։ — Սոսկացի. զարմանըէս ապ-2hgws Shughs 287. (ապրանքի մը ևայլն նկատմամը խօսելով) Թրոցրնել։ \_\_Չափազանց գովել։ 288. Թընես՝ անձրև կուգալ կ'րսեւ--- Անպատկառ էւ 289. Թընես՝ գետինը չիյնիր։ -- Շատ ցուրտ է։ 290. (գործի մր համար) Թընես՝ տի մարի, փչես՝ տի Junhs-Ropurny bu, fusugu negtu youwu yupawyotas 291. δρθρύ δωβθο ζι-Ωρηρύ μύνιβωνομ δρεη δορο կր Նմանի։ (կ'անն թե ժիժին՝ ժժալով ժժալով կը ճաթի և 4p &2p): 292. haft (Stongfu) frug ton quertues --- Utilly wighter quel's abor una byes to bur amplanes 293. (վաճառքն մէկի մը) Երեսն վաճառել։ — Մէկի մի Swonig if usualis 294. (שקצרוני) איני חר וחרשלי חר בשרון שחורלי לו-8חול գեղանի է։ 295: (mbuubinen uluwe) Was bu lapbo, Suibq-waner: ----(սկսաւ) Գանակոծել ղլանցաւորն, կամ յանդիմանելով յանցանքն Թուել։՝

may's to be wyddie 297. We po glover lumeshore (Subpart) lupber --Ban Kunyunun an pohit 298. Wuzmuju & Wwinchfu ton que it mupto fue fue թեր։--Եղածն եղեր լմնցեր է, տակաւին կը յուսաս կ'ըսես At equipt t segurite \*) 299. Իշուկ չունի, հավաս (փափաբ) ունի։ Հարստութերեն, պաշտօն ևալյն չունի, բայց կուզէ հարուստի պէտ dupn laps 300. Poneto wilhoto & hates --- Utillen youpon &: 301. իշուն դրախտը (գնաց)։ — Ալսոռը (գանտը) տարին։ 302. hone putter ship footing & (your b) your yout ye - Ինչ, կարծես Թե կարողու Թիւն չունն։ 303. իշուն չի հասնիր, փալանը (համետր) կու ծեծեւ -Իւր գօրաւոր տասիսին բան մր չի կրնար րնել՝ անոր վերարերեալ տկար անձէ մի վրէժը կառնու։ 304. Իշուն տուին ափ մի գարի, թօր մ՝ալ այագրերը (dmby): 305. (գործը) Իշու պոչ Լ։ — Ցառաջդիմութերեն չի կայ . (with ann&fith alts):

. 233 —

306. Իս (զիս) տանը տի պահել — (հանդերձն...) Ի՞նչ շահ ունիմ զայն պահելեն։

\*) Ժամանակաւ, Ակնեցի Տէլի խաչիկ ին (զ) էչը գալլն կերեր է լեռն, խենքն գէք իչուն ծոչէրը ջաչելու համար ոտ ջերն կը կարէ \* է ջաղաջ չուկան կը բերէ, Բալց, ով գիտէ. կամ սիրելի իչուն արկածն չեզած լինելու փափաջով կամ կասկածելով քէ գուցէ սխալած է՝ կը հարցնէ հանդիպողներոոն քէ «Լտեցինը, խաչուկին էչը գալը կերեր է կ<sup>9</sup>ըսեն». «Ալդպիսի բան մը չի լսեցինը» կ'ըսեն։ Խաչուկն տեսնելով քէ դէպջն չի հաստատուիր՝ ինջն ևս «Ինչալլահ, խաչուկին էչը գալը չէ կերեր», կ'ըսէ։ 307. Իրար կուտին։

308. howpon phow of photos

309• Իրեզը (երեզը) աւուր ԿորԹը (որԹ, մոզի) Ջուրը ՀկերԹայւ--Թեև Կասակը բաւական է, բայց **որչափ տկար,** ապիկար հաւ

310. Իրը (ղիւրն) լեռներն է մոլրցուցեր, օտարը ծոցն է սովրցուցեր։ Դւր որդիքը չի շահելով աստ և անդ ցրուեր է, և օտարները բերած է իւր տուն կամ գործին մէջ։

311. (այս ինչ մամբորդին, կամ յղի կնոջ ևայլն նըկատմամբ) Իրիկու առտու է։ Ժամէ 'ի ժամ կամ օրէ օր (գալրստեանն, ծննդեանն) կ'սպասուի։

312. (վառուած ճրագներ տեսնելով) Իրիսկինը (երէց կինը) մենչ է բերեր։ — Ի՞նչ կայ, որ այդըան ճրագ վառեր էջ։ 313. Իւլարը (պախուցը) վրան Թող տուր, կամ Թող տուի։ — Գործելու աղատուն իւն տուր, Թող վարժուին։

- 314. Լան (լայն) փարթ∂ը (փորը) նեղ աւուր է եկեր։ \_ Շուայտութ∂եանց կամ առատութ∂եան մէջ մեծցող որկրամոլն Նեղութ∂եան հանդիպեր է։

315. Լաց կ'իլնի (այս ինչին ժառանդութեննեն)։ — Բան մի չիլնար օրինզը, իւր դաժինն լացն է։

316. Լեղուին կուտայ։—Առանց ակնածանաց կծու խօս-, \_ջերով կը խօսի։

317. (այս ինչ րառը կամ անունը) Լեզուիս վրայ է։

318. Լեզուին տակը շեղ կայ։ — Բան մը պիտի ըսէ, բայց չըսեր, կը ծածկէւ

319. Լեզուն երկան է։

320. Լեղուն կու դառնալ։ — Հարտարանսա է։

321. Lugner nulne saluts

322. Lugnen popular off sentences - Umpunified up by must

323. Լեզուս խածի։ — Համբերեցի, տոկացի։

324. (վասն անձի) Լեուը ձուն չէ եկեր։--Գժրաղդու-Թիւն, նեղութծիւն անծանօթծ են ատոր

325. Լեռ քար կու կոյնի (ատ խօսքին վրայ)։—(այս գամ այն բացատրու քենան առաջարկին դեմ) Այլ ևս ըսելիք je Samp: 326. Louin pulley (pully):- by when a prouped of (anpop) they montants 327. Laponetio wy ubonky: --- h pwplactofic granky guns 328. Լուանալ։ -- Ցանդիմանել, կշտամբել խստիւ։ 329. (վասն աղջկան) Լուի կծած չունի։ — Պակասուքերեն բնաւ չունի. 330. (Swann, My) Low if Brighton - Shop 4p Swant, memer f: 331. Լուսը կ'երքժայ, լուս չի տար։ — Ծախը կ ըլլայ և .mpghing junne ih que 332. (վասն աղջկան) Լուսնկան պատուեր ու միջէն ելեր 5:-Bajd glawuh 5: 333. Լուսնկան՝ ջուվալը (պարկը) տի դնել - Գիշերայն **խոլս** պիտի տալ։ 334. Խալկին դրաւ տատին (հօրն) ու մօրը։ --- (հեգնաբար) Չար դործեց. ուստի ընդ միշտ անիծիւը պիտի լիշեն զայն L pup watthe Swipt hus. 335. (վաստ կսոջ) Խալաւ (գորգի) վրայի վեգ է։ — Փափhumen to be 336. Խաշր պանեկը տի քնայ։ — Գործը կիսատ տի քնայ։ 337. Duonetu ih (nqui ih) seh its yne fub gats-(wyu **յության այս ինչին) կրնալ** դիշրաւ նուաձել։ 338. Խառխզին (հայած ճարպին կամ դմակին մնացորդն) **յինել։ Մտահոգու Թե**ամբ տոչորիլ։ 339. Խելացը բունը գտաւ։ — Կրցաւ համոզել։ 340. Խելացն հետ է. կամ, խելացն հետ (եկաւ, ըրաւ **ևայլն)։ – Անգիտար**ար անխորհրդարար (գործեց)։ 341. Philer Schog: - Ammphag:

342. ԽենթՅէ կուշտ՝ խելօբէ կարօտ։—Այս անխել.թ մարդը մտիկ ընելու ժամանակ չունիմ. ես արդէն ունիմ այդ պիսիջ։

343. Խենթ քուն ու դազդն արթեուն։

344. Խենթեն է կալլեր (ունեցեր) ափ մի չաման, կու չափե ամանէ աման։ — Ունեցածն բան մը չէ, բայց աստ և անդ կը տեղափոխէ կամ նորանոր կարգադրութերւններ կ'ընէ։ 345. Խենթեն ըսաւ խելօբն Հաւտաց։ — Խելացին առանց խորհելու գործեց։

346. Խեւ Կիրակոս «եվցաչի, ի՞նչ կ՝ըսէի՞ն կաւտայի (կը Հաւատայի)։ — Յոյժ պարզամիտ է. կը խարեն. ի՞նչ ըսեն կը Հաւատայւ

347. Խլրդուկի պես հոտը իրմեն կուղայ։---Իւր նեղու-Թեան և անհանդստութեան պատճառն ինըն է։

348. Wiles garph pupi (Ipusi) num hop dus --Based

349. Mon t, funinf ynein t: -- awpawlfon t:

 350. Խոտը ձիուն ագիքն է, ձին անօԹի ժուռ կուգայ։
 —(այս ինչն) Չաւակ, գրամ ևայլն ունի, բայց կարօտու-Թիւն կը բաշէ։

351. Խորունկ է։ — Խոր հմտունիւն ունի. շատ դիտուն է։ 352. Խուղի՝ տի քրքրեր, կամ քրքրեցիր. (գառին փորը բրինձով կամ ձաւարով ևայլն լեցուցած կնփեն և ուտելու ժամանակ կը բրքրեն։ — Ինչու փունժաց. լիախորտիկ սեղանն կայ։ 353. Խուռշունով (հրացանով) կու զարնին։ — (այսինչ իրն) Հազուագիւտ է։

354. Խոսած խողքը կամ ըրած վեճերնին ընկուզի կըճեր չի լեցներ։-Անկարևոր խողքեր են։

355. Խօսըդ նապաւոր անիմ։ — Խօսածիդ ուղիդ ըլլալը հաստատիմ։

356. (հանդերձն, կերակուր ևայլն) Խօսը կու նետէ։— (հանդերձ ևայլն) Աղւոր, ձևաւոր, լաւ է։ - 237 -

357. Խօպը Նետել.--անորոշ խօպըերով ակնարկուԹիւն ընել։

358. Ծակեցաւ. (կամ) Սատընին չարտերը ծակեցաւ։---Դաւը ևայլն երևան ելաւ.

359. Ծառն ելլէ, փապուճը (մուճակը) դետինը չի քնար։ — Ո'չ ընտանկը, ո՛չ ստացուածը ունի և ո՛չ ալ ասոնց հոդերը։ 360. (լղի կնոջ մի նկատմամբ) Ծեփած բիւփ է։— Արու կամ էդ ծնանելն չայտնի չէ։

361. (անդերը մը, աօսը մը) Ծաել։ — Անցողակի կերպով ու դաել, հասկցնել։

362. Ծովր մտաւ, ցամաք դուրս ելաւ։

363. Unin paramets

364. Կաթ դ դետինը մի՛ կթեր։ — (իզուր) Մ՝ազաչե , մի խնդրեր։

365. ԿաԹեցնել (խօսբը)։ —Լաւ մը հասկցնել, բաց ար**ել։** 366. ԿաԹը վաԹած դարձաւ։ — Պատահած անա ևկալ **դէպ քի**ն համար տրտժեցաւ։

367. Կաթեն ակռան բերաննն է։ \_\_Տղայ է. չի՝ գիտեր։

368. (վասն անձի) Կաթնով լուացած է։ Անամօթ, ա.

· 369. (խնդրածդ) Կալլիմ Նը՝ բէլ (գոնչ) գլխուս դեղ ոանիմ։—Ծնձմե խնդրածդ չունիմ, ղի ենժէ ունենամ, ինձ աւելի ևս պէտը է։

370. Կախ ու կարիք եղաւ։ — Ցոյժ աղաչեց, Թախանձեց։ 371. Կակող փուշ է։ — Կեղծաւորու Թեամբ սիրով կը վաբուի, բայց չարամիտ է։

372. Aulaufil pur ut ut ut " ... \*)

\*) Ա'ըսեն թե ժամանակաւ աղջիկ մի կամ կին մի ջուր բերած ատեն ծառի մը ներչըն ճստած «Երբ ամուսնանամ, աղալ մի պիտի ծնի, անունը Կակոսիկ պիտի դնեմ, բալց երբ մեծնալ, գալ ալս ծառը ելնէ, վար իլնի մեռնի, ես ի՞նչ պիտի ըլլամ, խորհելով՝ ողբալ ակսեր է. - 238 -

373. (այս ինչին) Կաղաթը թոթվեց։—Անոր տեղեկու-Թիւնքն, գաղտնիքը բոլորը խօսել տուաւ։

374. Կողիել է ու շալկեկը է։—Դու ալ աղջիկ ունիս, խնամի պիտի ունենաս ևայլն. տեսնեմ ի՞նչպէս պիտի ընես։ 375. Կաղնդին՝ էշն ախոռը կ՝իմանայ։—Կաղանդին ցերեկուան երկայնութիւնը զգալի լինել կ՚ըսկսի։

376. Կամաց, վրայեր բան չի Թափես։ — Մի յուսար բնաւ, մանաւանդ զգուշացիր որ բեղ չի խարէ։

- 377. Կանչեցին, կանչեցին, կանաչ արտը չորցուցին։ Այս ինչ մարդը հարուստ է, բարեկեաց է լսելով ըսելով մարդը աղջատացաւ, Թշուառացաւ։

378. uwushu yan uk: - (wjupwu) Uhra k:

379. Awalapp dagif: \_\_ Quage:

380. (պարտականի մի նկատմամբ) Կապը երկնցուր։ — Աւեյի ժամանակ տուր։

381. Կապլ ծամել։ — Վնասուիլ, սնանկանալ. գործը չի կրնալ ՝ի գլուխ հանել։

382. Կապ կարել։ — Անդիտօրեն ներկայից մեկուն դպչե. լիք խօսը մ՝լաել։

383. (3 մարդոց կամ տան նկատմամբ) Կաս կրակ բը։— (այս ինչ 3 անձինը կամ ընտանիքն) Որը միարան են։

384. Կավառը վար անել։ — Կշտամբել։

385. Կատուի հոդի է։ \_\_\_Հիւանդութեան, նեղութեան և այյի կր դիմանալ։

386. Կատուն կապեր է։ — Իւր ապադայն ապահոված է. գործը կարգի դրած է։

387. Awpąp water ti-Upptus ti

388. Կարդացնել։--Հրահանգել, խրատել.

389. Կարճնալ ու երկննալ. (չեմ ուղեր երիժալ, գի տի կարճնայ ու տ՝երկննայ)։– (խնջոյքի, քաղաքավարական ձևերու և պատրապտութեանց Կամար) Հոդալ, նեղութիւն կրել։ 390. (երբ այս ինչ գումարն ունենամ կամ գործս յաջողի) Կեանը իմ Ազնաւուր աղաւ-Ծրջանիկ կետնը 4 պիտի ունենամ։

391. Կեն է ծը՝ քար է կամ Կոնարոսի է. (գեպ մ՝ է 'ի , Գուրուչայ. Թուի Թէ տետրակին մէջ կտաւ կամ Կոնտոսի դրելու տեղ «Կ» դրած է)։—Այդ դրուած ևայլն յայժ անորոշ է, ո՞վ կրնայ գուշակել Թէ Կ գրով «կտաւ» կամ «Կոնտոսի» իմանայու է։

392. Կեցիը, մեռելին ոջիլը սատկի։—(սուգէ ելնելու, անուսնանալու, ժառանդուներնը բաժնելու ևայլն) Գեռ կանուխ է. զի դեռ նոր՝ ըանի օր է, որ մեռաւ։

393. Կեմին (նաւլ) լեցուն է։ Հնտանիքը շատ է, սե. Դեպի լեցուն է։

394. Կեռկեռչ**է 4**2 կուլլի։ — Կը խրոխտալ. (Կարկառի ծ**խախ**տանն նմանունեամբ)։

395. Կես մարդու եղայ։ — Մեծ մաահոդու Թենե կես եղայ։

396. Կետ եկաւ։ — Արգելը, դժուարուԹիւն երևան ելաւ։ 397. ԿոԹը օրԹան (կեդրոնն) բերաւ։ — Գործը ուղած տեղը բերաւ, հատոյց։

398. Ungene Swow 5: --- Walpeld Le judien 5:

399. Կողերը փորը լեցուց.— Ջալաջալաեց, անկանայ գա. Դավոծեց։

400. (այս ինչին կամ իշր) Կողմը տաշել։ (սորա կամ իշր) Նպաստաշոր կերպիշ խօսել ևայլն։

402. Կոճ-աթՅոո նստեր է (Թերևս գում-աթծու)։ ---Տու-

**ՆըՆ փակուեր** Նստեր է։ 403. Կովր մեռաւ, խաղը (գիւղացւոց՝ կաթի փոխատուու-թերւնն կարգաւ) հատաւ։ ....(մեր) Ի հարսնութիւն տուած աղ-- - 240 -

ջիկը ևայյն մեռաւ, այլ ևս խնամութեւն մի, պարտաւորու. Popula of southing: 404. Կոտիկ հաւուն պոչ կու դնէ։ .... Գէշ անուն դնող, apuque punng 5: 405. Anwhy M'un wo h'unwis-(wile he shabbo, h'wnuppleto) Wappeto with we advance and we be stated to any the 406. Կու մուրայ՝ Թապախը (պնակը) եքսեն (լետկոյսն) րոներ է։ \_ Անուղղակի ողորմու Թիւն կր խնդրէ, դայց մեծա *միտ է, իւր վիճակը չի յալտներ*։ 407. And Swingt, your, funger you Swingt: - 4p yours for 408. (ղգեստն, նորաշեն տունն ևայլն) , Կու վառի։---8ngd quepuperto 5. 4p hugh: 409. Warntp your 'h yourp, y'br four Sound 'h Sour 410. (ասսելու կամ գործին, արհեստին ևայլն) Կուտր Inc Switt - Two Swpmup 5: 411. (խնճոյքը ևայլն) Կուտ կուտ հղաւ։ --- Տակն ու վրpwj bywe, gpackgwes 412. Կուտ կ'ուտէ Թանիրը կ'իյնի։--Կը բողղքե սաստyumpu, h nunyungus & ingot 413. Կուտ մ'աղով կու մորԹուի։ ..... Հեղահամրոյր է (իր. ple qquarte) 414. (այս ինչ երիտասարդ) Կուտ չի տի կապէ։ — Չպիւ անուսնանալ, կամ, չի արրյալ։ 415. (ունն զորը) կու ցատկեցնել - Չարամտարար վտան. գաւոր դատի կամ գործի և կամ շռայլ ծախուց կնն նարկեւ 416. Կու բաշուի։--Տանելի է։ Չի բաշուիր։--Անտանելի է։ 417. (վասն անձի) Կու բսուի։--Կը ձգտի բարեկամա. նալ։ 418. ענמשטף עשעודם לשק ע'הבהל. גבלינואים (לטחברף) עשupu funn finents-Wanding upu dupp d's, yuphih & quit pum Surangu dupkis

- 241 -

419. Animy for the sequences to be sequences to be the sequences of the second 
420. Կանեուց (կառուց) մի առուն ունի։ — Փղջրիկ առւն մի «Հեր

421. Կոցակը (Թերևս կոցածը) պատը ձգեր է։---Բեռ եղածն (անձն) ըրին չըրին հեռացուցին։

422. Կրակին վրայ իմ նստեր։ — Կարևոր գործ մ՝ունիմ, վատ որոլ անհանգիստ եմ։

423. Apulf dpul ewing: -- Aparty:

424. Apal for forts - (for for the songer for the s

425. (պետը մը այս ինչին) Կրնակեն հանել։ — 1. (պետը մը) Կարողունիւն ու պատրաստունիւն ունեցողե մը ստանալ. 2. Միջոց մի դանելով հրաւիրեալ տեղեն այլ տեղ մինս այցելունեան երնալ։

426. Կրնակը գետինը չի գարչ--Անկման վտանգ չունի. թրաւոր է։

427. unun Suster - Tage, ander:

428. Կրնակը բարէ պատին է տուեր։ — Զօրաւոր անձի Մը պաշտպանութերան տակ կը գտնուի։

429. Կրնկին (կրրընկին) վրայ (վճարել, գործել)։ — Իսկոյն (վճարել ևայլն)։

430. Հաղայ Նը՝ գօտին կու կրյի (կտրի)։ — Շատ աղըատ և խեղմ է։

431. Հաղար առուէ հաղար ջուր բերի՝ չեղաւ։--Ջանա-Ղած փաստեր, օրինակներ մէջ բերի՝ բայց չի համողուեցաւ։

432. (ի՞նչ կու մամաս) Հաղարին կեսն հինդ հարիւր է (ի կատակ): — Բարակ մաածելով մասնող մի՛ լինիր։

433. (այս ինչն) Հաղար տարուան մեռելին հասաւ։ Գե և նոր է, բայց հներուն հաւասար իրաւունը ունի այժմ։ Կամ, Թեև օրուան մի մեռեալ է, բայց 1000 տարուանին կարդն անցաւ։ 16 434. 24 (ujn) l' put (l'uniune leugie), 55 l'put (l'unune): — 8mpdup le uigupdup union des popent qui zupoetung (l'uniune):

435. Հաղորդով հետը խօսելու է։— Այնչափ դաժան կամ բռնաւոր է որ հետը խօսելու համար մահը աչը առնելու, ճաշակուելու լինի։

436. Հապը (դեղահատը) կլլեց։ — Յաղ[Ժուեցաւ, սնանկացաւ ևայլն։

437. Հավա'տտուղ, բան մ`ալ դուն կանչէ.—(Գիտեմ որ անհանդիստ ես կամ ախորժակ չունիս երդելու, իտսելու, բայց) դիտմամբ կ'ըսեմ որ Թերևս խնդաս, տըրտմուԹիւնդ փարատի։ 438. Հարած վարած էւ—Չանազան մոլուԹեանց մէջ սընած, վարժուած վարպետ որդի մ`էւ

439. Հացը ականճա չին՝ տանիր։—Չարն ու բարին կը հասկրնամ։

440. Հացը ծնկանը վրայ է։ --- Ապերանստ է։

441. Հացը, կամ, կերածս կրնակս ի վար կ'եր Թայ։ — Հանդարտ սրաիւ չեմ կրնար ուտել։

442. Հացի ցեց, ապրի դահեկ է։— Որկլամոլ և ծոյլ է։ 443. Հաց մի կեր, հաց մ՝ալ տատաղա (ողորմու Թիւն) տոււր (որ այն դործն այսպես եղաւ) (եղածեն)։ — Գոհ եղիր։

444. Հաց ու պանիրով պահել (զոբ)։ — Աննշան Թոշակ սի սահմանել կամ ձրի պահել։ Հայ ու պահիր է։ — Պարզ, զիւրին է։

445. Lug ne gnep sh hbpme, quag pomper mneme, (4md) quag whous the states

446. Հաւերը (կամ) Շուշիկը Թառն ին ելեր։ -- Գինովցեր է։

447. (գինովի կամ ցնպածի նկատմամբ) Հաւերը տունն ին։ — Այս պահուս խելըը գլուին է։

- 242 -

449. Հայ-կթին մեջ մաղ կու բնառեւ --- Բծախնդրութին։ Մրնեւ

450. Հաւկթեն միջեն Նոր ելած եմ։ -- Դոր սկսած եմ կաղդուրուել, ուշջի գալ։

451. (այս ինչէն) Հաւկին առնողը դեղնոցը մէջը չի դաներ։ — Խարդան, նենդաւոր է յոյժ։

452. Հաւկիթը ռռուն վրայ է եկեր։ — (Ժամանակն եկեր լրացեր է դեռ նոր պատրաստութիւն կը տեսնութ)։

453. (այս ինչն այս ինչ տեղ) Հաւկիթ կ՝ածեւ Հոն կրդեդերի։

454. Հոն (սեղանը կամ տունը) հաւու կան ու օձի լեղի կար։—(սեղանը կամ տունը) Լի էր, բան մը պակաս չիկար։ 455. (զայն) Հաւ «Էյի (իբրև հաւ) բունը կ՝անին։ —Ենէ հոն երնժայ ով կարևորունքիւն կուտայ, գի հարուստ, զօրաւոր մարդիկ են։

456. Հենք կու հանկ։ — Անընդհատ կուդայ կ՝երթայ այս ինչ ինդրոյ համար։

457. Հեռուանց կարմրուկ կներևալ։ — Երևցածին կամ կարծուածին պես լաւ չէ։

458. ( Ակու մր) Հետն իլնիլ։

459. 2,5 · ( [ + ) [ w 12 , < 5, ' + ] - ( + ) \* )

460. (մեղադրանը) Հին հաւերուն ըշէ ըշէ, չոր հաւերուն ճու ճու ճու ճու։ -- Քանի որ նոր խնամի կամ նոր բարեկամ ունեցած ես՝ մեզ մոռցար գրելժէ։

\*) Աղջկունը երբ պսակուելուն օրն հօր տունէն պիտի մեկնին կուլան, Ո'չ նուտղ կ'արտասունն մայր և քորքն ևս, Կ'ըսեն խէ ժամանակաւ աղջկան մէկն ամումնուխնան օրն երբ կու լայ՝ կ'ըսեն խէ տեխ չես ուղեր՝ ետ անինը (իսըննք)». «Ո'չ, կը պատասխանէ օրիորդն, հէմ լանք հէմ երխանք». Այս առած կամ ասացուած այլ պարադայից մէջ ևս կը դործածուի, ղօր. «Թէև այս ուրախուխիւն, խօսակցուխիւն հաճելի է՝ բայց վերադարձման, հիւրերն ընդունելու ևայլն պատրաստուխիւնն ևս չի մոռնանք».

461. Հնտուստան կլլէ (կլանէ), բերնէն հոտ չի գար։ ---Եթե մեծագումար հարստութիւն իսկ ունենալ կամ շահի՝ բր-Նաւ չի լայտներ։ 462. Հոգի Աստուած չի Թողուր։ — Առանց միջոց տալու կը պահանջէ, կր թեախանձէ։ 463. Հոգին տուեր՝ գաղտուկ կ՝ապրիչ--Թէ և կենդանի է բայց գերեզմանին դուռը հասած է։ 464. Հոդին քարերը կու քսէ։ --- Անգործ հնալէն կամ **ղբ**օսնըլոլ ընկեր չի գտնելէն սիրտը կը նեղանալ։ 465. Հոգիս կառնէ կամ առաւլ-Շատ կր թատանձէ։ 466. Հոգուս տունը կը Թնտալ։ -- Կը զայրացնե, կը ցա-Light: 467. (այս ինչը) Հողուն ու ջրին երեսը չի կայ։ .... Ծատ կեղծաւոր, Նենդամիտ, չարաճճի է։ 468. 2nd yne y tumber (luwune fo fu uso) Ampuny under 5. լաճախորդ չունի ։ 469. (ուն կոը) Հում հում կուտեւ -- Բաղդատարար լոյժ . զօրաւոր է. կրնայ զայն չարաչար յաղ[Ժել։ 470. Հծ-ի մր կունայի։ — (այս ինչ տեղ դնայու համար ևայլն) Պատրաստ է, առաջարկի մը, առլժի մը կը սպասեւ (Գուցե «Հօւն՝ կովուն գործածեայ «Հօ -- գնա»ին իմասunit (.): 471. Ձագը կելե մարը կուտել....(կը պատահի որ) Տոկոսն մայր դրանն կ՝անցնի. ապրանաց այնչափ ծախք կ՛րլյալ որ ապրանքն տալով իսկ ծախքն չի գոցուիր։ 472. Ձաղկուիլ (ԹոԹուրտելու պէս)։ — Անմոարար սը-Նոտի, փառասիրական ցոլցեր կամ ծախըեր ընել։ 473. Ձանը տեղն ու խուփն 1/ վրան. -- (այդ խօպը) ۹էտը է ծածկել, լոել որ չի տարածուի։ 474. (այս ինչն) Ձեռացն եքսէն (ետևի կողմը) ու ա. **ուս չար չի** գիտե՞ւ---Տգենտ է. մեղ քն ու վարձ բր, շահն ու զենթ mhunf; (ش

E. porto fun down

- 245 -

475. Ձեռացս մէջ գրուած էր։ — Կը զգայի, կը գուշակեր [Ձէ այս դէպ քն պիտի պատահեր կամ այսպես պիտ՝ ըլլար։ 476. Ձեռաց տակե ծախեց։ — Գազտարար ծախեց։ 477. Ձեռք բունել։ — Օգնել։ 478. Ձեռքը արունը մի' ԹաԹխեր։ — Մի դատապարտեր մինչդեռ իրոզուԹիւնն լաւ մի չգիտես։

479. Ձեռքդ (կամ ուղքդ) ԹեԹև է։

480. Ձեռքդ ձեռքս չէ դպեր։ — Իմ հետ առևտուր մի չես ըրեր որ փոքր ՝իշատէ դրամդ առած ըլլամ. կամ գրամ պարդևած չես։

481. Ձեռքէ անցունել (վաճառք ևայլն)։ — Հատ հատ զատել հարևանցի կերպով և դուրսէ մարդ չի գիտցած։

482. Ձեռըս արունն ուր ըլլայ (պետը է երթծալ ևայլն)։ —Ո'րչափ ալ ծանրադրաղ վիճակի մեջ ըլլամ՝ (պետը է երթծալ և սյլն)։

483. Ձեռքը բերանը կերթայ։ —Ապրուստը, վիճակը փոքր ինչ բարւղքեր է։

484. Ձեռքը գիտես Թը շանը կրիճն է լուացեր։ — Դըժբախտ է ձեռնարկութեան մէջ։

485. Ձեռքը կըրնըկին է դրեր։ — (հիւրը) Ճամրու դրեր է, ակնարկելով որ գնայ։

486. Ձեռըը մէջը քնաց. կամ ձեռըը ըարին տակը Քաց։ Աջ բաղուկը, օգնականը մեռաւ կամ այլ երկիր գնաց, անօգնական քնաց։

487. Ձեռը ԹոԹվել կամ ձեռը ըաշել (հիւանդե սր կամ յայլոկ)։ — Հրաժարուիլ օգնելէ, յուսահատիլ։

488. (այս ինչն այս ինչին վրայ) Ձի կու բալեցնէ։.... (անոր վրայ) Կը յոխորտայ, ճնշում կը բանեցնէ։

489. Ձիու պես կու Թրքեր։ — Շքեղ կեանչը մը կը վա. բեր. մեծ, շռայլ ծախքել։ կ՝ըներ։ 490. (վասն աղջկան) Ձիու վրայ ելնելիք է։ — Հասուկ է, - 246 -

÷ •

V \* \_3

ամումնանալու համար բիչ մ``անցած է (Հիով պատկ տա-Նելն ակնարկելով)։

491. ՁԽանը (ձեանն) վրայ կու քալե, իզը (հետքը) պելլիսիզ (աննշմարելի) կ<sup>յ</sup>անեւ — Գաղտագողի կը գործե աոսնց իւր նենգու [ժիւնը յայտնելու։

492. Ջորվան բորակ է (Ջորակ դիւղի փոքրիկ կարաս է)։— Հինաւուրց սնած, տոկուն մարդ մնեւ

493. Չունը երկրի (այլոց) երդիքը պողեց։ Իւր դժուարուԹիւնը ուրիշի գլխին կապեց։

491. Ճակատդ հաշկին մի զարնելու է։ Մրցանակի կամ գովեստի արժանի ես (յանդիմանական կամ ծաղրական ձևով)։

495. (ստացուած քը այս ինչին) Ճակատը գրել։--Շը-Նորհել, կտակել։

496. Ճաղէն (դագաղն) տ՝իչնի։ — Ծաղրող, բամբասող, ղրպատող է. (ուստի կը կարծուի Թէ ՝ի պատիժ, դիակն դագաղէն վար պիտի իչնաչ)։

497. «ըրայիլ ման կու գայ (բեզի)։ -- Դեռ բեզի ան. կարևեր կը լժուի։

498. Zuulenmele (podode) nd of yww. \*)

499. Ճի արաւ գնաց։ — Եկաւ և իսկոյն մեկնեցաւ։

500. Ճիժանանը ու չաղանանը (չափահաս կամ ծեր խօսակցին ուղղելով)։—Դուն չափահաս ես բայց այդ ըրածդ խաղը, խեղկատակուԹիւնը ևայլն տղու դործեր են։

501. (մեր) Ճիկերը (Թղջ) անոնց դուռն 'ի վար կախ է։ —(մեր ևայլն) Աղջիկն ւմտնց տունն հարս է. (ուստի պետջ է հանդուրժենք և խոնարհենք մեր աղջկան սիրոյն համար)։ 502. (այսինչին) Ճիկերը փարայ մի (կամ) 5 փ. չար-Ժեր։ —Անպիտան, փոքրոգի, երկչոտ մարդ մ`է։

-ոմաղար միջարկե մկանց խորհուրդն, որ կ'ուզէին կատուին պարանոծրես բոժոժ մի կախև որպես զի գալու ձալմու առևելով փախչին, բալց օլեցանել է միսնցություզիմա մրդուրչում (իովեւականություն, ու 503. בהלו הם למרחה לעלים לא היא האלים לא היא היא האלים ביים איניים איניים ביים איניים איניים איניים איניים איניי

**վ, ծախջ** րնել տուին։ 504. Հանձը (ճանձը) ոռուն կու խածնեւ--- Յոյժ Ժյատ 5, juipunganting futuring 5: 505. (կտաւի կամ կերպասի նկատմամը) Ճոնճը պայբախովը (դրոշ) կ՝անցնի։ — Գործուածքը շատ ցանցառ է։ 506. Հոնմ ու մժեխ էր։ - Անթեր բազմութերւն կար։ 507. Հոնձ (ճանձ) տիլընիմ՝ պատը տի փակչիմ։ ....Ծե. րացեր եմ. բաւական է այդքան ապրիլու 508. (այս գործեն այսքան գրուշ) Հչեց։ — (այս գործեն այղջան դրամս) Փճացաւ, միաս կրեցի։ 509. Մազր ձարէն դատել։ .... Մանրամասն հաշիւ տեսնել։ 510. Մաղիս դիմովը։ ..... Շատ անգամ։ 511. (Տօրմեն ևայլն) Մաղ մի կալլէ (ունենայ)՝ ձեռը ունենալ՝ բաշական է։ 512. Մաղս վեր կու բաշեն. (իրողու Թեան մը պատմու-(Ժեան առ [ - ի - + unifib ] ի է (այդ իրողու [ - ի և և այլն): 513. Մալ գտած գող դարձալ։ --- Ցանակնկայս երը ստաgui, luig urbahandanis 514. Ung pray (=1/4) www by west -- Une of towners 515. (խեղճին, ողբացելոյն զաւակունքը) Մաղին տակն 516. Մայմութ (կապիկը) անոր դուռը կու խաղայ։ ---Այս hop widd iwgnyne forun ity ti 517. (այս ինչ կինն) Մանածր փուռը տիտայ. -- Օրական **հանածովը կապրի.** (ուրենն ինչու չի կենար կամ չի գար)։ 518. (սակարկու Թեան, խոստման մէջ) Մանչուն ու աղ-

• •

- 248 ---

520. Vannepa for legist: --- Vyuko + pushenak , Skąisk ևալյն։ 521. Մատը բերանը դուրս ելաւ (տնեն, գործեն)։ .... Զրթկանը կրելով՝ առանց բան մ^առնելու բաժնուեցաւ, դուրտ bjw\_s 523. Մատը բերանը Քապլ-Զարմացաւ, ապշեցաւ մը-Նաց։ 524. Vump apus mingto if dipgilips --- Budun. 4. 525. Մատր մախիրը չի ԹաԹխեր։ — Աշխատութեան, րարեգործութեան բնաւ չի մասնակցիր։ 526. Մատի վրալ կ՝առնէ, կամ Մատի վրալ կու խաղցնել 527. Մատնամլուր արին։ — Չարաչար բամբասեցին, մե**ղա**դրեցին։ 528. (կերակրոլ նկատմամբ) Մատները հետր կերաւ։ 529. Ծատնով ցոյց կուտան։ 530. Մատս հոտ կուտալ։ — Ի՞նչպես կարելի էր գիտնալ կամ գուշակել Թէ այսպես պիտի ըլլայ։ 531. Vunn dyt 4:- bu m Suntunging bili (գործի կամ հրաւերի համար)։ 533. (վասն կերակրոլ) Մարդուն բերնին կու գը Քըթալ (կր Suisait):-Baid Sudan 40 Bach, Supp whous had 40 the huph nembra 534. (անդ) Մար զմանուկը կ'ուտէլ Մեծ իրարանցում, խառնաշփոթծութիւն կայ։ 535. Մարր դնէ (որդշոյն անոշնը) գեղը՝ կանչէւ — Մայրն երը որդ որ գեշ անուն մի տալ՝ օտարն այ կ՝սկսի ըսել։ 536. Մարը վեռեքը է, կամ տի վեռնին. (ուտելեաց ևայլոց Նկատմամբ)։ — Ինչու կաճապարես կամ կր հոգաս Թե սպառեgue. Jun կայ տեղն, կամ շատ պիտի գայ։

- 249 -

537. (մինչև ուր այս գործը տեսայ ևայլն) Մարս իս մեյ մ՝ալ բերաւ։ – (այս ինչ դժուարին գործը գլուխ հանելու համար) Շատ նեղուքիւններ կրեցի։ 538. Մեծ էշը ախոռը մոռցանը։ 539 Մեծ հիւր՝ ու պղտի պատիւ։ – Մեծ հարասնիը,

խնջոյը ևայլն կնե, բայց պատրաստու Թիւնը քիչ է։ 540. Մեծ պատառը ականձը կը մնայ։

541. Մեծ տատիս տարին գիտէ։---Շատ տարիք ունի, Տուրեալ է։

542. (վասն անձի կամ գործի) Մեղջ պորտուն վրայի եղին (իւղին)։ – (այդ անձն կամ գործ) Բնաւ արժանի չէ այդ Տախուց ևայլն։

543. Մեղջա կ'ուտուի.—Կ'արգահատիմ, խղմալի է (այս խնչը). ընտիր, մաջուր է (այս ինչ բանը վաճառելս, գործածելա հայլն չի գար)։

544. Մեռայ ու ողջցայ։ –Մեծ մտահոգութեան մեջ էիչ բայց այժմ սիրտս հանդարտեցաւ։

545. Մեռելէն իարա<sup>2</sup> (տճկ. հարկ ըրիստոնեից) կուղես։ -Այդ անձը տկար, ընաւ անկարող է այդ պարտաւորու-Թիւնը կատարելու։

546. Մեռելը իր օրը կու լան։ — Ամեն բան իւր ժամածակին պետք է ընել։

547. Մեռելը կու խնտացնել.....Շատ զուարճախօս է։

548. Մեռելիդ աչը ես էի ճանկեր։ – Քեզի ի՞նչ վրատ բրած էի, կամ ի՞նչ Թերու Թիւն ըրած էի։

550. Մեր էր ու ձեր եղաւ, ետի տէրը սրտացաւ եղաւ։ ~ (այս աղջիկն, անձն ևայլն) Շատ ժամանակ մերն էր. այժմ գեռ նոր ճանչցաք և իրը Թէ մեզմէ աւելի կը խնամէջ։ 551. Մեր իշուն պաղարդիր նայինը։ — Մեր գործին նայինը։ 552. Մեր տունը ջներ է ելեր։ Մեր տունը տուն չէ՞. կեցիք, այստեղ ևս խորհուրդ դարման կ՝դաներ։

553. Մեկ աչ քեն մեկալը չէր իտար, կամ չի տար (գայն)։ --Շատ կը սիրեր, կամ կը սիրե (գայն)։

554. Մեկ աչըր լայ, մեկ աչըր խնդայ՝ (տ՝ընե, տ՝եր-Թայ ևայլն)։—Կամայ Թե ակամայ՝ (տ՝ընե, տ՝երԹայ)։

555. Uty Unmaria put part of the Source of t

556. Մեկ դրան շան պես էեչէ են՝ չ եղէ+ (ապրեցէք)։---Ինչու կը կռուիք, հաշա ապրեցէք (իբրև դուարճարանու-Թիւն)։

557. (վասն երկու անձանց) Մէկ խնծորի **շէփող (հաւա.** սար կէս մասն) ինչ--Երկութին բնուԹիւնն, պեմբն ևայլն Նոյն ենչ

558. (վասն անձի) ՄՀԿ կտաւի ՃոԹու ին։ --- Միևնոյն բնութիւնն ունին։

559. Մեկ փարային վրայ մուկ կու մորք եւ-- Ժլատ եւ 560. Մեջն երերուն ենը։--- Անորոշ տարտամ կացուք իւն մունիմը. տարակուսանաց մեջ եմը։

561. Մէջ բր կոտրեցաւ։

562. Մէջ քը շտկել։ — Անձկու Թենէն աղատելով վիճակը բարւոքել։

563. (վասն անձի կամ գործի) Մէջըս ամուր չէ։—(ա-Նոր խոստման կամ այս գործին) Վստահ չեմ։

564. Մը[Ժղալը առաւ։ Վտանդաւոր դրու[Ժիւնը լրում դտաւ. բանը շատ վատ է։

565. Միզը մանել։ — Գաղտնիքը գիտնալու համար հարցաքննել. մորթեն, կերպասին ևաչլի խորը մանել։

566. Մինչև 40 ընկոչգը մեկտեղ չի տեսնե՝ քար մի չի Նետեր։ Մինչև որ չաջողուԹեան մեծ հաւանականուԹիւն ձեռը չը բերէ և վատահ չըլլաչ՝ չի գործեր։

fuqugalera was le uton la po 209/1: 568. Միսն 'ի վրան կ'ուտէւ--- Անհանդարտ է, ինթղինըն կը տանցէ։ 569. Միպը աուսցնել։ .... Ուշադրու Թիւնն, կասկածն ղար-Bugutur, Soune undplater 570. Vne for fibelit ne buge stiller fund ' har affuns -ի տրապե կը վշտակրի, բայց չի յայտներ։ quanto unita l'aquest 572. Մուկն իյնի գլոխը կը պատուի։ — (դարակը, մարագը եպյն) Բոյորովին դատարկ է։ 573. Մաեր է (այս ինչէն)։ — (անոր խօսքէն կամ արարeth) Վշտացեր է, առանց յայտնելու. 574. (այդ հաշիւր, առևտուրը ևայլն) Մսին կու դպչիւ -Թողումը շահն՝ դրամագլխեն ալ քնաս կ՝րյլայ։ 575. Մսեն կ'ուտէ։ .... Դրամագլխեն կերթեայ։ . 576. Մակեր է. (այս ինչին) Միսը կ'ուտէ։ — Բամբասող t, he purfamate . 577. Մտած դունեն դուրս ելաւ.....(այն գործեն կամ վա. Smalte) Ne zwitzgwe, le ne itewa wbawe: 578. Մազքդ անցածը ամպավարի լեռներն անցնի։ – Կը սպեսմ, որ սիտքը կրած չար խորհուրդը, փափաքը չը 4mmmpn.pr

... 579. Մօրդ փորը ինտոր ինն ավիս կեցար կամ համբերեցիր։

580. Մօրը մանածը ծակներ է։ — Վարպետորդի, փոր-Հառու է։

581. Մօրուացը բուրդը կուտալ, կամ տըկէն անցեր է։ —Կեղծ գովեստներ կը շռայլէ։

. :

--- 251 ---

583. Մօրու<sub>Ձ</sub>ը համրեր է։—(այս ինչն այս ինչէն) Այնչափ երես առեր է կամ գաղտնեացն Թափանցեր է՝ որ չակնածեր այլ ևս։

584. Նալերը նետեց։ .....Մեռաւ սատկեցաւ։ ՝

585. Ներկել (բաց ի սովորական իմաստեն)։—1. Ներկը Ներկեց։—Գործը վարպետու Թեամբ տեսաւ։—2. Բացը Ներկեց։ —Գաղտնիքը խօսեցաւ։—3. Ներկը ցցուց կամ դուրս տուաւ։ —Չարու Թիւնը, մոլու Թիւնը չայտնուեցաւ, երևան ելաւ։—4. Ներկդ երևան կու հանեմ։—Գաւդ ևայլն կը չայտնեմ։

586. Ներսուկ ջեղի կ'ըսիմ, դուրսիկ դուն լսէ. (ըստ ոմանց՝ «Հարմնուկ, ջեղի կ'ըսիմ, դուստրիկ, դուն լսէ»։—Մէկը խրատել, յանդիմանել, որպես ղի ուրիշը խրատ առնու, ղղուշանայ։

587. Ներքն-գործ էն-Խորամանկ էւ

588. Նէպզը (երակը) բռնել։ — Մէկու մը բնոյթը գիտ-Նալով ըստ այնմ վարուիլ։

589. (புயம் யம்க்ரம்) பிழ்க் (புரம் குறையிலை) பியரைம் து. இது பிரியிற்கை குறையில் குறையில் குறையில் குறைக்கு குறியில் குறைக்கு குறியில் குறைக்கு குறியில் குறு குறிக் குறிக்குறில் குறிக்குறில் குறியில் குறியில் குறியில் குறியில் குறியில் குறியில் குறியில் குறியில் குறில் குறு குறைக் குறைக் குறு குறு குறைக் குறைக் குறு குறு குறியில் கு

590. Նոր աշխարհը եկալ։

591. Unp tomber (oskp) 4: - rota unp nupp & yuurghor, uyub & yuurus aphilo :

592. Շանը շապիկ կու հագցնե, կատուին վարտիչը։— Խորագետ կամ խորամանկ է։

593. Շանը շնուԹիւնը գիտե, կատուին բնուԹիւնը։---(Նախատական ձևով) Խորագետ է, ամեն բան գիտեւ

594. Շանը փարներ (այս ինչին) գլուխը անցուց։ — Խըստիւ յանդիմանեց (զոքն)։

595. Շանը փարթեր խատարծան տի լեցնեմ։—(այս ինչին)։ Ջուր տեղը ինչու դրամ, ընծայ տամ։ 596. Շան մսի գին է։

- 252 -

597. மேல்ல் Som இடை இடை பாழ் பிரியில் --- பூல் தயா புகாடய. கூடு வலக்டும் Som நீல் திட வழி பிழையகழியில

598. Շան քարող տալ. քարողել։ — Օրինակներով դան հատկց՝ել խօսակցին (ղօր. եթե խօսակիցը աղդական է, ըսել՝ «Այս ինչին աղդականին այս ինչ շնորհը ըրեր է կամ կ՚ը-Ներ ևայլն)։

599. Շապերն հետ կու ծեծկուր։ — Անհարդարտ է, միշտ կար ևայլն ընել կ'ուղէ։

600. (վասն անձի) Շատ հաց ու պանիր պիտի ուտէ մինչև ուր։ Դեռ շատ ժամանակ պիտի աշխատի, մինչև որ (անոր հասնի)։

601. Շեմանը կրունկն է բուսեր (վասն անձին)։—Շատ մծա դրացի է։

602. Շեմը անանկ է բերեր, կամ շեմեն է։--Այն տանը աղջիկներն, ծառայներն ևայլն նոյն բնուքժիւնը կ'ունենան, կամ դժբաղդ կ'ըլլան։

603.Շէն անունը աւեր քաղքին (ին դրեր)։ — Հանգուցեալ այս ինչ երևելի անձին անունը աղգականեն կան ՚ի Թոռանց այնպիսի անձի մը դրած են,՝ որ հանգուցելոյն կարողուԹեան կան առաջինուԹեանց և ոչ մին ունի։

604. Շենը կ'ուտէ՝ աւերը կու Թրքէ (վամն անձի)։---Տունը կու նոտի, ՆորոգուԹիւնը չի հոգար։

605. (այս ինչին հետ) Շէջէրի է։—(այս ինչին հետ) Սասիաւ ինչ դժահայ է։

606. Շըլլին կախ է։ — Զրկեալ կամ տառապեալ՝ տխուր է։ 607. Շըլլիս երկնցաւ (նայելով ևայլն)։ — Անդետ երկար ապասկցի։

608. Շրլլիս բրզ (բան զ) մազը րարակ է։ --ԵԹէ յանցանըս հաստատուի, ես ՝ի տանջանս պատրաստ եմ։

609. Շողգաժին նոսրը Թորզէն (Թանձրէն)՝աղէկ է։—Լաւ է որ այնպիսի մարդոց այցելուԹիւնն, յարաբերուԹիւնն սակաւ լինի։

È

610. (անձի մը նկատմամբ). Շուն անձր կ'ըսիմ՝ ուր իր տերը խածնեւ....Անձ մի որ իւր տերը կը բամբատեւ

611. Շունը կապես չի կենար (վասն տեղլոյ)։ — Բնակու-Թիւն անկարեյի է։

613. (անդ) Շունը շապիկ էր հագեր, կատուն՝ վարտիկ։— Բազմունքիւն շատ կար (անդ)։

614. Շունը պոչը փարտէ, այս ինչ տեղացի, կամ այս ինչ արհեստաւորը են (անդ)։—(անդ) Այս ինչ տեղացի կամ արհեստաւորներէն ևայլն շատ կայ։

615. (այս խօսքը կամ արարքը) Շուն, իս (զիս) խած ըսել է։—(այր խօսքովը ևայլն) Թշնամիդ կամ այս ինչ անձր ի զուր կը գրգռես։

616. Շուն կ՝արծէ։ — Անգործ՝ աստ և անդ կըդեղերի։ 617. Շունն առնէ մեղջը։ – (Թէև կասկածելի է, բայց) Չեմ կրնար պնդել անպատճառ, Թէ այն յանցանջը նորա գործածն է։

618. נחבים לך שלקה לא משטצטשר:

۳, ۰

619. Շունն լիշէ ու բիրն հայէ (կամ նայէ)։—Ահա այտ ինչ անձն զորվե կը խօսեինչը, եկաւ. (անարդական ձև մ 4)։

620. Ոնցեր (անցեր) ինք լռատ առուէ, ագուգին ջրերըն ենք մնացեր։ — Անցան մեր բարեյաջող օրերն, հարստու-Թիւնն կամ հոյակապ անձինքն, և այժմ աննշան անձանց ձեռ.թն կամ կարօտն եմբ մնացեր։

621. Ոջիլը բայլա բայլա եղաւ։.....(երբ աղաչեցին, գովեցին զինքն) ՓառասիրուԹիւնը գգուելով՝ հպարտացաւ։

622. (գործն, գալուստն) Ոռըը փակաւ։ — bon iliwg, արգելքի հանդիպեցաւ։

623. Ոսկու հորը ինկաւ։ — Հարուստ անձի տունն հարա հղաւ։ 624. Ո'վ գիտէ, ի՞նչ Թև ու ճիվ կոյեր է։ — (այն հարսաուԹիւնն ևայլն ձեռը ձգելու համար) Ո'վ գիտէ, ի՞նչ զրկանը, անիրաւուԹիւններ ըրեր է։

625. Ո՞վ է մեր խօլլաքը (սողՆակ փայտեայ, այգեաց գրուն) կու լխուցնէ։ — Ո՞վ է այն որ գաղտնապես զիս կը բամրատե, վետսել կ՝ուղէ։

626. Ո՛վ իս ըղնկին, ես ան ըռըմպին։ …Ո՛վ որ ինձ փոթր բարիջ մ`ընէ կամ պատուէ զիս, փոխարէնն մեծ բարիջ մը կ`ընեմ անոր, կամ`աւելի ևս կը պատուեմ։

627. Ո՞վ որու տարի՞ն (խօսակցի՞ն ուղղելով)։--Ի՞նչու կ<sup>1</sup>աճապարես կամ մտահոդ ես։

628. Ո՛վ ուր մեզ գալած՝ կնտած ու մազն առած։— Մեզի աժան վաճառը (գրաստ, ոչխար ևայլն) չեն տար, [Ժէև լաւ, շահաւէտ կ՝երևայ, բայց [Ժարմու[Ժիւն անցած կամ [Ժերութերւն մ՝ունի։

629. Ոտացդ տակը հաւկիթե կայ։ – Ինչու շատ ծանր կը քալես։

630. Ոտաց ձեռաց կուտայ։ — Խնայողու Թեամբ կ՝ապրի, հռանդով կ՝աշխատի։

631. Ոտուին դետինը կու ծեծէ։—Կը պնդէ, կը տոիպէ։ 632. (այս ինչ կինն ինչեւ չի դար) Ոտուին հինայ է դրեր. կամ ոտացը հինան կու Թափի՞ւ—ՉանձրուԹիւն, կամ արդուղարդին մեննս կ'րլլայ։

633. Ոտըդ վեր առ (ուղեկցին)։ — Արագ բայլէ, փութատ 634. (այս ինչ բանը) Ոտըը ժողվեր է։ — Սպառելու վըրայ է։

635. Ոաքը լուա ու ջուրը խան: -- Ցարգը գիտցիր։

636. Ոպքը քաշն է ձգեր։ — Դիտմամը կերկարաձգէ իշր գալուստը կամ մեկնումը։

637. Ոտքը բսեց։ — Եկաւ, և անկե յետու ուրիշներ ալ ակսան գալ։ 638. Ուղջին կուտայ։—Իւրեան եղած շնորհն, բարիքն .ուտնակոխ կ<sup>ո</sup>ւմնեւ

639. Ոտքին սապուն տուաւ։ – Հնարքով մի (այս ինչին) ճամբել տուաւ. (նրա տեղը բռնելու համար)։

640. Ոտբը կու զարնէ (ապրանացն վաճառման, գործին չաջողութժեան)։

641. (այս ինչն դեռ) Ուղջովը կան...ովը վարտիք չէ չորցուցեր.—Դեռ ՆեղուԹեան չէ հանդիպեր (զոր ՃամբորդուԹեան մէջ Թրջելով, Թրջած շապիկն իւր վրայ չորցած չէ դեռ)։

642. (այս ինչ ուտելիքն ևայլն) Ոտը ու ձեռը է։ — Շատ առատութեամբ կր գտնուի։

643. Պտըս առաջ չերլծար։ —Թէ և կ՝երլծամ, բայց եր-Հկիւղով կամ կասկածով գոգցես կ՝զգամ Թէ չպիտի յաջողիմ։ 644. Պտըս կոտրեր Նստեր իմ։ —Ստիպուած եմ տումն

ւրունը, որունը, որունը, որունը, ներաները, որունը, որունը, որունը, որունը, որունը, որունը, որունը, որունը, որուն Արտանիչ որունը, 
645. Ո'րը կոտրի՝ երկու Թարաֆն (կողմն) իմ։--Որ կողմն ալ լաղԹուի, կամ խնդիրը ի՞նչ ելը ո՞ւնենալ, գործիս կուգալ։

646. Ո° ո մատը կտրին նը արիւն չ'ելլեր։

647. Ո՛ր ջար ամուր է Նը, գլոխը ան ջարին Թող զար-Նէւ Որու կ՝ապաւինի կամ քնչ միջոցի դիմել կ՝ուզէ, Թոդ դիմէ։

648. Ո'ր քար վեցնես, տակէն կ'ելլէ։ —Ամեն խնդրէ, լուրէ տեղեկութիւն ունի։

-տաաս էլուչ ուչ (ո՛չ) ած (Թերևս՝ այծ) ունինչը, ուչ ուլ, սատ-Նին ակոնջը խուլ։ —Չունիմը ոչ զաւակ և ոչ սորա նման բարիը, և ոչ ալ հոգ և զբաղմունչը։

650. Ո'ւչ աստենի է, ուչ անտենի։ — Ո'չ աշխարհային գրոսանք ախորժ կը զգայ կան գործի կը խառնուի, և ո՛չ հոգևորի. անտարբեր մարդ մ՝ է։

Ē

ŧ

- 257 -

631. N'Ly wpngh by the apagh -- 2k . of mucho for

quil ny swohp: 652. N'LE & 100, 1-2 & 1000000 653. Ո' ւչ իր է, ուչ իր տիրուն։ \_Ո' չ ընտանհացն և ոչ her whith ognen of sacht 654. Ուռեցեր է։ -- Նեղացած սրտմած է (բայց չի յայտներ)։ 655. Ուռին տոնծ մի կար, բզ (բանդ) գլոխս մեծ է։---Այդ րաածդ կամ խօսածդ անհաւանական է, սուտ է։ 656. Ilca de neante gibges, ander de fonnets - 450, այտերն կարմեր, և քաջառողջ է։ 657. Ուռն ի կուռն ալ չէ։ — Այդբան նիւքժական ապ-בחרוות לבנון לי שו לחבינים: 658. N'Lp boom ofunts 400 mpml 4: --- Udit ncpkp umj. Jubblepte, Suspete tongte 5: 659 (վասն անձի) Ո'ւր ուտէ, հոն կու հաչէլ -- Իւր ապencomp, շահը neulty որ է՝ 'ի նպաստ անոր կը խօսի։ 660. 2-1 (qtumulp) nugto f: --- Upptup f: 661. (այս ինչին) Չարիը (անի., Ճախարակ) դարձաւ։ ... Բախար (1 ի վատն) դարձաւ։ 662. (այս ինչ խօսքը կամ անձն այս ինչին) Չարու Հի (կատնին) տկեն ելևր է։ — (այս դեշ խօսքը) Այս ինչէն ելած, հնարուած է․ (այն խարերայ կամ Ճարպիկ անձն) այս ինչէն կլնուած սովորած է։ 663. Չըսանը Թը խաղբախո (գլիսակս) տուր։ — Աննշան օգ. <sup>Նու</sup>ԹեաՆդ փոխարէն տուած ձանձրուԹիւնդ շատ եղաւ. ըե**գ**-📕 այր փոթր աշխատուԹիւնը խնդրելես զղջացի։ 664. Չի կարած չուանը չէ քնացեր։ \_\_ Ավեն գեղծմուկը ar Jajar Philip gapower 5: 665. 2/1 (2/11) newby, 2/14 (41140) Laborer 2010 666. (யிழ தியகு க) 2/1 மம் முட சு 2 வி ம சு 4-•n. hu:---(wju ինչ տեղ գնացած է, բայց) Բնաւ երես, կաphopologica to some to participation

.

17 \_\_\_\_

667. Չի քաներ։ (այդ խաղերն կամ առաջարկդ) Չըլլար, հաշուի չի գար։

668. Չմոտո (շաղախ) մ`է պատը զարկ. բռնէ նը՝ (ԵԹէ բռնէ) րռնէ, չի բռնէ նը՝ չի բռնէ։ Առաջարկ մ`է, փորձ մ`է ըրէ, ԵԹէ ընդունի, լաւ. ԵԹէ չընդունի, միաս մի չունիս։ 669. Չոր է։ -- Ժլատ է։

670. Չոր կաւռին (ջրի կաւառին) վրայ խաղմա (կռիւ) մի՝ անեքւ-Առանց շահու գործ մի կենալու, իզուր կռիւ մի՛ ընեք։ 671. Չորս դին ծով կտրիլ։-Դժուարութեանց հանդիպելով՝ շուարիլ, վհատիլ։

672. Չորա դիս նայելու ժամանակ չունի ն- Կարի ըդբաղեալ եմ։

673. Չոր փատը չոր արունը մի' քաեր։—Այն անձն ևայլն անմեղ է. ըստծդ զրպարտութերեն մ`է, մի՛ ըսեր։

674. Չուլ անել։ — ՔղԹի, նարափ ևայլն խաղի մէջ մաս մը (բարԹի) շահիլ. կամ երբ մէկը մէկու մը այցելէ և տունն չի գտնուի, այցելողն «Չուլ արի» կնցել

675. Չուլը կ՝երԹայ, չուլքը կու Թափիւ—Հագած զգեստն շատ հին՝ ցնցոտիներ են։

677. (այս ինչին) Չուլի վրայ նատեցուց։ — Կեղեբեց, տնանկացուց։

678. (երբ եկաւ տեսաւ որ գործը լմնցեր է)՝ Պաղ ա. ռաւ։.....(ուշ հասաւ, և իւր շահն ուրիշն առնուլն տեսնելով) Անյաջողութենեն տրտվեցաւ։

679. Պաղ Յոնիրէն տար հանց (կու բնտուէ)։ – Վերջա– ցած հաշուէ կամ անկարող անձէ մը շահ կամ իրաւունը մ<sup>ո</sup>ստանալ կ<sup>յ</sup>ուղէ։

680. **Anypri** (prozwy) pwgwe (f2...)—Aupby, wgwe, unnwy (f2. kwjw):

681. (պահանջը) Պատ եղաւ։—Չառնուիր այլ ևս. (զի պարտականը սնանկացաւ ևայլն)։ \*- - 259 -

Ч.

682. Պատենքը պատուեց։ --- Ոգեվարը և անյոյս վիճակե մաղատեցու. ապաքինեցու։

683. (այնպիսի միս մ՝ էր որ) Պատը դարնես չի փակ-Հիրչ — Յոյժ վատուժ էր։

684. Պատը խաղե (գծէ)։ — 1. Այս ըսածս միտքը Թող մնայ. օր մի երբ սխալդ հասկնաս՝ յիշէ այս խօսքը կամ նըշանն։ 2. «Պատը խաղեցէը» այս բարեկամը չէր իդար. եկաւ (մեղադրանչը մ է)։

685. Պատին ևտին պատարագ մ լներ։ — Գաղտնածածուկ Ք գործեր։

686 Պառկած տեղեն դանակ կու քաշեւ — Իւր պարտեալ, տկար վիճակին չնայելով դեռ կ`սպամայւ

687. (այս ինչին) Պարկենքը (պատկերը) պատը տեսնէ, կաւըրէլ--(նմա) Հակակիր է. յոյժ կատէլ

688. ՉՀռենց (ի Կամարակապ) տունեն Վառենց (Արփիարեանց՝ որ լԱպուչէխ) տունը խնամի՞ ես եկեր։ —Մեծ, հարուստ տունէ մի մեծ տուն մի խնամի՞ ես եկեր. ինչու այն-Հափ ծանր նստեր ես, կը նաղես։

689. ԳՆԳՀՀ (սովորաբար կանանց և 'ի Հնումն արանց ևս երկայն վերարկուն) այչին (Հասակին երկայնութժեան) բեթառ (ձևելով)։ — Նենդեց, և վերջապես Հաշիւր, պարաբը խօղքով գոցեց, անհիմն ծախքեր ևայլն ցուցնելով։ Երբեմն Ակը լսած է «ԳՆԴՀՀ այչին բերաւ, երկու մատ ալ գետինը կաւ չսութ....Անիրաւն ոչ միայն պարաբը խօսքով գոցեց, այլ, անխողճաբար, պահանջ ալ ունիմ կ'լսէ։

690. ( Ակու մի խոստման առնժիւ) Պի-լաի-լ» ըսաւ մեկ մի գնաց։ — Իօսը կամ խոստում մ՝ էր ըրաւ. յայնմ հետէ չլիշեր այլ ևս։

691. Վլղրեց (պլղուր-Հաւար)։--(աօսքին, գործին) Վեր-Զո չի բերաւ, առրեց։

692. (խնդրոյ մի համար) Պլոմոտիլ (որդնոտիլ)։ Գայ-Թակղիլ, շփոխիլ։ - 260 ---

693. Պողողը (կոկորդը) +էթ# (գիծ, աստիճան) չունի։ — Առանց խորհելու, բերնին եկածը կը խօսիւ (Գրսեն քժէ կոկորդը 40 աստիճան ունի, ուսկէց խօսքը անցնելով, այսինքն լաւ մը խորհելէ լետոյ կը խօսուի)։

694. Գոչդ մեջը մի՝ ձգեր։ Մի խառնուիթ, մի՝ միջամտեր։

695. (ղայն հեղահամբոյր կը կարծես, բայց) Պոչէն մազ մ՞առ ուր տեսնես։---Սակաւ ի՞նչ ծանր խօսէ, որ տեսնես, թե ի՞նչպես խիստ բնոյթն երևան կ՝ելնէ-

696. Պոչը կ՝երրցնեւ (անարգական) Կը շողոքորնե, կը քծնի (շան պես)։

697. Պոչը հանկուրծտել (հանգոյցել)։ — Ճամբայ տալ, հեռացնել։

698. Պոչը հաստցաւ, կամ՝ պոչը ձեռը չի պար»..... Հարստացաւ։

699. Պոչը վեր առեր է։---Ցանդգնիլ, նորէն խլրտիլ սկսած է։

700. Ange withig: -- Uwweltgwe, danwe:

701. Պոչին վրայ կոխել։ — Զոնն գրգուելով պատճառ տայ նմա լարձակիլ և միասել։

702. Պոչովդ աղտ (աղբ) բերիր։ — Դաժան, չարագործ, Հրասակար մարդ մի բերիր հետդ։

703. Պոչուն հետ կու խաղայ։— Գուի թե չի գիտէ հա. կառակորդին զօրութերնը, և թշնամական գործեր կամ ցոյցեր կոնեւ

704. (այդ գործն կամ դարմանն ընելով ևայլն) Պոչուն վրա՞յ է ցատկեր։—(այդ գործէն ևայլն) Խ՞նչ օգուտ տեսած է։ 705. Պորտդ տեղն ինկա՞ււ—(ահա ըսածդ, փափազածդ եղաւ կամ ըրիր) Հանգստացար։

706. Պորտեն միզող է։--Աներկիւղ և հարուստ է. ՝ ի հարկին կը մաջառի, կը ծախսեւ

- 4

<u>,</u> . .

707. Գարտը հոն ին կրյեր։ — Ինչու հոն յաձախ կայցելէ։ ե կը Յնայ։ 708. Գորտին վրանյ ին կըցեր (կտրեր)։---Իրե՞ն միայն սեպհական է այս ինչ ստացուած ըն։ 709. (win wime for her of men of a men for the pote -- Utonate դէ 'ի սերունդ կ'անցնի։ 710. Պուկը մոնել (մեկու մի):--Թախանձել, հարդ ու փորձ ընել (տեղեկութծիւն, գաղտնիքն իմանայու համար)։ 711. Չուկին (պարանոցին) վրայ կոխել։ — Ստիպել, բրո.-Sugaraby: 712. Պույնուղը (եղջիւրդ) եկանւ -- (Թախանձածը, պահանջածդ կատարուելով) Ինչդ աւելցաւ։ 713. Պոկուկը իսածաւ։ — Նշանացի ազդարարեց Թէ 🐗 houp, pl;  $71 ilde{4}$ ․ Պտուկդ եղ (իւղ) ձգէւ—Ցոլոդ կտրէ։ 715. Գրշումին (ուսնեաց կաթեր) տակեն օլո-լիլ (վրան րաց՝ փայտէ փողրակ, ուստի կը հոսի տանեաց ջուրը) տակը **գնաց. (ոմանը compt** տակեն պրչու մին տակը գնաց» կ'րսեն): --- Փրթր մնասեն խոյս տուաւ, և աւելի մեծին հանդիպեցաւ 716. Aosta 2nci 1 hith har www.ht. (udofo 25 proծրդ) Ահագին մարդ ես։ 717. (տունը կամ այս ինչ տեղը) Պոլ (դատարկ) կու Sw Mi --- Putonep 4. is np your ashus your 718. 902 նետել, լեցուն բռնել։---Աննպատակ հարցում՝ մ ընել և չսպասած բայց փափագած պատասխանն ստանալ։ 719. Ջուրը կու տանի, ծարաւ կու բերէ։ 720. (ապուրին) Ջուրը՝ կուտը փախ է գրեր (հայածեր **ξ):--(w**uyacpp) ζωυ βροσ ζ: 721. Ջուրը պատն 'ի վեր մի' հաներ։ -- Գործր մի' գըdacupuguap. դիշրին եղանականն գործէ։ 722. Ջուրը անալելը (բարե գուշ) կու պնե (կու ծեծե):--**Ջուր կր ծեծէ.** առանց նոր բան մի աւեյցնելու՝ ի զուր կը

- 262 ---

կրեն, կերկարէ (խօպըը կամ պայմանախօսութերւնը)։

723. (այսքան գումարի մի վրայ) Ջուր լեցուցի։ ----(այսքան գումար) Ջոհեցի (`ի փորձ կամ `ի զգուշութեիւն)։

725. (այս ինչ պահանջիդ վրայ ևայլն) Ջուր dի խdեւ---Ցոյսրդ կարեւ

726. (անգամ մի) Ջուրն առուն իչնայ նէ՝ եպըլ իօլայ (դիւրին) է։—(գործը) Երբ կանոնաւոր վիճակ ստանայ՝ շարունակու[Ժիւնը դիւրին է։

727. Ջուրն 'ի վար կ'երքժայ, Տախատ (ակրատ) կ'լաէ։ — Յամառ է \*)։

728. ∑Ջուրն 'ի վար տամ (քեզ) ջուրն 'ի վեր բնառեմ։ --- Ատելի ես, չեմ ուզեր երեսդ տեմնել։

729. (2 անձանց նկատմամբ) Ջրերնին մեկ առու չեր-Թար։ — Համաձայն, միաբան չեն. կը հակառակին միմեանց։ 730. (զոմն) Ջրի բերել։ — Համոզելով՝ պատշաճից օրենքն

յարգել տալւ

.

731. Իր ջրին տանիլ կուզէ։—Կուզէ ուրիշն ալ իրեն մանեցնել, իւր համոզման, լնԹացջին հետեցնել։

732. hous going fur hous offamily deg bur

733. (այս ինչ վաճառքը) Ջրին մեջ է։ ....Շատ աժան՝ դիւրագնի է։

734. (վասն մարդոյ) Ջրի վրայի ճինձող է։ — Փոփոխավիտ, Թեթնեավիտ է։

") կ՚ըսեն Թէ, կին մը առն կամ ուրիչին հետ վիճելով Թէ այս ինչ իրը մկրատով կը կտրուի, մինչդեռ զմելի կամ դանակով կը կտրուի եղեր, կը լամառի. ջուրը կը ձգես։ Կինն գետն 'ի վար գընալով հանդերձ, ձեռ քն վեր բարձրացնելով ցուցամատոմը և միջամատոմը մկրատը կը ձևացնէ, ըսել ուղելով Թէ «մկրատով կը կտրուի»։ 735. (այս ինչն այս ինչին) Ջրլաթեն է։ Հլու ծառայն, գործիքն է։

736. (այս ինչ տունի ևայլն) Ջրոտոնծ ջաղացը է դառցեր---Աղջատացեր, կահ կարասիջ կան համ ու հոտ չէ մ<u>ր</u>նացեր։

737. Սալը գոռալն **է է։** (մինչ պետք էր), սալ վրան (ոմանը «սալավարը» կ<sup>3</sup>ըսեն) կու գոռալ։ — Փոխանակ զրկեալն բողղջելու, զրկողն, պարտականն յանիրաւի կը բողղջէ։ (Ոմանը հարցմամբ կ<sup>3</sup>ըսեն՝ սալ վրան կու գոռայ)։

738. (վասն մարդոլ) Սաղլամ (աննենգ, ողջ) ոտաց աման չէ։—Վստահելի, աննենդ մարդ չէ։

739. (կու) Սատկի (այս ինչին խնամի ըլլալու, կամ զարդ մ՝ունենալու, փայլելու համար)։ —Փափաքելով կը փափաքի։ 740. Սատնին ակոնճը խուո-ըուծ (կապար)։ —(ինծի այդ հիւանդուննիւն ևայլն չէ պատահեր) Սատանան չի լսէ որ

ինծ ալ չի պատահիւ

741. Սատենն դիմաց խըպըլի՞կ կու խաղցնեւ — Քան զինքըն խորագետ մեկը խարե՞լ կը ջանայ։

742. Սատանին հար ճր<u>մի</u> է. Սատանայ է։—Խորագէտ, վարպետորդի է։

743. Սատնին շապիկ կու հագցնել --Վարպետորդի է։

744. Սատնօբ է. (այն միջոցին այս ինչը եկաւ, կամ՝ լոեց, կամ՝ բնտռուած իրն կամ դեղը չի դունուեցաւ ևայլն)։ --Գոդցես սատանայի աղդեցուԹեամբ (այս ինչը եկաւ ևայլն) և դործը չի յաջողեցաւ։

745. Սարերուն կաքաւը մարմանդը 4տպա (բանտ) ին աթեր։ Այն մարդը որ ամենուրեք կը շրջեր ապատօրեն՝ այոօր, այս ինչ պաշտօնին կամ`տան մեջ գրեԹե բանտարկեալ միճակ մ՝ունի։

746. Սենկ կամ սանկ ին (իրարու հետ) (երկու ցուցամատն օղակածև իրար անցունելով)։ --- Դրարու հետ յոլժ գրժտետլ կամ Թշնամացած են։ - 264 -

747. Սևաստ աժնտանգիւն է եղեր, (կամ՝ շուկան լաև ցորեն մ՝է եկեր)։ (Երբ 2-3 մարդ առանձինն կը խօսակցին և այլ ունն կը հարցնէ խօսակցունժեան նիւնգը, որ ըտել չուղուիր՝ այսպէս կ՝ըսեն)։ --Չեմը ուղեր մեր խօսակցունժեան։ Նիւնգը բեղի ըսել։

748. Սևը ճերմկին վրա ելլէ նը (այնուհետև....)։—նրբ անդամ մի ԹղԹի վրայ գրուի (այդ պարտըը, այնուհետև.... տես Թէ հրչափ պիտի նեղէ զպարտականն. զի պահանջն օրինաւորուԹիւն ստացած կ'ըլլայ)։

749. Սևը սարէն՝ ճերմակը Հորէն (կուգայ)։—Ամեն կողմէ առատօրէն կուգայ։

750. (ի՞նչ կը վայելէ) Սև իշուն ճերմակ դանկեր։--Այդ անձն, իրն, ևայլն անարժան է այդ դարդուց։

751. Սևուկ, դուն հուտա կեցի, երեժամ ճերմըկուկ ընտուիմ։—Նշանելիք աղջկան մը ծնողացն, կամ ապրանքի տիրոջն հետ խօսակցիլ, սակարկել, և, հաւանուեթիւնն ստանալէ յետոյ՝ առկախ Թողլով զայն, աւելի լաւն գտնելու յուսով այլոց դիմել։

752. Սև ուրբան է կոյեր։—(իրնէ) Տիսրադեմ է, (կամ պատահարար) տրտում է։

753. Սև չափուքժն (սև լաքժի մը մէջ) է ծրարեր (պահանջած դրամդ)։—Պահանջդ պատրաստած է, երբ որ ուղես՝ կ՝ստանաս (հեղնաբար)։

754. (այս ինչը) Սև օձը դարկած էր։— Յոյժ տխուր էր. (դժրաղդութեան մի հանդիպելով)։

755. Սև օձուն բերնէն (կամ՝ եղանը բերնէն) կու Ճչճէչ —Բարձրաձայն՝ ուժգին կը ճչէ (առ վշտին)։

756. (այս ինչ ընտանեաց մեջ) Սերը՝ սուր է, արո**ւնը՝** ջուրչ—Բնաւ սեր չկայ, այլ **մի**այն կռիւ և ատելութեիւն։

757. (այս գործը) Սըլիկին քնաց։ — Յետաձգեցաւ, անորոշ ժամանակով. Յունական կաղանդին քնաց։

÷

758. Upur upur 4' put, Upur (Uputor) sput ps -- Poupp կը ծամ ծրոն, ակնարկութերներ կրնե, բայց բացայայո կերund the swimps 759. Սիսէոր պաղբեն (սրտին) վրալ է։ --- (մեղադրանաց, ևայլն խօսքի չի դիմանար) Անհամբեր՝ կր պատասխանել 760. (իրարու հետ) Օիրն ու բիրն էին։ — Միշտ կազ ու 4mpc 4' put fits 761. Uppmp by youngs, your, uppmp bofog iwm by youupgi-Bajd acpublicut 762. Սիրտա փորս ինկաւ։ ----Ահաբեկեցայ։ 763. Սիրտ քերել: --- Երգիծարանել, մեկումը մը սիրտը **Նեպացնել քն**ասու կամ անյաջողուԹեան մր համար։ 764 Սոխն ու սխտորը տարի մի հարմնութ իւն ին արեր։ --- Այտ ինչ հարար գոնէ տարի մը հարսնութ իւն չըրաւ։ 765. Varm puter, powe for any - Luphwingh of four 'p formuly pales, fugnite gradus: 766. (wju fuse) Uner nugar neufr - 4p uhrach, uhrbih 5: 767. (hpp puh Lugit) Lug, top grung, tong to (Sudlan). **Ցեաց։ — (այս խօղջի**ն կամ իրողութեևան վրայ) Սկսաւ բարկա. **տալ, յա**նդիմանել։ 768. Վակ ան իշուն ուր գալած չունի։ --- (այդ խօսուած

անձն ամեն բարիք ունի, կարող է) Մենք ենք որ չունիմը և. տկար եմը։

769. Վայ Հ'եղուկը տուին։ \_\_Մեղադրեցին։

770. Վախդապետ, վեղարդ հովը տարաւ։.....Ես ալ խօշտուտ (դոհ) չէի։.....Բէ և այս ինչ գործը ետ քնաց, զոր դժբաղդու. Թիւն մի կը կարծեմը, նորա համար, բայց նա ուրախ է, զի արդեն գոհ չէր այդ գործեն։

771. Վարդ լընի, հոտը կուգայ։—Թէև կրԹուԹիւն, հարստուԹիւն ստացած է, բայց, ՝ի բնէ իւր ցեղն վատ կամ չար ըլլալուն, իւր բնոյԹն երբենն երևան կ՝ելնէ։ 772. Լար Թընես՝ մծրութ, վեր Թընես՝ պեխեր։—Որ կողմը դառնամ՝ դժուտրուԹիւն մը կայ։

773. (վաճառը մի ևայլն) Վար ծեծել։--Արժէըն կոտրել, աննպասը խօգրեր ընելով։

774. Վարպետիս ըսածը։—Վարպետս, մեծս ի՞նչ որ ըսաւ՝ Նոյնն առանդ կրկնելու՝ իրրև ըսած՝ կ'լնդունիմ՝ և կը հետևիմ նմաւ

775. Վեր ինկաւ (այս ինչ առևտուրէն, գործէն)։—1. Շահեցաւ, յառաջդիմեց։ 2. Վերինկայ քնես։—Ընդոստ ղար Թեցայ։

776. (հանդերձը, սենեակն...աղտէն կամ ցեխէն) Վեր չելլեր։ — Շատ աղտոտ կամ ցեխոտ է։

777. (այս ինչ ապրանքը) Վեր վերուցին։ — Ցաճախորդը Եռանդեամը գնեցին։

778. Վեր ցատկածը եփած է (կ'ըսէ)։ — Գործին վրայ աւելի հոգ չիտանիր, ինչպես ալ ըլլայ, գու կ'ըլլայ։

779. (այս ինչ անձն) Վզվզուկը առաւ. (ոմակը շկժկժուկը առաւ. կ'ըսեն)։ — Երբ լսեց, իմացաւ՝ կասկածն ու երկիւղն պաշարեց զիկըն. (և սկտաւ աշխուժիւ և շրջահայեցութեամբ գործել)։

780. Liqu mil 4njukgur: -- fuqan jugages

781. Վե՞գ կու ձգեի։ — Քու գալուդ կսպասեի անձկանօք (Թող չի գայիր)։

782. Վէդը արծթժած է։ — Բարերաղդ է։

783. Վրայ զարնել։—(Նուագածուն՝ խաղալու եղանակն) Արագել. (այցելուն) Յաճախել ևայլն։

784. Վրայէն անցիր (գործին, ևայլն)։ - Շատ թարակ Որ մտածեր. մտահոգ մի՛ լինիր. եղածով գոհ եղիր։

785. (այս ինչն այս ինչին) Վրայ կուդայ։ — (երբ զոնն կ<sup>ո</sup>ամբաստանեն, կը մեղադրեն) Կը պաշտպանէ (զայն) բանիւ։ 786. Վրայ նայել, (վրայ տի նայիմ, վրայ նայէ, ևայլն)։ ----(դործին ընթացքն և պարադայքն) Դիտելով ըստ այնմ կամ բատ պատշանի վարուիլ։

787. (այս ինչ մարդուն) Վրան մաղ կու խաղայ։ --Գոգցես բնադրոնամբ կիմանայ իրմե դաղտնիը պահուածն։

788. (ժառանդուԹեան, ստացուածըին, ապրանըի մը, եայլն) Վրան նստաշւ....Բոլորը դրաշեց յանիրաշի կամ աժան դնով։

789. (այդ գործը կամ պահանջդ) Վրաս գրէ։—(այդ գործ կամ պահանջդ) Ցուսալի չէ։

790. (այս ինչն երբ եկաւ, կամ ուտելիքն տուին, ևայլն) Վրաս լոս (լոյս) իջաւ։---Յոյժ ուրախացայ (զի նեղուԹեան Քջ էի, կամ անձկանգը կ<sup>ս</sup>սպասէի)։

791 Sulp quên ling. lun quên fû gebes -- Vuşêr Subafum zen sump, n. ejter erfen le de land le

792. (այս ինչն այս ինչին) Տակը Ջուր կապեց։—Խաբեց,

794. Տահա (տակաւին) մուխ կ՝ելլէ. (ԹղԹի խաղին մէջ ընկճեալ կարծուած խաղացողի մը նկատմամբ)։—Տակաւին խաղալու ԹուղԹ, զօրուԹիւն (դրամ, ևայլն) ունի։

795. (այս ինչն) Տանը հաշերը կոշ ջարդեւ—Օտարին բան մը չի կրնար ընել՝ իշր ընտանիքը կը նեղեւ

796. (եթե այդ պես ընեմ, վաճառեմ, ծախսեմ) Ցանը Ծամբան չեմ կրնար գաներ։\_\_Կլ մնասուիմ, կը կործանին։

797. Տաշուքով կու քերուլտի։ — ՆիւԹապես տկար, ան-Հուկ վիճակի մեջ է։

798. Տաշարքեր։ — Ծնողաց վերջին ղաւակ։

799. Տաշտիկս ՝իլի, փորիկս անուԹի։—Մինչ դեռ տու-Նրո, սեղանս լի է, և այլը իմ հացն կ՝ուտեն, ես՝ տկարու-Թիւն կամ տրամուԹիւն մ՝ունենալով՝ չեմ կրնար ուտել։ 800. Տավայը (Թվրուկը) իմ շրլլին տի կախեն ու անոնը տի չայի (նուագեն)։ -- Պաշտօնը իմ անուան տ'րլլայ ու անոնը տի գործեն յանուն իմ՝ իրենց ուղածին պէս։

801. (այս ինչ տունն, իրն ևայլն) Տատէն (հօրվէն) 'ի վեր վկրտութեւն չէ տեսեր։---(այն տունն, ընտանկըն որ զաւակ մ՝ունեցաւ, վկրտեցին) Հօրն ծնունդէն 'ի վեր զաւակի ծնունդ տեսած չէր։ Հանդերձ կարելէն 'ի վեր լուացուած չէր։ Պղնձեայ ամանն առաջին կլայեկէն 'իվեր, կլայեկուած չէր։

802. (այս ինչ վաճառքը կամ աշխատուԹիւնը) Տատի Հոգու Հւ-Չրի՞ կը կարծես։

803. Տատին (Հօրը), կամ, մեծ տատին դինը (ծախած վաճառին) մէջն է դրեր։ Մատ սուղ կր պահանջէ։

804. (վասն իրի) Տատ ու մար տանիմ։—.»նչ հարկ կամ շահ կայ երկար ատեն պահելու. տալու վաճառելու է։

805. Տարուս մարդը սուղ է եկեր. չէնը (ապա Թէ ոչ) ըու որ տեղդ է սիրելի։—Այն անձն գորժե կը խօսիվը աղնիւ կամ գործունեայ չէ, բայց ի՞նչ ընիվը. այսպիսի անձի մը գիճակեր, կարօտ եմը քնացեր։

— 806. (այս ինչն այս ինչին պահանջին) Տաւկարդաց։ Նենդեալ հաշուով մը կամ այլ խօպքերով իրաւունքը չի տուաւ։

807. Տաք հաց ու փոխ հաց է։ \*)---(Նա իւր) Քաղաքավարական պարտաւորուԹիւնը չի կատարեց, ես ալ նման օրի-Նակ պարագաչի մը մէջ փոխարէնը պիտի հանեմ։

808. (վատ, մոլի ևայլն մեռեալի մը նկատմամբ) Տեղը դուր ու բարձը կակուղ։—Լաւ է որ մեռած է այնպիսի մէկը։ 809. Տեսը ուս է, կամ տես ու ուսէ կամ ուսեա։—(ար

\*) Կանալը սովորարար, հաց ըրած (եփել տուած) օրերնին, 1-2 ական հաց, իւղ հալած օրն իւղ, նունակս պանիր, նալն դը րացեաց կուտան «հոտը կուգալ» ըսելով. (ոմանը հեռաւոր Թաղեր աղգականաց ևս կ'ուղարկեն)։ Փոխարէն անոնը ալ իրենց «հաց»ին նալն օրն կը դրկեն նուն ըանակութեամը. -Տեստաւորն, հարմն, ևայլն) Իւր գործին վերաբերհալ և իւր չգիտցածն տեսնելով կրնայ սովրիլ. կամ՝ տեսնելով կրնայ սովբուիլ։

810. (այս ինչին մեկ մի) Տ՝ հրըւամ՝ (տ՝ երևամ)։ — (այս ինչին) Կարոզութերննս, ուժս, ճարտարութեննս տի հասկրցնեմ։ 811. Տզտղ է. (նոր ասացուած)։ — Այն գործն, խոստումն անհիմն, սխալ է եղեր։

812. (այն հին ատենները) Տէվեծ (ուղտը) խո-ա-Տա (արմաւ) կու Թրքեր։-ԱռատուԹիւն և աժնուԹիւն կայր։

813. Տեմեծ (ուղտը) «ի-դ» (ի դիւր) հանել։ — Ապրուստը լաւ և ապահով վիճակի մը հասցնել։

814. (այս ինչ ի՞րն կամ անձն) Տի խաղցնինը. (Նոր աոացուած).—(այս ինչ անձին կամ իրին) Վրա՞յ տի խօսինը միշտ. կամ ա՞յն մտիկ պիտի ընեմը։

815. Տիտաս (աղջիկդ) դուռ մի Թագաւորին տղուն (ի նսուԹիւն)՝ մի՛ տար դուռ մի Թագաւորին տղուն, տուր այս ինչ տղուն (երիտասարդին)։—Այս ինչ երիտասարդն ամե-Նալաւ փեսացուն է աղջկանդ համար։

816. Տիրոջվեն առաջ ախոռը կու մտնե. կամ մի մտներ։ --- Մեծեն, վարպետեն առաջ խօս քի կամ գործի կը խառնուի, կամ մի խառնուիր։

817. (այս ինչին այս ինչ գործը) Տիսմրի (տիսնարի) հարսնիք հղաւ։ — Ձգձգուեցաւ։

818. (այն քան դրավին, հարստու Թեան ևայլն) Տկեն մըտաւ, վրայեն ելաւ։ — (այնքան հարստու Թիւնը)Մսխեց, ըսպառեց։

819. (վասն կնոջ) Տոլման սիստորով կ'ուտուի։ — Այն կինն կամ աղջիկն որ տղեղ էր, պետը էր ճոխ օժիտ, հարստու Թիւն ունենայր։

820. Տոնծ (տանձ) էր նը, հասաւ. շողգամ էր նը, կարմրեցաւ։ — Բաւական է այլ ևս, պետը է վերջ տալ։

821. (մեզայ Աստուած) Տոնծին ալ կոթ ես դրեր։ ---(Shatu nd) Anch we Journ to hat n in wamplack fits of polar hish np dasy but 822. (այս տրուած դրամն կամ իրն այ) Տոնծ վրան է։ --- (այս տրուածն կամ ուղածն) Աւելորդ է (ղի իրաւունքն արդեն առած է)։ 823. (գնած կ այս ինչ իրին) Տուած ստակդ հետդ տարիր։ - Տուած դրամդ արժէ։ 824. (տունն սենեակն). Տուզ խապի է. (աղ-աման)։ ---Anpr, uby 4: 825. (այս ինչին) Տունը բերան կուգար։ (այս ինչ անձին) Տունը բազմութեամը լի էր։ 826. (Papaufi) Salup (4preshaufi) une ut 2. 3. 4 անգամ կու մտնե կելլել (Թ.-ին) Տունը (Կ.-ին) տնեն այս. **բան** անգամ` փոբր է։ 827. Տուն ու դուռ ելաւ գնաց։ — Տունն, սենեակներն Thus, insp bywe, wymmbgwe: 328. Տուր ձեռ.թ. (ծոնժվիմ։ \_\_ 8աջողունժեամը կատարե. ցիր պաշտօնդ. լաև խօսեցար, ևայլն (հեգնարար)։ 829. (վասն անձի) Ցաթեցլ-Եկաւ նա որոլ գայուստր stp nugnutp: 830. Ցանկին մասուրը իլնել։ — Անկարևոր մանրամասնու-Թեանց մտնել։ 831. Ցատկե ուր պոլդ (հասակդ) տեսնեմ։ — Չպիտի կրնատ և պիտի միսսուիս. ամօթապարտ պիտի ճնաս։ 832. 868 ա (դրամն կամ այս ինչ իրն)։ .... Վճարէ կամ unnedt: 833. Ցորենն աժներ է, կամ աժնութերեն տ'րյթայ։---Հաղուադէպ է այս։ — (Կըսուի՝ երբ Ժլատն առատաձեռն կրլյայ կամ միայնակհացն զուարճասեր)։ 834. (կերակուրի ջուրը, հանդերձի մը, իրի մը չափն) **♦ախած է։ – Չափէս աւելի եղ**ած է։

- 271 -

835. «Փառը հօրոր ըսեւ--Երկար տևեց այդ խօպըը, երգր հայլն, վերջացուր։

836. (ու մեջ) Փառջն ու պատիւը տալ։ — Կշտամբել խատիւ։

837. Փատեն երկու մարդ, (Թող դան ըսին)։—Ո՛վ և ինչպես մարդ կ՝ըլլան, Թող ըլլան, (Թող դան վկայեն դայց դիտեմ որ սուտ խօդը է)։

839. Գեշերը զիլ (տէֆի շրջանակի տափակ բոժոժն) կու չալէ, կամ, կու ծեծէ։—Դրարանցում մի ունի, արտօրնօր կերքժալ, կու գայ։

840. **Գեշը** (բղանցը) վրան կու ձղէ։ Այս ինչն կը պաշտպանեւ

841. Փեշս ջուրը չի դպաւ։ — (այս ինչ հարսանիքեն, առատունենն, նուերեն ևայլն) Բնաւ օգուտ մի չի տեսայ։ 842. (զոմն) Փեշ բաշել։ — Հրապուրել, համոզել զոմն իւր դատին, նպատակին չարելու։

843. (այս ինչին որդիքը ևայլն) Փետատի, կամ՝ \*ո-լգի (փզբրիկ բրիչ) կոն մի չեղան։ — Մարդ չեղան. Տնողացը և այլոց օգուտ վի չունեցան։

844. (իրիև Թէ ընկղմեալ՝) Գի-«Լի-լի» (ծոպ) Ճո՛Թը կը երևայ։ — Մեծամեծ, ծանր քնաս կրեցի. մեծ պարտուց ներբև ընկած եմ։

845. Փոթ եկաւ։ Գործը արդելքի մը հանդիպեցաւ։

846. (այս ինչ երկու կամ աւելի անձինքն) Փոխ կու բեթու ըտինչ — Ցիրաւի կամ յանիրաւի զիրեար կը պաշտպանին. իրարու խօսըն կը հաստատեն։

847. Փաֆը (սովորաբար, դմակաւոր ոչխարի մորթես) փաթետելու եղաւ։ —Շատ յոգնեցաւ կամ գանակոծեցին \*)։

\*) Նրա մեկը ծառեն կամ տանրքեն իլնի և մարմինը ձմլուի, Գրաբանան՝ ուխար մի մորնելով՝ մորնելը կը փանեն մերկ, իրդ մի օր.

· - . '

i

848. (այս ինչն) Փողուլը (մուհակր) կու նետի Թր գնա րեր։ ..... (երբ կարևոր գործ մի չի կայ կամ լրացած է՝ գոգցես ղծառայն կամ դհարսն հանգիստ չթեոդյոլ համար) Անպետ և աւելորդ աշխատութիւններ բնել կուտալ։ 849. Onpara dpwg lar bwghd, jwgu larqwg - Awgghwg har jaget 850. Փորս կ'եփի։ — Մտատանջութժեան մեջ եմ։ 851. Փորփշտել (զոք)։ --- Մէկէ մի ճարտարու Թեամբ լուր, տեղեկութիւն հարցնել։ 852. Քաղաքը ծախեր էլ-Արրեալ՝ խելքը գլուխը չէլ 853. Քաղցրոցիր: --- Վճարէ, կամ տուժէ (այս ինչ դրամրն ևայլն (այն ալ) Տի բաղցրնայ ----(այն ալ) Ծախքեր տր րնե (ակամայ)։ 854. Put h human by byby, Sail of parties 855. Քառսուն դրան 80 տեկետեկ (բիր) կու գարնէ։--Շատ տուն կը մտնէ կ՝ելլէ. շատ տեղեկութ իւն ունի։ 856. Aununch (hud 50, 100, 1000) whowd pub (dpտիկ չ՝արաւ, ևայլն)։ — Շատ անդամ ըսի (մտիկ չ'ըրաւ)։ 857. Քառսուն չինդերե (երկանժեայ շրջանակ) ցատկած է։ Ծատ գործերու մէջ մտած ելած, ամեն նենգութեանց և դեպքերու փորձառու եղած վարպետորդի մ ել 858. (այս ինչ մարդեն ստակն ևայլն) Քարեն կու քակի։ -- Դժուարաւ կ'առնուի։ 859. Քարը կաւառը (առուակի բերան) դրի, կամ դրաւ։ -- Խօսքը տեղը դրի. կծու խօսքով փոկարինեցի ինձ եղած պարսաւանքը։ 860. (այս ինչ կերպաս ևայլն) Քարին հետ ծեծկուե.

860. (այս ինչ կերպաս ևայլն) Գարին հետ ծեծկուեցաւ։ —Շատ տոկուն էր, երկար ատեն անիննայ գործածուեցաւ, բայց դիմացաւ։

861. Քար նետել։—1. կնկան մի աննուղղակի, անթարոյական առաջարկ մ՝ընել. 2. մեկու մը համար մեղադրական ակնարկ մի ընել։ - 273 -

862. Քար Նետեդիր թենւդ թույցաւ։ -- Ինչու այդքա-Նավ գտե չես րլյար. ինչ աշխատութերւն կամ ծախը ըրիր։ 4p պաpumet, 1p quarte bilition Jon gapt if will be will for. End Gunchts 864. Plag (your apriper) you Suyf: -- (ugu fir pr np pndn & un widd) Wesse ww freques uwst. Huwon hus t: 865. Քե 4: - ( ըեմանչեր՝ ջու Թակդ) ըաշե։ - Գնա աստի. րաւական է։ 866. (այն անեն այ) ՔԷՏ (նուազ) քաղցը մրուր չէ։--(այն այ) Բաւական գուարճախօս, խորագետ ևայլն է։ 867. (երբ սենեակն, մոքն լուսաւոր չրլլալ և դիտողու-Թիւն րլյալ, <sup>1</sup>ի պատասխան) Քերկե՞ն տի բանենք։--Այս լոյ-•ր դաւական է։ 868. Ptoppt-th (4munepytu) Lubu, ummutu\*) 4'b114: --869. Perulik (emulia) (emulia): -- Utyt de ununtun hoe կամ այլ միջոցաւ ունեցածը կորզել։ 870. Քինթեր բանես, հոգին կնյլէ։ -- Շատ նիհար և տըyour 5: 871. Philop huyun: Unsh gorne Chiup sh thung, wil ևս չկրնար բռնանալ կամ վաճառքին գնոյն վրայ պնդել։ 872. Քինթ կախեց։ ---Տրովեցաւ։ 873. Քինթեր Պоգուտէն \*\*) Уուր կու խոնդ .-- Հպարտաguð 5:

\*) Հաւանականարար Ակնալ կամուրջէն իրը 1000—1500 մեթեր վարը եղած պառման կակնարկուր, Ո'-ր զրկես, կներքծալ կուգալ, դժուարութեանց առջև չը ընկնիր։

\*\*) Ակնալ հանդիպակաց լեռան դադաթեր տեղ մ'է, ութ չ Նարակ Հուր կը բղիսէ։ - 274 -

874. Քինթեն երեսէն չեն կրյեր։ — Բարերարին, բարեկամին դէմ ապերախտ ըլլալու չէ. այլ այնպես ընելու է որ չի զղջայ, ուրիշ անգամ մ՝ալ բարիք ընէ։

875. (վարպետն այս ինչ շէնքը, ձեռակերտը այնպես լա. շինած էր որ) ՔինԹ ու բերան էր դրեր։ — Նուրբ Ճաշակա., վայելչակերտ, անԹերի էր։

876. Քին Թու բերան քսել (ուտելիք, վաճառք ևայլն)։ —Կերակուրը աւելնալով ասոր անոր տալ. վաճառքին Ակ մասը աժան գնով, Ակ մասը ապառիկ տալով սպառել։

877. Քինլժս է բուսեր (այս ինչն)։ — Իկքն կամ տունն մօտիկս կամ տանս առջևն է։

878. Քի՛չ, ուր կ՝երթաս.—Շատին բով։—Գոգցես հարստութիւնը հարուստին կը դիվեւ

879. Քիրալ (վարձք) ես տուեր մինչև տանը դուռը տի հեծնես (Ջորին)։—Թէև վարձք տուած ես, բայց ինչու ցյետին վայրկեան աշխատցնես, մինչդեռ քու պետքդ լրացած է։

880 (գինինն, օղիին) Քիւփին (Թակոյկին) տակը կու պառկիւ---Ցոյժ գինեմոլ է։

881. (այս ինչն այս ինչին) ՔնԹեն ինկեր է։— Ճիշդ՝ անոր կը նմանի։

882. (այս ինչ դրամը, իրը ևայլն՝ որ իրաւունքս է, ես անոր) Քնթեն կու քաշիմ։—(այս ինչ իրը) Անկէց կարող եմ՝ հ և իցէ կերպիւ առնուլ։

883. ՔՆԹՀՆ ու բերՆՀՆ բերել։—Որևիցէ զուարձուԹիւՆ կամ ուրախուԹիւՆ խամպարել, չԹոզուլ որ վայելեն։

884. Քնթենն ու բերանին վրայ կու քաշեւ-Դեպ առաջ Ծռելով՝ սայթայբելու պես կը քաշեւ

885. Քն Թին չի դներ. կամ, ըն Թին չի դրաւ (նու էրնևայլն)։ – Չի հաւնիր, չի հաւնեցաւ։

886. (վասն ծառոց) Քողով հարս եղեր է։---Առատ պտղով p ղարդարեալ է։

Ŗ

887. (wie fis fumpe) Anu fi --- Uituphuh lumg ywi quoանը մ՝ է, որ քնասն զգալով հանդերձ դիւրաւ ետ չի կեցուիր անո**րմէ։** 888. (այս ինչ տունն) Քոս մատի մր դեղ չի կայ։ \_Ո'չ ղջ կայ օդեսական, աշխատակից, ամեն հոդ մէկ անձի վրայ կր ծանրանայ։ 889. Քրդուն տունը շիջիը (տօսախ) խաշուխ (դգալ) կու բնառես։---Այդ տունը բաղաբավարուԹիւն, կարգ, կանոն կու phanetrus 890. Քրաինքը ժողվեւ (յաջողու Թեներ քաջալերուած և, բայց) Քիչ մր համբերե, խորհե և ապա գործեւ 891. Քրանցնել (զոմն)։ --- (մէկէ մլ) Կէս մը յորդորանօք և կես մր ստիպողաբար ստակ առնուլ։ 892. Roz wyship ywd fubufop wng fubut, ghut fop dwլը 4+ կ անե (կախորժի)։ --- (այս տղան, աղջիկը, ևայլն) Խեղրցած բաներ կ՝րնեւ 893. Օխտր (եօքժն) ոնդ (լժերևս՝ անդ) ոնցաւ (անցաւ)։ - Դոնկ 1 ր դուռ շատ տուն պտտեցաւ: 894. 086, (qnifi):---8wurphiwub 895. (կերպասի մը նկատմամբ) Օձը լեզուն զարնէ, կու պատուի։ .....Ծասո Նու.թբ է։ 896. 02 (զօՀս) պատին ծուծուկէն դուրս կուհանէ (իւթ ասպրերումն)։ — Համողիչ խօսբրեր կը խօսի։ 897. (շատ բարակ հացի նկատմամբ) Օձու լեզու է։---(ցորենի աղութժենեն հացերն) Փոբր, նոտը են։ 898. 0211 վրայ Թ.քնէ, օձը կու սատկի։ — Շատ դաժան, houn Surpor 5: 899. Օմուն վրայ կորն (կարիճն) այ կճեց (խայթերց)։ -Հիւանդութեան, դժբաղդութեան վրայնոր մ՝ալ աւելցաւ 900. 0ղիկ օղիկ, ևղայչ.....Գաղաքավարական պարտաւոլու Թեանց ակամայ Թերու Թեան (զօր. հիւրին արժանի լաւ կերակուր ևայլը չի գտնուելուն) կամ Նմանօրինակ պատճղ Rue Wirgne fors

— 276 <del>—</del>

901. 0-ըն՝ ի օղը գալ, պարանն ալ օղը, (տեսնիմը ինչպես կ՝ըլլալ ևալլն)։—Թող ալդ ժամանակը գալ, կարգը ատոր գալ լալնժամ պետը եղածն կ'ընեմը կամ կը խօսիմը։

902. 0ր մի չէ ըսեր Թը կուշտ հկուր ու անութի գնա։ ---Երբեբ զիս հրաւիրած՝ պատուած չէ։

903. Օրն ելլէ, հաշերը բունէն չելլէ (աովորաբար, փորձանը մի անցունելէն չետոյ, իբրև զուարճաբանտութնեան կ'ըսուի)։—Այս վտանգն, փորձանքն ալ անցուցինը, փառը Աստուծոլ։

904. (այս հանդերձը) Օրն ու օսըրաքը (օր հասարակ) չի դնաց։—Շուտ մաշեցաւ, կտրտեցաւ։

Հետևեալ ասացուածներն ալ Թէ Կալերէնի և Թէ տածկերէնի մէջ կը դործածուին, որոնց տաճկերէնը դնել դանց ըրի։ 905․ Ակոնճը ծակ է։—Ուշիմ, արԹուն է, շուտ կը հաս-

មួយល្អះ

906. Ամենը կամ երկութը մեկ ճամրայ կ'ելլէ։ — Հաշիւր մեկ է (գօր. ուտելեաց և այլ գննլի վաճառքին մեկը սուղ՝ բայց դիմացկուն է. միւսը աժան՝ բայց շուտ կը կտրտի)։

907. Աչքը կու կտրէ։ -- Կը համարձակի. հակառակորդը յաղթելու վստահ է։

908. Աչբր մանել (ումեր)։ — Հաճոյ, սիրելի լինել։ 909. Աչբր չի տանիր։ — Կր նախանձի։

910. Աչ. քս չի բուներ։ 1. Չեմ՝ հաւնիր (այս սպրանքին, գործին, ևայլն) 2. Չեմ համարձակիր, չեմ՝ կրնար։

911. Unwe pulby: -- 1. Uppop ubquubulod defubgue. 2. Bunus afilby, quequegue (uneq desage des):

912. (վասն իրի) Ա'ո, գլոխդ ծեծէ։ —Խընդրելով պահանջելով ձանձրացուցիր. առ ահա։

913. Բանը բանէն անցաւ։ 914. Բարակ կու բաշէ, կամ՝ բարակ բաշող է։ — Ման- 277 ---

րաղնին հաշիւ կ'ընդ. շատ մտածող, կծծի է։

.

÷ . .

915. Բերանս չի բռներ (այս ինչ լուրը խօսել)։ — 1. (լու. որ վշտառին է) Չեմ ուղեր ըսել. 2. (սակարկունեան ևայլն) Առաջարկո ծանր է։

916. Բերնի՞ն, կամ, բերնի՞դ է ինկեր։ — Ի՞նչ համարձակութերւն ունի (այս ինչ բանն ընելու)։

917. Գլխես մուխ կելել -- Վշտերով լի եմ, ծանրածանր գրագումներ ունիմ։

918. (առաջարկը ևայլն) Գլխուս վրայ։

920. Դուռը բաց է։ — Եկող գնացող հիւրը շատ է. ձրի կը հիւրընկալէ. մեծատուն է։

021. (առևտրոլ և այլ պարագայից մեջ) Եղեն չ'ուտուիր։ —Շատ աղեկ է. բաւական և շատ իսկ է. ատկեց աւելին Հ'բլլար։

922. Երես կուտայ (այս ինչին)։ — Համարձակութժիւն կու տայ, կը շոյէ։

923. Ինծի չի գար (այս ինչ գործը)։ — Ինծի չի յա. Ջողիր։

924. Խորող խաղցնող։ -- Խարերալ, պճնասեր։

925. Իօպըը ոտը ինկաւ։ — Խնդիրը հասարակութենան ին-

կաւ. ավեն մարդ սկսաւ խառնուիլ, կարծիք յայտնել։

926. Կրնակ ունի։ — Զօրաւոր պաշտպան ունի։

927. Հացին եղ բսեց։ — Հակառակորդին ՝ի Նպաստ խօտեցաւ կամ գործեց չանգետու

928. Հոտը ուտողին քինթը կ՝իլնի։...Շատ վատ ու վատթար է։

929. 26m.p (Lan.p) for mug: - bujuununn f. puruhut f: 930. 26m.pp pung f: Unumukhati f:

931. Ձեռքը ծանր է։ 1. պարտքն դժուարաւ կը վը-

;. 2. այն անձէն եթե դրամ փափ առ. րուիր, անյաջող ձեռը ունի։ 932. Ձեռը բաշել (մէկու մի, գործի մը բարւղթումէն,

ւանդի մը ապաքինումեն)։--Ցուսահատիլ։

933. Ճակատդ խառըշլա**մի**շ կ՝անիմ (թեղով կը չափեմ), ۶է ընես ևայլն։ –Աֆերին կ՝ըսեմ՝ եթե ընես կամ՝ գաարձակիս ընել։

934. Ճակատս բաց է։ .... Պարզերես եմ, վստահ եմ քմ գործոյս և վարուցս ուղղու[ժեան։

935. Մէկ մի ես, մէկ մի դուն, մէկ մ՝ ալ Սևաստցի Լ**եյլել** ող լես։ — (խօսիլն դիւրին է, բայց չես կրնար) Ո՛չ դուն և ոչ այլ դբւ

936. Մեռելի հող ին ցաներ վրայնիս։ — (Աղգային կամ հանրային իրաւանց պաշտպանութեան համար) Թմրած, անղղայ եմը։

937. Մրջիւնին վրայ չի կոխեր։ — Մեկու մի չի միստեր։ 938. Շրյլի ծոել (ումեջ)։ — Աղաչեյ, խնդրել։

939. (դրամ) Ուտել։—Կաշառը առնուլ։ Ուտող է։— Կաշառակուրծ է։

940. 2/ ջաշեր։ — 1. Կը նախանձի. 2. Ցոխորտանքը չի տանիր. 3. Հիւանդին ևայլն նեղութիւնը չի կրեր, կրել չուղեր։

941. Պարնին վրայ ալուր (ընել)։ — Անզօր դարման մը ընել դիտմամը. կամը խօսը մը, իրողութերւն մի ծածկել։

942. Ջուրը ջաղացքը տարեր է, շախշախը կու բնտուէ։ —Այս ինչ հաստատութիւն կամ տունն կործաներ կամ բարեկարդութիւն հիմնովին խանդարեր է, դեռ անոր մէկ մասնա ւոր անկանոնութեան վրայ կր խօսի։

943. Ջուր տալ (գնուած, սակարկուած իրի մը)։—Պաս ճառ մը բռնելով, որոշեալ գնէն մաս մը զեղչել։ ՝՝^ (ժամը ... ին) Ջրերը։—(ժամ ... ին) Միջոցնել 945. (այս խօղջին ևայլն) Վաղած ջրերը կու կայնին։ --Այլ ևս ըսելիջ մը, առարկելի կետ մը չի կայ (զի պարտջը ամբողջապես կը հատուցանե, կամ ճշմարտութիւնը, իրաւուկջը այս է):

Յաւելումը վերջապէս հետեւեալ տեսակ մ՝ասացուածներն եւ յանգաւոր խօսքերն։

946. Udwar, 4wd, adbar bilt brfdws (wsuytu 4'rut): --Uspang wdwar (wsuytu 4'rut):

947. Արունեն արցունը կու Թափեւ—Վշտալից կ<sup>1</sup>արտասուեւ

948. Դատաստան կայ ու պատասխան կայ։ — Մարդիկ պետք է խորհին հանդերձելոյն վրայ, ուր դատաստան, վարձք և պատիժ կայ։

949. Lunque fit (tri), mbunque shi:--Uju qtupp (qnp yumlegh), sti mbuwo, uji nipti juwo bi:

950. (խնջոյք կամ հարսանիք եկողի մը) Կերածդ ու խմածդ քեղի, ասածդ ու լսածդ խսսե։

951. Կոտիկ հառը իր պոչը տեսնե նը՝ դուն ալ (այս չնորհն, տեղը, անձը ևայլն) տի տեսնես։ — Բնառ չպիտի տեսնես, ակնկայութերնդ գուր է։

952. Հարդէն (հաղարէն) մեկ (չի գար, չի գտնուիր, և այլն)։ — Հաղիւ երբենն (կու գայ ևայլն)։

953: Մածուն է ու Թան չէ, ավեն մարդու բան չէ։---Ավեն մարդ չկրնար (համբերել, լնել ևայլն)։

954. Մեղուի սըո. (գաղտնիք) է (անոնց գործը կամայս ինչ արուեստը ևայլն)։ — Գաղտնիք մ՝ է.

655. Պատառը ոսկի մը լընդի, չեմ՝ ուտեր։— Որչափ ալ աուղ կամ՝ համադամ ըլլայ՝ չեմ՝ ուտեր (զի ախորժակ չունիմ՝)։ 956. Պարղ ու պղինծ է (երկինչըն)։— Պարզ, անամպ է։

957. Սաթատ (դեղ՝ նագույն) կովու պես կանժը կու տայ ու ոտըովը կու զարնե կու Թափեւ—Նաւ ծառայուն-իւն կամ գործ մը կ՚ընե, և բիչ մը վերջը չարուն-իւն մ՚ալ ընելով՝ ըրած բարիբը մոռցնել կու տայ, կ՚ոչնչացունեւ

958. Տարին տաս ւերկու ամիս։ — Շարունակ։

959. Քարին վրայ կոխեր, քարը կու կոյեր (կը կոտոուեր, կը կոտրեր)։ – Շատ առողջ և ուժեղ էր։

960. Օձ ձգես վրան, (չըներ, չընդունիր, ևայլն)։---Որչափ ալ ստիպես (չ`ըներ, չընդունիր, ևայլն)։

961. Օմու պէս կու գերըկնայ։ — Շատ կը պաղատի։ \*) 962. Օրս տարի է եղեր։ — Օրերը շատ երկար կը Թուին. համբերուԹիւն չունիմ մինչև ժամանակը գայ։

Հաւանական է Թէ կան տակաւին բաղմաԹիւ ասացուածներ, սակայն վերոյ գրուածներն առ այժմ բաւական կը համարիմը։ Կային մի քանի տասնեակ ասացուածը ևս, բայց անպարկեշտ խօսքեր լինելուն՝ ղանց որի։

•) Կը կարծեն թեէ երբ օձն սպանել կ'ուզուի, և նա ՇոլՇ մի-Հոցին լեզուն դուրս կը հանէ, նչան մ'է եղեր, անոր աղաչանաց b պաղատածացն որպէս զի իրեն կենացը խնալեն։

.

## 

į .

## ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌ

1. Արտասանութերւն, աղաւաղեալ և զարտուղի բառեր. 2. Արկոտեան բարբառ. 3. Մնճերէն. 4. Մանկական բարբառ. 5. Խոսակցութերւն. Օրինակ մի (20 տարի առաջ)։

1. Արտասանութիւն եւայլն։

Ցայտնի է ամենուն, Թէ բաց ՝ի գրաբար լեզուէն, և գրական աշխարհարարէն՝ կայ և ժողովրդական լեզուն որ գաառաց մէջ կը տարթերին ՝ի միմեանց։ Ասոնց մէջ Վասպուրականի, Տուրուբերանի և ՉեյԹունի լեզուներն այլ գաւառացւոց բնաւին անհասկանալի են գրեԹէ։ Թէ յիշեալ և Թէ փուս գաւառաց ժողովրդական լեզուին մէջ, բաց ՝իգրաբարէն աղաւաղեալ բազմաԹիւ բառերէ, լստ տեղւոյն, Թուրջական, Գրդական, ևայլն ևայլն բառեր ալ խառնուած են. այնպես որ ամեն գաւառ՝ լեզուաւ և արտասանուԹեամր ջիչ շատ

Սկաիմը արդ Անեցւոց հնչման տարբերութիւնըն ևայլն գրել. որը են։

1. Անայ Հայը՝ ընդհանրապես \*) «ուծն «իւ»ի պես կը հնչեն. զօր. փոխանակ «տուն» ըսելու, «տիւն» կ<sup>3</sup>ըսեն. Նըմանապես, կուտ, ջուր, ուր, դուրս, ուԹ, ունիս, սնտուկ, մանուկ, կատու, աշուն, երկո բ, ևայլն բառերը կը հնչեն

•) Ո**ւահայտ և հրկար ատեն** Պոլիս կենալով արտասանու-Դրե**ն չուսիս է մշ**մծինան առներությունների հայտան հոդովուրդնվերի հայտան հոդովուրդնվերի հայտան հոդովուրդնվերի հայտա կիւտ, ջիւր, մանիւկ, իւնիս, ևայլն բոլոր հոլովմանց ու խո-Նարհմանց մէջ։

2. Բառին կամ վանկին մէջտեղը գտնուած «ո» գիրն «Հօօի պէս կը հնչեն, գօր. «սոխ»ն «սէօխ» կը հնչեն. նոյնպէս և դուռն, դող, գլուխ, ասոր, անոր, չորս, Նիկողոս և նմանօրինակ բառերը կը հնչեն դէօս, դէօղ, գլէօխ, ասէօր, անէօր, չէօրս, Նիկողէօս ևայլն։ Աստ կարևոր կը համարիմ լեզուագիտաց կամ բերականաց նկատողութեան ներկայել սա տարբերութիւն, թե վերոչ գրեալ «տիւն, ջիւր, ևայլն» բառերուն «Ն-»-երն ոչ թե բոլորովին «իւ» կը հնչուին, այլ «ու»ի և «իւ»ի մէջտեղն հնչիւն մ<sup>7</sup>է. զօր. «Բւթ» = «հշթն ոչ թե հական դերանուն «իւթին պէս, այլ «իւթին և «ութ» ին մէջտեղն հնչիւն մ<sup>7</sup>է, զոր Ակնեցին կրնաչ հնչել. նմանապէս «սոխ, ասոր, ևայլն բառերուն «ո» գրերն ոչ բոլորովին «օջի, և ոչ «էօ»ի, այլ ասոնց մէջտեղն հայն մոչն մունի».

3. Կան շատ մի բառեր որոց «աջին տեղ «ոջ կը գործածեն. \*\*) գօր. անձրև, անլի, հիշանդ, ճանճ, ականջ, մանչ, պայծառ, անդի, անցնիլ, կանդնիլ (կայնիլ), հանգչիլ, մանր, ծանր, ևայլն բառերն կը հնչեն որզև (ոզրև), օլլի, հիշոնդ, ճոնճ, ակոնճ, մոնչ, պոծառ, ոդդի, ոսնիլ, կոյնիլ, հրգչիլ, մոյր, ծոյր, ևայլն. նաև անդի տունն—ոդդի կամ ոնդի տիշնն—անդինոնը—ոնդինենը կամ ոդդինեցը, ևայլն բոլոր հոլովմանց ու խոնարհմանց մեջ։ Շատերն, «որ» ըաելու կամ հնչելու տեղ «ուր» կը հնչեն, ինչպես որ յընվծացս գրոյս և մանաշանդ յերգարանին չայտնի է։

4. Ասդիս, ադդիդ, անդին ըսելու տեղ, կ'ըսեն. Սըդդին, տըդդին, նըդդին։ Սորա, դորա, նորա, ևայլն դերաննուանց տեղ կ'ըսեն. սրվոր, տըվոր, նըվոր, ևայլն։ Երբեմն ալ

\*\*) Ընդհակառակն, կան մի ջանի բառևր՝ որոց «ո»ին տեղ «ա» կը գործածեն. զօր. Թանիր – Թոնիր, – Խանալրհ – խոնարհ (սովորաբար կանալը կը գործածեն) մս խիր – մոխիր.

4

-այսթ, աստ, անդ ըսելու տեղ, դաս, դան կ՛ըսեն. զօր. դաս եկու...Հոս, ասդին եկու. դան գնա...անդին գնա, ևայլն։ Աստ, անդ, ևայլն մակրայներուն տեղ կը գործածեն «հուսա, Կուտա, հունա». զօր. հուտայէն հուսա...ատկեց հոս, և աստի, այտի, անտի (ասկեց, ատկեց, անկեց), կ՝ըսեն սրվկից, որվկից, Նրվկից. զօր. սրվկից հուսա (եկաւ), Նրվկից հուտա (գնաց), ևայլն։

5. Ունանը՝ սովորաբար վերի Թաղեցիներէն՝ հոս, հոդ, հոն (աստ, անդ, այդր, անդր) ըսելու տեղ, ֆես, ֆետ, Դեն կ՚ըսեն։ Փոխանակ խաղող կամ խաւող ըսելու, խաւեղ՝ և փոխանակ «հոդ» ըսելու, «ֆեղ»․ փոխան «ով է»ի, «վո՞վէ» կամ վեվէ» կ՚ըսեն։ Ունանը՝ «տինչև»ի կամ «տինչև որ»ի իմասառվ կամ փոխարէն «հիժվի» կամ «տիժվի» կը դործածեն, և ոնանը ալ «այն ալ» ըսելու տեղ «այն ար» կ՚ըսեն։

6. Կան Ակ քանի բառեր որոց յոքնակիներուն ձևերն ապրեր են. որ ը են։

24. Ա. «Նաջ» կամ «տաջ» վերջաւտրուԹեամբ։ Գեղունաջ — Գեւջ, Գեռունաջ — Դեւջ. Չատունաջ — Դեւջ. Չատունաջ — Դեւտ. Ծաղկունաջ — Ծաղկունջ. Ծեծունաջ — Ծաղկունջ. Մեծունաջ — Ծաղկունջ. Սրբունաջ — Ծաղկունջ. Ադբրտաջ — Ծեծջ. Ադբրտաջ — Եմբջ. Ադբրտաջ — Եմբջ. Ադբրտաջ — Եմբջ. Ադբրտաջ — Ներջ. Կարպետաջ — Կարպետներ. Ցալուըտաջ — Կորջ. (Գըսուի նաև վրանտաջը — վրայի կողմերը. վըրանտուցմեն — վրայի կողմերեն, ևայլն)։

, 4

ունց որստիայներ ու անտիտըն ի,նլրաը «պրջուրաձյ ug, Chamerends, Eucluster, parties, basilies, ւ «որգուրունունունունունունում՝ որ հրջածեամբ եղածներուն գործիականքն կ Ըևսն աղբրագ, -Emopy Luss \_ proche. որնելորնեւ (ջասրնուր, Pranche 40000 պատելուն տըկտիզը ծառելուն, և. ৸ৣ৶৾৸৸ৼ - Turnet. \_\_\_ ատիրնը, <sub>โบก</sub>-իՔ Schult աքը ատիրեն), Uning Uba. L Spark, 4 Cllain gaming, 4 clowing, 2 burng, տնուոց», բացառականքն կ՝ԸԱպն «Առուոցսե, կԸԹարցսե, շնուոց. anchan Cope Ludy, Spurt & and Emery Lucy Manager A. Changer and the for the for the Changer and the for the for the Changer and the for the Changer an «Հեռուի», ոտուի», Այս յրբնակիներն երբենն իբրև եզակի, այ արհաթարի «եր» կամ «սեր» մասսիկսերն առնլով չոքսակը կ է 7. ամ լծորդու (Ժեամբ և զած բայերուն սահման, ներ bq. U. Lze. U. L n. qtuppernis des frumba eps 42 9 ածեն. 1°. Ռենի, որնու, որնչ. որնչն. որնչեն. որ Տեսնեսն, տեսնես, տեսնեն, տեսնել, հետություն, 8. als 50 work 2 wigh string 4, by word dwing port **τ**<sup>-τυ</sup> -<sup>3</sup><sup>2</sup>, τ<sup>-τ</sup> צור שור, דישור, לשור, ושצויי ١

#### 2. Արկոտեան ըարըառ.

Դ Տնումն տեսակ մը բառեր կային որ իբրև Արկոտեան բարբառ կը գործածուկին, բայց այժմ մեծաւ մասամբ հանբածանօԹ լինելնուն, Թէ պատեհ առԹիւ և Թէ սովորական խտակցութեան ժամանակ ևս իբրև ասացուած կը գործածուն, որը ենչ

- 1. Արծան բունող Սեղանաւոր։
- 2. Բիր բռնող Ոստիկան, զինուոր։
- 3. Գորպիմ ..... Հրացան։
- 4. Դաղլը է (խաղի Թրղ Չափահաս և ծերացած՝ բայց Թոյն արքայն)։ անժիտ։
- 5. Եկուր երթժանը անել—Գողանալ. (պետքե գիտնալ թե սոյն և յետագայ 7 տեղ «գողանալ» ըսուածը ոչ թե գիշերայն տուն մոնել, ևայլն, այլ իբրև բարեկամ, ծառայ, հանդիսական, ևայլն. տան կամ կանութի սեջ գտնուելով բան մը գողնալը պետք է հասկցուի)։
- 6. Թոցնել --- Գողնալ. (այս ևս նախնենաց իմաստով հասկանալի է)։
- 7. Ծակ--Բանտ։
- 8. Tour lugar -- Parpy:
- 9. Ծրաել (ԹղԹի մի վրայ) Բառ մի, գիր մի գրել. հրամայել։
- 10 Ծփել--- Օղի ըմպել. (կը նշանակե նաև տղուն երևսին ևայլն դարնել)։
- 11. Կածակ (թերևս կայծակ)--Ոսկի, լիրայ։
- 12. Կարդացող է—Ո' ևիցէ կրօնի պաշտօնեալ, դիտուն է։
- 13. \u00e467.61-4676261:
- 14. Կ<u>ըլտըրիկ</u>—Լիրայ։
- 16. 42 56 \_ 016 \_ 100 4 1:

- 286 -

17. 4num 5 5-4nzon 5: 18. Կուտ, կորկոտ, կամ՝ կուտ ու կորկոտ--- Գրամ 19. Կրակոտը-Անգլիան, Անգլիացին։ 20. կրծոն-կաշառը։ 21. Համբարձաւ անկլ-Գողանալ։ 22. Strep to bolin to full the ריין קרטשר לתריאנירי): 23 2nly numng\_\_Bajur, Malur 24. **Հե**նճ — Իւղ (կարագ)։ 25. Ճերմակ լաթթը - Գաղղիացին։ 26. Մաղը ծակ է -- Զգուշացի՞ր. հայերէն կը հասկնայ։ 27. Մատնի-կուսակալ։ 28. Uty Jung (p)-Uju on ubplus t le gonde l'or get 2 hon his 29. Մոլրը (մանր) գիրը-Մի-Քիկ» (կրօնական-օրէնսպետ պաշտօնեայն)։ (Երը մեկու մի համար ըսուի թե «Մոյրը գիրէ, կր հասկցուի Թէ օրէնագէտ, հաշուագէտ է)։ 30. Շուք անել, շուքը դնել (իր մը)-Գողանալ, պահել, ծածկել մեկե մր։ 31. Շփել (իր մը)--Գողանալ։ 32. Ceb\_\_\_Acorbe (Comptilie equiplesh formunand): 33. Ոլըրել — Գողանալ։ 34. N' [ 4wp q.w [--- 2ncb hd` pub ] : 35. Ոսպը բարուտ է—Հայերէն կը հասկնայ։ 36. חבינבר (גהינבר) לנר-ח'ז, זרוושר. ל'רישר: 37. 24 pn\_ubp - Ubpdb, syw i with 38. Չորս ոտքը-Ջորին, ձին։ 39. and Sond (Ile power of the luoupp angh: 40. Պլարցնել (զիր ինչ) -- Գողանալ։ 41. Պիղատոս — Դատաւորյ։

- 287 -

